Դուք ինձ սիրահարեցնել եք ուզում, բայց լսեցեք, Մակար Ալեքսեևիչ, չէ՞ որ դուք դրանով քանդվում եք։ Հանած բանն է, ինչ է, այնքան եք ծախսել ինձ վրա, սարսափելի շատ փող։ Ա՛խ, այդ ինչ սովորություն է, որ դուք սիրում եք վատնելը ցնորքի շղթան։ Ինձ հարկավոր չեն այդ բոլորը միանգամայն ավելորդ են։ Ձեռս գիտեմ և հավատացած եմ, որ ինձ սիրում եք. հավատացնում եմ, ավելորդ է, որ այդ հիշեցնում եք ինձ նվիրներդ, իսկ ինձ համար ծանր է անդնից նվիրներ ընդունելը, վորովհետև գիտեմ, քի՛ն ինչ են նստում ձեզ վրա։ Մի անգամ է առաջին տասը եմ, բավական է, լամում եք։ Ընդդրում եմ, աղաչում եմ ձեզ։ Դուք խնդրում եք, Մակար Ալեքսեևիչ, որ ուղարկեմ ձեզ հուշատետրիս շարունակությունը. ուզում եք, որ վերջացնեմ։ Ձեռս չդիտեմ, քի՛ն ինչպես եր գրվել այն եր, ինչ որ գրել եմ։ Բայց ձեռ ուժ չեմ ունենա այժմ խոսելու իմ

անցյալը մասին. չես մոռանալ անգամ չեմ ուզում այդ մասին. չես ամրապնդում եմ այդ հիշողությունները։ Ինչ խոսել իմ խնդիր մայրիկի մասին, վոր իր դժբախտ գավակին ավար թողից այդ հրեշների ձեռքին, այդ ամենից ավելի ծանր և ինձ համար։ Սիրտս ապնագամ և լինում, վոր հիշում եմ այդ։ Այս բոլորը գնում էր այնքան թարմ և, վոչ միայն հանգստանալ, այլև խելքս գնո գլուխս չեմ ժողովել, քանի մի ամրուց ավելի չի անցել։ Բայց դուք գիտեք ամեն բան։

Ես ձեզ ասացի թե Աննա Յոզորոշան լինելը և ասում այժմ, նա ինձ և մնազորում, թե չեղոխտանում եմ չեզել, և վոչ մի մնազորանք չի ընդունում, վոր ինքը գործակից և չեզել պարոն Բլիովի հետ։ Նա կանչում և ինձ իր մոտ. ասում և, թե չես մուրացկանուհյուն եմ անում, թե չես վատ ճանապարհով եմ գնացել։ Ասում և, վոր չինի վերադառնամ իր մոտ, ինքը հանձն և առնում գործը դրսեկ պարոն Բլիովի հետ և ասիլել նրան, վոր իր մնդքը քամի իմ առջև Ասում և, թե Բլիովը ուզում և ոչխար տալ ինձ։ Ասելած նրանից հետո Այսանդ ել շատ լավ եմ զգում ինձ ձեզ հետ, իմ բարի Ջենդրային մոտ, վորն իր անձնվիրուհյամբ հիշեցնում և ինձ իմ հանգուցյալ գայակին։ Դուք թեև հետավոր ազգական եք ինձ, բայց պաշտպանում եք ինձ ձեր անունով։ Ինչ նրանից չեմ ուզում ճանաչել, կմոռանամ նրանց, չնայած կարոդանամ ել լինչ ևն ուզում լինելիս։ Ջենդրան ասում և, թե այդ բոլորը քամբասանք և, թե նրանք հանելիսո կկորչենն ինձ վերջապես։ Ես ասելած։

Վ. Դ.

Հունիսի 21.

Աղաչելյակդ իմ, Ջանիկս։

Ուզում եմ գրել, բայց չեմ իմանում, լինչից սկսեմ։ Այս լինչ տարօրինակ բան և, վոր մենք ձեզ հետ ապրում ենք այսպես։ Ասելս այն և, վոր չես վոչ մի ժամանակ որևես չեմ անցկացրել այսպիսի ուրախության մեջ։ Կարծես ասելած որևևնել, տուն ու ընտանիք և ավել լինել։ Ջավախս, իմ սիրունիկ, այդ լինչ ևը ասում չորս շապկի մասին, վոր չես ուզարկել եմ ձեզ։ Ըմ վոր հարկավոր ելին ձեզ, — Ջենդրայից իմացա։ Ջանիկս, ձեզ գոհացում տալը մի առանձին չնչդանկություն և ինձ համար։ այդ արդեն իմ հաճույքն և, ինդրում եմ ինձ հանգիստ թողնք, լինչ մի դինգ և մի հակաճառեք։ Ճերբեք այսպիսի բան չի պատահել

ինձ, ջանիկս։ Ահա յես այժմ մարդամեջ եմ ընկնում։ Նախ՝ ապրում եմ յերկուտակ, վորովհետև դուք ել նույնպես շատ մոտիկ եք ապրում, ուրախությունս պատճառելով ինձ և միխիթարությունս. ինչ յերկրորդը՝ այսոր ինձ քնելի հրավիրեց մի կնոջ, իմ հարևան Ռատոպչայինը, այն նույն չինովնիկը, վորի մոտ հնդինակային յերեկոներ են լինում։ Այսոր ժողով կա. ուրախանությունն պիտի կարդանք։ Այ, քե այժմ վոնց ենք ապրում մենք, ջանիկս,— այս Դեմն, ձեռք բարձով։ Ես այս բոլորը գրեցի հենց այնպես, առանց վորևե նկատելի նպատակի, այլ միայն նրա համար, վոր ծանոթացնեմ ձեզ իմ բարեբախտ մասին։ Դուք հրամայել եք, հոդյակս Թերևսդայի միջոցով ասելու, վոր ձեզ գուռնավոր մնոտաքս և հարկավոր հարբանկարելու, կգնեմ ջանիկս, կգնեմ, մնոտաքս ել կգնեմ։ Հենց վաղնեցի հաճույք կունենամ գոհացում տալու ձեզ կատարելապես։ Ծերն ել գիտեմ՝ վորտեղ գնեմ։ Ինչ ինձա այժմ ծառա եմ

Ձեր անկեղծ բարեկամ

Մակար Դևուշկին

Հունիս 22.

Վաղորդյան ութ ժամին, Վարվառա Ալեքսեևնա։

Մանուշյանում եմ ձեզ, իմ հարազատ, վոր մեր բնակարանում ամենալուրջ մի անցք պատահեց. խնկական-խնկական խղճահարությանը արժանին։ Այսոր առավոտյան հինգերորդ ժամին մնում Գարշկովի փոքրիկը։ Միայն քե չգիտեմ ինչից, ակարլատինա կեր, քե ինչ, ասում են պիտու։ Այդ Գարշկովներին ի՞նչ, ջանիկս, ինչքան աղքատ են։ Ել ինչ անկարգություն։ Զարմանալի ել չե. ամբողջ ընտանիքն ապրում է մի սենյակում, միայն պատվարներով բաժանված՝ վայելչությանը համար։ Ընդանց մոտ արդեն դպագրին ել է գրված. հասարակ, բայց բավական լավ դպագրի, պատրաստի չեն առնի. ոտքն ատա ատրճկան կը, հույսեր կը տալիս, ատում են։ Մարդ խղճահարվում է նրանց նայելիս, Վարինկա։ Մայրը լաց չի լինում, բայց այնքան տխուր է խնդում։ Ընդանց համար գուցե և քնքշություն է, վոր մենից ազատվել են, իսկ նրանց մոտ գարձյալ յերկուսն են պատել, մեկը ծծի՝, մյուսը՝ մի փոքրիկ աղջիկ, այսպես վեց տարեկանից մի քիչ մեծ։ Ինչ մի հաճելի բան է, իսկապես, վոր տեսնում ես, յերեխաք տանջվում է, այն ել հարազատ պավակը ու վոչինչ չուներս, վոր ոգնես։ Հայրը նստած է հին, յուղոտած ֆրակով, ջարդ-

ված աքոռի վրա։ Արտասուքները կաթում են դուցե և վոչ վըշ-
ից, այլ հենց այնպես, ըստ սովորականին, աչքերն արտասվա-
կալում են աչքացավից։ Այնքան տաղտկալի մարդ եւ Միշա
կարմրատակում է, վոր խոսում ես հետը, շփոթվում է ու չի
իմանում՝ ինչ պատասխանի։ Փոքրիկ ազիկը կանգնած է դազա-
զին կոխնած ու այնպես սխուր է, մտածկոտ խղճուկը։ Իսկ չես,
չանիկս, Վարինկա, չեմ սիրում, վոր յերեխան մտածոտյան
մեջ է ընկնում. նայելն անախորժ է։ Փալասներից շինած ինչ-վոր
ախկնիկ է ընկած նրա մոտ հատակի վրա, չէ խաղում, մատիկը
դրել է շրթներին, կանգնած է իր համար, չի շարժվում։ Տանտի-
րուհին կանչելս ոչինց նրան, վնըցրեց, բայց չկերավ։ Տխուր
բան է, Վարինկա, չէ։

Մակար Դեվուշկին

Հունիս 25.

Ամենասիրելի բարեկամ Մակար Ալեքսեևիչ։ Ձեր գրքույկը
հետ եմ ուղարկում։ Շատ անպետք գրքույկ է, իսկի ձեռք առնել
չի կարելի։ Վերտեղից եք վերցրել, դեռ այդ քանդագին գանձ։
Հանաքը դենը կենա, մի քիչ ձեզ դուր են գալիս այդպիսի գրքույկ-
ները, Մակար Ալեքսեևիչ։ Աստացնել նյութ ինձ այս որնըս վորևե
կարդալու բան դառնալ։ Ձեռ եկ կուզարկեմ ձեզ, յերեք ուզում եք։
Իսկ այժմ ցտեսություն։ Համառացեք ժամանակ չունեմ ավելի
գրելու։

Վ. Դ.

Հունիս 26.

Սիրելի Վարինկա։ Բանն եկ հենց այն է, վոր@ես իսկապես
չեմի կարդացել այդ գրքույկը։ Ճիշտ է, կարդացել եմի քիչ,
տեսնում զավշակ բան է, միայն ծիծաղելու համար է գրված, ասե
դուցե և իսկապես ըվարճալի բան է, դուցե քիչ դուր գա Վարին-
կին. վնըցրի ու ղրկեցի ձեզ։

Ա՛յ Ռաստոպչյանը խոստացել է ինձ իսկական գրականական
վորևե բան տալ կարդալու, և ահա դուք եկ գրքույկներ կուղար-
նաք, չանիկս։ Ռաստոպչյանը հասկացող հետ յեկած մարդ է, ինքն
եկ է գրում, ճշտի, ինչպես և գրում։ Այնպիսի ճարպիկ գրիչ ունի
և անհատնում վոճ, այսինքն ամեն մի խոսքի մեջ, ասես, ամենա-
դատարկ, ամենահասարակ, անպիտան խոսքի մեջ անգամ, վոր
քեկուզ յես եկ յերբեմն Ծալդոնին կամ Թերեզային ասեյի, ահա

այստեղ էլ նա վոճ ունի։ Ճնա նրա յերևույթներին էլ լմ լինում։ Մենք քուքուն ենք ծխում, իսկ նա կարդում է մեզ համար, հինգ ժամ կարդում, իսկ մենք շարունակ լսում ենք։ Ուտելու բան ես, և վոչ մի գրականություն։ Աքանչելի յես, ծաղիկներ, ուղղակի ծաղիկներ, ամեն մի կողից փունջ կապիր։ Նա այնպես քաղաքավարի յե, բարի, սիրալիր։ Ին, յես ինչ եմ նրա համեմատությամբ, ինչ։ Վոչինչ։ Նա անվանի մարդ է, իսկ յես ինչ եմ։ — Ուղղակի զույգիություն չունեմ, այնինչ պետք ինձ էլ բարեհաճ է։ Ճնա նրա համար մի քանի բաներ եմ արտագրում։ Բայց միայն դուք չկարծեք, Վարինկա, թե այստեղ վորևե արարք կա, թե ահա իսկապես այն պատճառով է նա դեպի ինձ բարեհաճ կեցվածք վերաբերվում, վոր յես արտագրում եմ։ Բամբասանքներին մի հավատաք, Ջանինկա, գարշելի բամբասանքներին մի հավատաք։ Վոչ, այդ յես ինքս իմ կամքով նրան հանձնք պատճառելու համար եմ անում, իսկ վոր նա դեպի ինձ բարեհաճ կեցվածք է վերաբերվում, այդ էլ ինձ հանձնք պատճառելու համար է անում։ Ճնա վարմունքի քաղաքավարությունը հասկանում եմ, Ջանինկա։ Նա բարի, շատ բարի մարդ է և։ աննման գրող։

Իսկ լավ է գրականությունը, Վարինկա, շատ լավ. այդ յես յերբեք չեմ մոռնա նրանցից։ Ծորը բան է Միլտոը պնդացնող, ուսուցող, և այդ ամենի մասին ուրիշ բան է գրված նրանց մոտ գրքի մեջ։ Շատ լավ է գրված։ Գրականությունը, դա պատկեր է, այսինքն, մի անսահման պատկեր և հայելի, կրքի արտահայտություն, այնպիսի նուրբ քննադատություն, իրատասկան ուսուցմունք և դոկումենտ։ Այս բոլորը յես նրանց մոտ գտել եմ։ Անկեղծ ասած ձեզ, Ջանինկա, հասած եմ նրանց մեջ, լսում. եմ (նրանց պես յես էլ չիրուկ եմ քաշում), ու հենց վոր սկսում են մրցել ու վիճել զանազան բաների մասին, այստեղ արդեն, Ջանինկա, յես ուղղակի վախ եմ լինում, այստեղ, Ջանինկա, յես էլ, դու էլ պարզապես վախ կլինենք։ Այստեղ յես ուղղակի ապուշի պես նստած եմ մնում, ինքս ինձնից ամաչում, այնպես վոր ամբողջ յերեկույթի ընթացքում աշխատում եմ, թե ինչպես անեմ վոր ընդհանուր խոսակցության մեջ գեթ մի կես խոսք էլ յես ասեմ ու թափեմ պես այդ կես խոսքն էլ չկա ու չկա։ Ու ցավում եմ, Վարինկա, ինքս ինձ վրա, վոր վոչ այս եմ, վոչ այն, առածի պես մեծացել եմ, խելքս չի հասնի։ Ին, ազատ ժամանակս ինչ եմ անում յես այժմ։ — Պատմեմ եմ հիմարի պես։ Այնինչ անհարկի քննելու տեղ կարելի յեր

հանձի բանով զբաղվել, սրինակ՝ նստել և գրել։ Ինձ էլ ոգուտ կտար, ուրիշի համար էլ լավ կլիներ։ Մեկ դուք տեսնեք, Ջանիկա, քե վորքան են վերցնում նրանք, քող նեղի նրանց աստված։ Այ, հենց Թատոզյանը, ինչքան է վերցնում։ Ի՞նչ բան է նրա համար մի թերթ գրելը։ Որ է պատահում, վոր հինգ թերթ էլ է գրում է ամեն մի թերթի համար, ասում է, յերեք հարյուր ռուբլի յեմ վերցնում։ Գոլն վորևե մի պատիկ անեկդոտ, կամ հետաքրքրական վորևե բան, հինգ հարյուր, տալիս ես տուր, թեկուզ ճաքիր՝ տուր, չես տալիս, մենք ուրիշ անգամ հազարով էլ գրպանն կկոխանք։ Վռնց է, Վարվառա Ալեքսանեևա՝ ես, ինչ ասեմ։ Նա վառանավորների մի պատիկ տետրակ ունի, վառանավորներն էլ պատիկ-պատիկ բաներ են,—յոթը հազար, Ջանիկա, յոթը հազար է ուզում, մեկ լավ մտածեցեք։ Այդ հո մի ամբողջ անշարժ կայք է, հիմնական տուն։ Ասում է, քե հինգ հազար տալիս են, չի վերցնում։ Ես համոզում, ասում եմ. վերցրեք հինգ հազարը և քրքնեք նրանց վրա, հինգ հազարը հո վոչ է, չե, ասում է, յոթը կտան սրինկաները։ Այնպիսի ճարպիկն է, հավատացեք։

Բանը վոր այստեղ հասավ, Ջանիկա, ուրեմն քող այդպես լինի, չես կարտաքրեմ Իտալական կրեմերից մի տեղ։ Այս նրա հնդկանկուբյունն է, այսպես է անվանվում։ Ահա կարդացեք, վարինկա, և ինքներդ դատեցեք։

«... Վագիմիրը ցնցվեց, և կրքերը կատաղորեն խլխլացին նրա մեջ, և սրյունը յեռաց...

«—Գոմառնի,— ազաղակեց նա,—գոմառնի։ Գիտեք դուք արդյոք՝ վորքան ստրատիլի յե այս կիրքը, վորքան անասնական է այս խելագարությունը։ Վոչ, իմ ցնորքներն ինձ չեյին խաբում։ Ես սիրում եմ, սիրում եմ ցնծագին, կատաղի, խելագար։ Ո՛ս ամուսնու ամբողջ արյունը չի կարող վոդոզել իմ հոգու կատաղի, խլխլացող հրդեհները։ Ընչին արգելքները չեն զսպարենի ամեն ինչ պայթեցնող զոհասին այն հուրը, վոր ակոսում է իմ հոգնած, տանջված կուրծքը։ Ո՛, Զինաիդա, Զինաիդա։

«—Վագիմիր...—շշնջաց կոմառնին ինքն իրեն կորցրած, գլուխը խոնարհելով նրա ուսին...

«—Զինաիդա,—ազաղակեց ցնծագին Սմելսկին։

«—Նրա կրծքից դուրս քաշավ հոգվոց։ Հրդեհը բորբոքվեց կարմիր բոցերով սիրո սեղանի վրա և ակոսեց զոհասեղան տանջվածների կուրծքը։

— Վլադիմիր... — շշնջում եր հիացումով կոմսուհին։ Երա կուրծքն ուռչում եր, այտերը կարմրում, աչքերը վառվում էին...

— Նոր, առնական պատկեր կատարված եր . . . . . .

. . . . . .

Հետո ժամից հետո ծեր կոմսը մտավ իր կնոջ ննջարանը։

— Ի՞նչ կասեք, հոգյակս, հրամայեմ, որ Քանդագլին հյուրի համար սամովար գցեն, — ասաց նա շոյելով կնոջ այտը։

Դե հիմա, սրանից հետո հարցնեմ ձեզ, Ջանիկա, ինչպես եք գտնում Ճիշտ ե, մի քիչ բաց և գրած, սրտնում խոսք չկա, բայց լավ եւ Ինչ որ լավ ե, լավ եւ Բայց ահա, Թուլլ ասիք չես մի կտոր էլ արտագրեմ Ճերմակ և Ջուլեյկա վիպակից։ Ճերմակայնք, Ջանիկա, որ կոզակ Ճերմակը, Սիբիրի վայրագ և անարկու նվաճողը, սիրահարված և Ջուլեյկայի, Սիբիրի հուշում Քաղաքորի աղջիկ վրա, որին գերի չի վերցրել։ Անցքն ուղղակի Իվան Գրոզնու ժամանակներից ե, ինչպես տեսնում եք։ Ահա Ճերմակի և Ջուլեյկայի խոսակցությունը.

— Դու ինձ սիրում ես, Ջուլեյկա — Ո՞, կրկնիր, կրկնիր...

— Ճես սիրում եմ քեզ, Ճերմակ, — շշնջաց Ջուլեյկան։

— Ճերկինք և յերկիր, շնորհակալ եմ ձեզնից. չես յերդանիկ եմ.... դուք տվիք ինձ ամեն բան, ամեն բան, որին պատանի հասակիցս ձգտում եր իմ հուզուճապիից հոգին։ Ուրեմն, ահա քեզ ուր եյիր տանում, իմ աստղ ուղեցույց, ահա քեզ ինչու դու ընկիր ինձ այստեղ, Գարեն Գոտու հետևը։ Ճես ցույց կտամ ամբողջ աշխարհին իմ Ջուլեյկային, և մարդիկ, կատաղած հրեշները, չեն համարձակվի մեզ պղծել ինձ Ո՞, յերեք նրանց հասկանալի չեն սրա քնքուշ հոգուսյա ծածուկ տանջանքները, յերեք նրանք ընդունակ են տեսնելու մի ամբողջ պոեմ իմ Ջուլեյկայի մի հատիկ արցունքի մեջ։ Ո՞, Թուլլ ասուր ինձ համբուրներով սրբեմ այդ արցունքը, Թուլլ ասիք խամեմ այդ յերկնային արցունքը, իմ չնաշխարհիկ արարած։

— Ճերմակ, — ասաց Ջուլեյկան, — աշխարհը չար և, մարդիկ անարդար։ Նրանք կհալածեն մեզ, նրանք կդատապարտեն մեզ, իմ սիրելի Ճերմակ։ Ինչ պիտի անի խեղճ կույսը, որ ընծացել և Սիբիրի հայրենի ձյուներին մեջ, իր հոր յուրտում, ձեր ցուրտ, սառցային, անհոգի, ինքնասեր աշխարհում։ Մարդիկ չեն հասկանա ինձ, իմ ցանկալի, իմ սիրեցյալ։

— Այն ժամանակ կազակի Թուրը կբարձրանա նրանց գլխին և կշառաչի, — գոռաց Ճերմակը, վայրենի կնոջով խաղացնելով աչքերը։

Հիմա տեսնենք, Վարինկա, քե ինչ և անում Ցերմակը, երբ իմանում է, որ իր Ջուլիկան արախողխող և յողած Կույր-Ծերանի Կուշումը, ոտովելով պիշերվա ժ՚Քուքյունից, Ցերմակի բացակայությանը ժամանակ ծածուկ մտնում է նրա վրանը և մորթում իր ապլկան, կամենալով մահացու հարված հասցնել Ցերմակին, որ պրկել էր նրան գահիտանից և քաշել։

«— Սիրում եմ յերկաթը գրնգացնել քարի վրա, — գոչեց Ցերմակը վայրենի կատաղությանը մեջ, իր պողպատյա քուրը սրելով չամանյան քարի վրա։ — Ինձ հարկավոր է նրանց արյունը, արյունը նրանց պետք է սրոցել, սրոցել, սրոցել։

Ցետ սրանից հետո Ցերմակն այլևս չկարողանալով ապրել իր Ջուլիկայից հետո, իրեն գցում է Իրտիշ գետը, և դրանով ամեն բան վերջանում է։

Իսկ, որինակ, այս փոքրիկ կտորը, որ գրված է նկարագրական կատակի ձևով՝ խնդալիս ծիծաղեցնելու համար։

«Ճանաչում եք դուք Իվան Պրոկոֆևիչ Ծևլատապուշին։ Այ հենց նա, որ կծել էր Պրոկոֆիչ Իվանովիչի վոտը։ Իվան Պրոկոֆևիչը խիստ բնավորություն, բայց հազվագյուտ առաքինություններն ունի մարդ։ Ընդհակառակը, Պրոկոֆիչ Իվանովիչը չափազանց սիրում է ան բողքը մեղրով։ Ահա, երբ որ նրա հետ դնում ծանոթ եր Պետրոս Անտոնովիչին... Իսկ դուք ճանաչում եք Պետրոս Անտոնովիչին։ Այ, հենց նա, որ շրջազգեստը միշտ շուռ տված է հագնում։

Այս հո մազալու բան է, Վարինկա, ուղղակի մազալու։ Մենք ծիծաղից քուլանում եյինք, որ նա կարդում եր այս։ Ինչ տեսակ մարդ է, ասեր իմ աստված։ Աանք, ջանիկս, քեև մի քիչ մազալու չե և արդեն չափազանց ծիծաղաշարժ, բայց անմեղ բան է, առանց ամենաչնչին ազատամտության և լիքեյալ մտքերի։ Պետք է նկատել, ջանիկս, որ Ռատապոյեվը գեղեցիկ վարքի տեր մարդ է, ուսած և գերազանց գրող, ուրիշ գրողների պես չե։

Հիմա ինչ եմ ասում, յերբեմն խնդքս փչում է... ասում եմ, ինչ կլինի խնկապես, որ յես էլ գրեմ վորևե բան. հա, ինչ կլինի այն ժամանակ։ Այ, որինակ, գցենք քե հանկարծ, առանց վորևե պատճառի լույս տեսավ մի գրքույկ — Բանաստեղծություններ Մակար Դեվուշկինի վերնագրով։ Չը՞, ինչ կասեիք այն ժամանակ, իմ հրեշտակիկ։ Ինչպես կնեղկայանար ձեզ այս բանը և ինչ կմտածեիք։ Իսկ իմ մասին կասեմ, ջանիկս, որ հենց որ գրքույկս լույս տեսներ, այն ժամանակ յես բոլորովին չեյի հա-

մարձակվի նախկու վրա յերևալ։ Ինչի նման կլինեի, վոր ամեն մինին ասեր, թե հրես գալիս ե պրակտոլեյան հեղինակ և բանաստեղծ Դևուշկինը, թե հրես, հենց սա յե ինքը Դևուշկինը։ Ին, այն ժամանակ ինչ պիտի անեի, որինակ, իմ կոշիկներով։ Ի միջի այլոց, նկատեմ ձեզ, ջանիկս, վոր կոշիկներս համարյա թե միշտ կարկատած են, տակերն էլ, ճիշտն ասեմ, յերբեմն հետ են ընում շատ անվայելուչ կերպով։ Ին, ինչ կլիներ այն ժամանակ, յերբ ամենքն իմանային, վոր ահա հեղինակով Դևուշկինի կոշիկները կարկատած են։ Հորևս մի կոմսուհի, ղբսուհի վոր իմանար, ինչ կասեր, հոգյակս։ Նա դուցե թե չնկատի յել. վորովհետև կոմսուհիները, ինչպես կարծում եմ յես, կոշիկներով չեն պրպտվում, այն էլ չինովնիկների կոշիկներով (վորովհետև չի վոր կոշիկներ էլ կան, կոշիկներ էլ), բայց թե նրան կպատմեին ամեն ինչ հենց իմ բարեկամները, կմատնացույց ինձ։ Ա՛յ, հենց Ռատազյանը առաջինը կլիներ, վոր կմատներ, նա կոմսուհի Վ.-ի մոտ գնում ե, ատում ե, վոր ամեն անգամ լինում ե նրա մոտ, և առանց այլևայլության ինձ ատում։ Ատում ե՝ այնպիսի մի հոգյակ ե, այնպիսի պրակտիկան տիկին ե։ Ատում ե՝ որդի և այդ Ռատազյանը։

Սակայն բավական ե այս մասին, չի՛ վոր այս բոլորը յես պրում եմ հենց այնպես, իմ հրեշտակիկ. պրում եմ կատակով, վոր ձեզ ծիծաղեցնեմ։ Մենք բարյավ, իմ ազատյակ։ Շատ բան խոստացել այսոր. բայց այդ իսկապես այն պատճառով, վոր այսոր յես ամենաուրախ հոգեկան տրամադրության մեջ եմ։ Այսոր ամենքս միասին ճաշեցինք Ռատազյանի մոտ, այնպիսի (չարաճճիներ են նրանք, ջանիկս) ոռմանների մեջ մտան, վոր... դե ինչ հարկ կա պրելու ձեզ այս մասին։ Բայց չլինեմ-չիմանամ վորևե կարծիք տանեք իմ մասին, Վարինկա։ Ձես այս բոլորն ասում եմ հենց այնպես։ Դրքուչկներ կուզարկեմ, անպատճառ կուզարկեմ... Այստեղ ձեռքից ձեռք ե անցնում Գոլ-դը-Գոկի մի գրվածքը, միայն թե Գոլ-դը-Գոկը ձեզ չի կարելի, ջանիկս... Վհչ, վհչ, ձեզ համար Գոլ-դը-Գոկը անպետք ե։ Նրա մասին ասում են, ջանիկս, վոր նա Պետերբուրգի բոլոր կրիտիկոսներին այնքիչ դայրուլքի և պատճառում։ Ուղարկում եմ ձեզ մի ֆունտ կոնֆետ. հատկապես ձեզ համար եմ առել։ Անուշ արեք, ջանիկս, և ամեն մի կոնֆետն անուշ անելիս հիշեցեք ինձ։ Միայն ասեք շաքարը մի ծամեք, այլ ծծեցեք միայն, թե չե ատամներդ կցավեն։ Իսկ

դուք գուցե ցուկասանը[1] էլ եք սիրում, գրեցեք։ Ես, Ձեզ բարով Ձեզ բարով։ Քրիստոսը ձեզ հետ, աղաչյակից իմ։ Իսկ կես Ձեզ առ միշտ

Ձեր ամենահավատարիմ բարեկամ

Մակար Դեվոտկին

Հունիս 27.

Վաղորմած տեր, Մակար Ալեքսեևիչ։

Ձեզրտան տասում եմ, վոր կեղծ կես ուզենամ, ապա մի քանի մարդիկ համաձայնում կկարծեցնեն ինձ, և կաշխատեն շատ լավ տեղ հարել ինձ համար մի տան մեջ դաստիարակչուհու պաշտոնով։ Ինչ եք կարծում, իմ բարեկամ, գնամ, թե վոչ։ Իհարկե, այդ ժամանակ կես բան չեմ լինի ձեզ համար, տեղն էլ կարծեմ ձեռնտու կես. բայց միտս կողմից մի տեսակ սիրտ չեմ անում անծանոթ տուն գնալու։ Նրանք ինչ-վոր կալվածատերեր են։ Վախենամ տեղեկանալ, հարց-փորձ անել, հետաքրքրվել, դե, ինչ պիտի տեմ այդ ժամանակ։ Բացի այդ, կես այնքան քաշվող, վայրենի կեղծ Սիրում եմ պինդ նստած ձեռ տեղերում անկյունում։ Մի տեսակ լավ ես զգում քեզ, ուր տեղը նս. թեև վայնաչարի կես տալիս, բայց և այնպես լավ է տյղին։ Բացի այդ, պետք է ուրիշ տեղ տանեն, այն էլ, տասված պիտի, ինչ տեսակ պաշտոն կլինի։ գուցե տեխնին, վոր չերեխաներին դայակուհյուն անեմ։ Ընենք էլ այնպիսի մարդիկ են, վոր կերկու տարում արդեն կերտղդ դաստիարակչուհին են փոխում։ Ուրեմն, և տեր տասծու, խոհեմություն ավեք ինձ, Մակար Ալեքսեևիչ, գնամ, թե վոչ — Այդ ինչ և, դուք չերբեք ինքներդ չեք մտնում ինձ մոտ, շատ տեսակ եք չերևում։ Համարյա թե միայն կիրակի որերին եք պատահում ժամանակ իրար տեսնում։ Ինչ և կեղել, վոր այդպես քաշվում եք։ Ճիշտ ինձ պես։ Իսկ չե՞ վոր կես ձեր համարյա հարատատ ապրանքն եմ։ Դուք ինձ չեք սիրում, Մակար Ալեքսեևիչ, իսկ կես տեղակ չերբեմն շատ տխուր եմ լինում։ Ձերբեմն, մանավանդ մերնշարին, նստած եմ լինում տեղ-տեղակ։ Ձեզրտան տեղ և գնացած լինում, գնում և ուր-վոր նստում եմ, մտածում-մտածում, հիշում եմ բոլոր անցած գնացածը, թե ուրախալին, թե տխուրը, ամեն ինչ անցնում և աչքիս առաջով, ամեն ինչ չերևում և կարծես մշուշի միջից։ Հայտնվում են ծանոթ դեմքեր, սկսում եմ համարյա թե արքաքի տեսնել, մայրիկիս ամենից հա-

[1] Շաքարով չոփած միրգ, վոր խառնում են նաև հացին։

ճաի եմ տեսնում... երազները են լինում։ Զգում եմ, որ առողջությունս խանգարված է. այնպես քույլ եմ, այ, հենց այսօր, անկողնից որ վեր եի կենում առավոտյան, գլուխս պտտվեցաքի այդ՝ այնպես վատ եմ հազում։ Ցնս զգում եմ, գիտեմ, որ շուտով կմեռնեմ։ Ո՞վ կքաղի ինձ։ Ով կլա դադաղիս հետեվից։ Ո՞վ կլցավի ինձ համար... և ահա ամիսվան պիտի լինեմ, գուցե, մեռնել ոտար տեղում, ոտարի տանը, ոտարի անկյունում։ Ասվածի իմ, ինչ տխուր է կյանքը, Մակար Ալեքսանիչ։ Իմ բարեկամ, ինչ ևք դուք ինձ զարհուրանք կանխեհաղորով կերակրում։ Ձեմ իմանում, ճշմարիտ, վիրտեղից եք այդքան վող պահում։ Ա՛խ, իմ բարեկամ, խնայեցեք փողերը, ի սեր աստծու, խնայեցեք։ — Ձեղորան ծախում և իմ գործած գործը. 60 ռուբլի աստիճանացիա չեն տալիս։ Այս շատ լավ է, կարծում եմ՝ ավելի քիչ կատա։ Ձեղորային երեք ռուբլի կտամ, ինձ համար էլ շոր կպնեմ, հասարակ, մի քիչ տաք շոր։ Ձեզ համար ժիլետ կկարեմ, ինքս կկարեմ և լավ կտոր կշոկեմ։

Ձեղորան ինձ համար մի գիրք է ճարել — Повести Белкина, որն ուզարկում եմ Ձեզ, երեք ուզում եք կարդալ։ Միայն խնդրում եմ՝ չկեղտոտեք և երկար չպահեք, ուրիշի գիրքն է. դա Պուշկինի հեղինակությունն է։ Սրանից երկու տարի առաջ այդ վիպակները չեն ե՛մ տպրիկա միասին մեկնեք կարդում. և այժմ այնպիսի սերտություն պատեց ինձ, որ նորից կարդացի։ Ցերեկ Ձեզ մոտ որևէ գրքեր կան, ուղարկեցեք ինձ, բայց միայն այն դեպքում, երեք Ռաստոպչինից չեք ստացել։ Նա անշուշտ իր հեղինակությունը կտա, երեք միայն որևէ բան և երբևիցե տպագրել է։ Այդ ինչպես է, որ Ձեզ այնքան դուք են գալիս նրա հեղինակությունները, Մակար Ալեքսանիչ, — այդ գաղտնիք բաները... — Դե՛հ, Ձեզ բարով։ Ինչքան չատախոսեցի։ Տխուր որ լինում եմ, ուզում եմ խոսել, հա խոսել, ինչ բանի մասին ուզում է լինի։ Ա՛ա դեղ է Ռևկուն քեհքհանում եմ, մանավանդ, երբ գրատարիում եմ սերտ։ Մնաք բարով, Ձեզ բարով, իմ բարեկամ։

Ձեր Վ. Դ.

Հունիս 28.

Ջանիկս, Վարվառա Ալեքսանեևա։

Բավական է գարդոտվեք։ Մերեն աճոթ չեք քաշում։ Բավական է, իմ հրեշտակիկ, այդ ինչ բաներ եք մտածում։ Դուք հիվանդ չեք, հոգյակս, ամենևին հիվանդ չեք։ Դուք ծաղկում եք,

հավատացնեք, ծաղկում եք. մի քիչ դժգույն եք, բայց և այնպես ծաղկում եք։ Ձեվ այդ ինչ յերազներ ու տեսիլներ են։ Ամոթ ե, աղաչեմ, բավական ե. քնեցեք այդ յերազների վրա, ուղղակի քնեցեք։ Ինչու՞ կես լավ եմ քնում։ Ինչու՞ ինձ քուն չի պատահում։ Մենք նայեցեք ինձ, ջանիկս։ Ապրում եմ ինձ համար, քնում եմ հանգիստ, առողջ եմ և այնքան դոչաղ, վոր մարդու քնելը կզա ինձ նայելիս։ Բավական ե, բավական, հոգյակս, ամոթ ե։ Ինչքի յինկեր։ Ձես հո ձեզ ճանաչում եմ, ջանիկս. հենց վոր մի բան մտավ գլուխներդ, իսկույն սկսում եք յերազել, ինչ-վոր բանի կարոտ քաշել։ Իմ խաթրու համար, հոգյակս, քողեք այդ բոլորը։ Ծառայությանն գնաք.—յերեքը վեր, վեր և վեր։ Այդ ինչքը եք մտածում, այդ քանի քամինները են փչում ձեր գլխին։ Այն ել ուրիշ տեղ պիտի տանեն։ Ձև վոր չե, ջանիկս, չեմ քողնի, բոլոր ուժերովս դիմվում եմ այդպիսի մտադրությանդեմ։ Իմ հին ջրակը կծախեմ, շապկանց մանը կգամ փողոցներում և չեմ քողնի ձեզ կարիքի մեջ։ Վոչ, վարինկա, վոչ, չես ձեզ ճանաչում եմ։ Դա խելառություն ե, պարզ խելառություն։ Իսկ ինչ վոր ճշմարիտ ե, Այդ այն ե, վոր ամեն բանում ժենակ Ձեզդորան ե մեզավոր, այդ հիմար կինը, ինչպես յերևում ե, հանել և ձեզ խելքից։ Բայց դուք, ջանիկս, մի հավատաք նրան։ Անշուշտ դուք դեռևս բոլորը չգիտեք... Նա հիմար կին ե, կռվարար, դատարկամիտ, իր հանգուցյալ մարդուն ել գերեզմանը դրեց։ Դամ քեզ, ով գիտես, նա վորևե բանով չարացրեց ե ձեզ։ Վոչ, վոչ, ջանիկս, վոչ մի դնպքում։ Հապա չես ինչ պիտի անեմ այն ժամանակ, ինչ պիտի լինի իմ դրությունը։ Վոչ, վարինկա, դուք այդ գլխներից հանեցեք։ Ինչներդ ե պակաս։ Մենք հոգի յենք ատչես ձեզ համար, դուք ել մեզ եք սիրում, դե ել ինչ, ապրեցեք ձեզ համար հանգիստ. կար արեք և կարդացեք. ասենք կար ել վոր չանեք, միևնույն ե, միայն քե մեզ հետ ապրեցեք։ Քե չե, ինքներդ դատեցեք, ինչի՞ նման կլինի այդ այն ժամանակ... Այ, չես ձեզ համար գրքույկներ կճարեմ, իսկ հետո դուցե նորից վորևե տեղ կգնանք զբոսանելու։ Միայն քե դուք, ջանիկս, քողեք այդ միտքը, խելքի յինկեք և դատարկ բաների հետևից մի ընկնեք։ Ձես ձեզ մոտ կգամ և շատ շուտով, միայն քե դուք իմ պարզ ու անկեղծ խոստովանությունն ընդունեցեք. լավ չե, հոգյակս, բոլորովին լավ չե։ Ձես, իհարկե ուսուցչական մարդ չեմ, ինքս ել գիտեմ, վոր ուսուցչական չեմ, իմ ուսումը գրոշանոց ե, խոսքս ել այդ մասին չե, իմ մասին չե, այլ այն մասին, վոր ինչ ուզում

նք ասնք, յես պիտի պաշտպանեմ Ռատազյանին նա բարեկամ
ե ինձ, ըրա համար ել պիտի պաշտպանեմ նրան։ նա լավ և գրում,
շատ, շատ և դարձյալ շատ լավ և գրում։ Համաձայն չեմ ձեզ
հետ և վոչ մի կերպ չեմ կարող համաձայնել։ Գրվածք և ծագկա-
փթթիք, հատված հատված, փիդուբներով, գանազան մաքեր կան,—
շատ լավ են։ Դուք գուցե առանց զգացումի յեք կարդացել, Վա-
րինկա, կամ քեֆներդ տեղը չի յեղել կարդալիս, չարացած եք
յեղել Ճեդրայի վրա, կամ վորևե բան և յեղել փչացած ձեզ մոտ։
Ձեզ, հապա մեկ կարդացեք զգացումով, ավելի լավ, յերբ վոր գոհ
եք և ուրախ և հոգեկան լավ տրամադրություն մեջ եք գտնվում,
այ, որինակ, յերբ վոր կանցնետ և լինում ձեր բերնում, այ, այդ
ժամանակ կարդացեք։ Ցնա չեմ վիճում (ձվ և այս բանի դեմ),
կան Ռատազյանից ել լավ գրողներ, կան և մինչև անգամ շատ
լավ գրողներ, բայց նրանք ել են լավ, Ռատազյանն ել և լավ։
Նրանք լավ են գրում, նա ել և գրում։ Նա իրեն համար առանձին,
հենց այնպես գրում և և շատ լավ և անում, վոր գրում ես։ Դեհ,
Ցնաս բարով, Ջանիկա, գրել այլևս չեմ կարող, պետք և շտապեմ,
գործ կա։ Ցլի ասում եմ, Ջանիկա, սիրունիկ պայծառիկա, հան-
գստացեք ու Թող ասվածն ձեզ հետ լինի, իսկ յես Ցնում եմ։

Ձեր հավատարիմ բարեկամ

Մակար Դեվոտկին

Հ. Գ. Շնորհակալ եմ գրքույկի համար, բայիկա, Գուշկինին ել
կկարդանք, իսկ այսոր յերեկոյան անպատճառ կմտնեմ ձեզ մոտ։

Հատված 1.

Իմ Թանգագին Մակար Ալեքսեևիչ։

Վհչ, իմ բարեկամ, վհչ, ձեզ հետ կյանքը կյանք չե ինձ
համար։ Մտածեցի և տեսա, վոր շատ վատ եմ անում հրաժար-
վելով այնպիսի ձեռնտու պաշտոնից։ Այնտեղ գոնե հացի հատ-
տատ մի կտոր կտեսնեմ. յես կաշխատեմ ձեռք բերել ստար
մարդկանց սերը, նույնիսկ կաշխատեմ փոխել բնավորությունս,
յերեք հարկավոր լինի։ Ի հարկե, ցավալի և ծանր կլինի ապրել
ոտարների շրջանում, ուրիշների վոգորմությունը հայցել, ծածկվել
և հարկադրել ինքս ինձ, բայց աստված կոգնի ինձ։ Հո չի կա-
րելի շարունակ խուսափել մարդկանցից։ Այդպիսի դեպքեր ար-
դեն պատահել են ինձ։ Հիշում եմ, յերբ գնա ես փոքր չնչած
ժամանակս պանսիոն եյի գնում։ Պատահում եր, ամբողջ կիրակի

որը տանը վազվզում էր, թռչկոտում, այնպես որ մայրիկս յերբեմն հշտամբում էր, բայց ոչինչ, սրտով, հոգով ուրախ էր, ղվարթ. բայց հենց որ յերեկոն սկսում էր մոտենալ, մահացու տխրությունն էր գալիս վրաս. պետք էր ժամը իններին պառկիլս գնայի, իսկ այնտեղ ամեն ինչ ոտար էր, սառը, խիստ, գաստիարակչուհիները յերկուշաբթի որերը խիստ բարկացկոտ էին լինում, սիրտս ճմլվում էր. լացս գալիս էր. քաշվում էի մի անկյուն և լաց լինում մեն-մենակ, արցունքներս ծածկում, որ չտանեն, թե ծուլ եմ, իսկ յես ամենևին նրա համար չէի լալիս, որ պետք է սովորիլի — բայց ինչ սովորեցի, և հետո պառնախոնից որ դուրս էի գալիս, այն ժամանակ էլ էի լաց լինում, յերբ որ հրաժեշտ էի տալիս ընկերուհիներիս. Ճես լավ էլ չեմ անում, որ ծանր բեռ եմ դառել ձեր յերկուսիդ էլ։ Այս միտքը մի տանջանք է ինձ համար։ Ճես ձեզ անկեղծ կերպով ասում եմ այս բոլորը նրա համար, որ սովորել եմ անկեղծ լինել ձեզ հետ։ Մ'ըմեն չեմ տեսնում, որ Ծեդրան ամեն որ վեր է կենում շատ վաղ, սկսում է լվացք անել և մինչև ուշ գիշեր աշխատում է, — այնինչ պատավ վոսկորները հանգստության են սիրում։ Մ'ըմեն չեմ տեսնում, որ դուք ձեր վերջին կոպեկն էնձ վրա չեք ծախսում. այդ վեր է ձեր կարողությունից, իմ բարեկամ։ Գրում եք, թե ձեր վերջին ունեցածը կծախսեք և ինձ կարիքի մեջ չեք թողնի։ Հավատում եմ, իմ բարեկամ, հավատում եմ ձեր բարի սրտին, բայց այդ այժմ եք այդպես ասում։ Այժմ դուք անապատելի փող ունեք, պարզև եք ստացել. բայց հետո էնչ կլինի, հետո՞ Ինքներդ գիտեք, որ յես միշտ հիվանդ եմ. յես չեմ կարող ձեզ պես աշխատել, թեև հոգով ուրախ կլինեի, համ էլ գործ միշտ չի լինում։ Ուրեմն էնչ է ծառում էնձ։ Դադրահալ լինել՝ նայելով ձեզ յերկուսիդ։ Ինչով կարող եմ ձեզ գոնե մի չնչին ոգուտ տալ։ Ճես էնչում յես ձեզ այդքան անհրաժեշտ եմ, իմ բարեկամ։ Ինչ մի լավ բան եմ արել ձեզ։ Ճես միայն կապված եմ ձեզ հետ ամբողջ հոգովս, սիրում եմ ձեզ պինդ, ամուր, ամբողջ սրտովս, բայց դառն է իմ ճակատագիրը. յես ընդունակ եմ սիրելու և կարող եմ սիրել, բայց ուրիշ ոչինչ, չեմ կարող գործել, հատուցանել ձեր բարերարությունների համար։ Մի պահեք էնձ այլևս, Թողեք գնամ, մոռացեցեք և ասացեք ձեր վերջին խոսքը։ Սպասելով ՝ծում եմ

ձեզ սիրող

Վ. Դ.

Ներեցեք, խնդրեմ, Վարինկա, ուղղակի խնդրեմ։ Ձեզ վոր թողնենք ձեր խելքով, ել ինչ ու ինչ չենք մտածի։ Դե այս այսպես չեն, դե այն այնպես չեն։ Իսկ կես հիմա տեսնում եմ, վոր այդ բոլորը խնդրեմ եւ Ախր ինչպիսի՜ պակաս, ջանիկա, դուք միայն այս սասցեք։ Ձեզ սիրում են, դուք մեզ սիրում եք, մենք ամենքս ել գոհ ենք և կերջանիկ, ել ինչ։ Դե ինչ պիտի անենք ոտար մարդկանց մոտ։ Դուք գնա կերևի չգիտեք, թե ինչ և նշանակում ոտար մարդ... Վհ՛չ, բարեհաճեցեք ինձ հարցնել և կես ձեզ կասեմ, թե ինչ և նշանակում ոտար մարդ։ Ճանաչում եմ նրանց, ջանիկա, լավ եմ ճանաչում. պատահել և կերթել եմ նրա հացը։ Զար և նա, Վարինկա չար, այնպես չար, վոր սրտիկդ չի դիմանա, այնպես կմաշի նա իր հանդիմանություններով, նախատինքներով ու վատ հայացքով։ Մեզ մոտ դուք ապրում եք տաքուկ, լավ, վոնց վոր ընկ մեջ պատսպարված լինեք։ Մեզ ել ինչպես պիտի թողնեք անգլուխ։ Ինչ պիտի անենք առանց ձեզ. այս ծեր տեղով ինչ պիտի անեմ այն ժամանակ։ Դուք մեզ հարկավոր չեք։ Ոգտակար չեք։ Ինչպես չենք ոգտակար։ Ձեզ, ջանիկա, ինքներդ պատեցեք, այդ ինչպես եւ վոր ոգտակար չենք։ Դուք ինձ շատ եք ոգտակար, Վարինկա։ Դուք այնպիսի ազդեցություն ունեք, բարերար ազդեցություն... Ահա կես այժմ մտածում եմ ձեր մասին և ուրախ եմ... Ծերքանն նամակ եմ պրում և բոլոր զգացումները արտահայտում նրա մեջ, մանրամասն ել պատասխան եմ ստանում ձեզնից։ — Շորի փոքրիկ պահարան առա ձեզ համար, գլխարկ. ձեզնից յերբանն վորնե հանձնարարություն և լինում, կես հանձնարարությունն ել... Ձեզ, ինչպես քե՛ ոգտակար չենք։ Ինչ պիտի անեմ կես մենակ այս ծեր հասակումս և ինչի պետք կլինեմ։ Դուք գուցե այս մասին չեք ել մտածել, Վարինկա, չե՞, դուք հենց այս մասին մտածեցեք։ Քե՛ ինչի պետք կլինի նա առանց ինձ։ Ծես սովորել եմ ձեզ, բալիկս։ Քե՛ չե, ինչ դուրս կգա սրանից։ Գնամ նեվայի ափն ու պրծամ։ Հավատացնում եմ, Վարինկա, այսպես կլինի, վորովհետև առանց ձեզ ել ինչ կմնա ինձ անելու։ Ախ, հոդյակս, Վարինկա։ Ծերևի ուզում եք, վոր ինձ բեռնակիր ձայլակի վրա գցեն և տանեն Վոլկովո[1], վոր ցնծի մեջ քրև յեկող վորև մի պառավ աղքատ կին մենակ հուզարկավորի իմ դագաղը, վոր այնտեղ ինձ քաղեն, հեռանան ու մենակ

[1] Գերեզմանատան անուն է։

թողնեն ինձ այնտեղ։ Մեղք ե մեղք, ջանիկս։ Հավատացնում եմ, մեղք ե, աստված ե վկա, մեղք ե։ Հետո եմ ուղարկում ձեզ ձեր գրքույկը, իմ բարեկամ Վարինկա, և չեքեն դուք, բարեկամդ իմ, հարցնեք իմ կարծիքը ձեր գրքույկի մասին, ապա կասեմ, որ կյանքումս չի պատահել, որ այդպիսի փառավոր գրքեր կարդացած լինեմ։ Այժմ հարցնում եմ ինքս ինձ, ջանիկս, այս ինչպես և չգիտեմ, որ չես մինչև այժմ ապրել եմ այնպես ապուշ, մեղա քեզ աստված։ Ինչ եմ արել։ Վեր անտառներից եմ չեկել։ Աբեր չես վոչինչ չգիտեմ, ե, ջանիկս, բոլորովին վոչինչ չգիտեմ։ Ենս ձեզ պարզ կասեմ, Վարինկա, չես ուսումնական մարդ չեմ, մինչև այժմ քիչ բան եմ կարդացել շատ քիչ, համարյա վոչինչ։ Картина человека, խելոք հեղինակություն ե, կարդացել եմ. Мальчик, наигрывающий разные штучки на колокольчиках, կարդացել եմ, մեկել Ивиковы журавли — այսքանը միայն, և չերբեք ուրիշ բան չեմ կարդացել։ Այժմ չես Станционный смотритель-ը այստեղ ձեր գրքույկի մեջ կարդացի։ Մի բան ասեմ ձեզ, ջանիկս, այդ պատահում ե, մարդ ապրում ե, բայց չի իմանում, թե իր քեֆի տակ գրքույկ կա, վորի մեջ իր ամբողջ կյանքը տուփրի պես փռված ե։ Ենվ ինչ վոր առաջ իր խելքը չեր կտրում, ահա այնտեղ հենց վոր կարդաս այս գրքույկը, քիչ-քիչ ամեն ինչ մտաբերում ես, հետ գոնում, հետ հասկանում։ Ենվ, վերջապես, ահա թե ելի ինչու սիրեցի ձեր գրքույկը. լինում ե մի տեսակ զորե, վոր ինչքան կարդում ես, կարդում թեկուզ հաքի ու բան չես հասկանում. այնքան խորամանկ կերպով ե լինում գրված։ Ենս, որինակ, չես բուքե եմ, չես բնությունից բուքե եմ, այնպես վոր չեմ կարող չափազանց կարևոր գրվածքներ կարդալ. իսկ այս վոր կարդում եմ, կասես ինքս եմ գրել. կասես այս, որինակի համար ասած, իմ սեփական սիրտն ե, ինչպես վոր կա, շուռ եմ տվել մարդկանց առջև ու ամեն բան նկարագրել մանրամասն. ահա թե վոնց։ Ու ինչքան ել հասարակ բան ե, աստված իմ, ինչքան հասարակ, հավատացնում եմ, չես ել կզբկվի այդպես, հա, ինչու չեկի գրի։ Ջե վոր չես ել նույնն եմ զգում, հենց բոլորովին այնպես, ինչպես վոր գրքույկի մեջ, և ինքս ել չերբեմն նույնպիսի դրություններում եմ գտնվել, ինչպես, որինակի համար ասած, այդ խեղճ Սամսոն Վըրինը։ Ու ինչքան Սամսոն Վըրիններ են մեր գլխիս մեղնում, նույնպիսի անտեր, անտիրական, խեղճ ու կրակներ։ Ենվ ինչքան համառ կերպով և նկարագրված ամեն բան։ Արտասուքը քիչ եր մնում

խեղդեր ինձ, ջանիկա, վոր կարդում եյի, քե ինչպես խեղճը խելքը կորցնելու չափ իրեն արբեցողությանն եր տվել. ամբողջ որը քնում եր վոչխարի մորթու քուրքը վրեն գցած, փունջ եր խմում գարդը մոռանալու համար ու լաց լինում վոդորմելի կերպով, աչքերը կեղտոտ փեչով սրբելով, յերբ վոր հիշում եր իր մոլորված գառնուկին, իր Դունյաշա աղջկան։ Ջե, սա բնական եւ Մեկ կարդացեք, գա բնական ե, ապրում ե, յես ինքս այդ տեսել եմ։ Ա՛յ, հենց Թերեզան, ասենք ինչ եմ հետու գնում, հենց քեզկուզ մեր խնդճ չինովնիկը, չե՞ վոր նա, գուցե քե, նույնպիսի Սամսոն Վլըրին ե, — միայն ազգանունն ե ուրիշ — Դորշկով։ Դա ընդհանուր բան ե, ջանիկա, ձեզ ել, ինձ ել կարող ե պատահել։ Ցնվ մի վորնե կոմս, վոր Նևակու[1] վրա կամ առափնյա փողոցում ե ապրում, նա ել նույնը կլինի, միայն ուրիշ կերևա ուրիշների աչքին, վորովհետև նրանք ամեն բանում իրենց սովորություններն ունեն, իրենց բարձր տոնը, բայց նա ել նույնը կլինի, ամեն բան կարող ե պատահել, և ինձ ել կարող ե նույնը պատահել։ Ահա քե ինչ, ջանիկա, իսկ գուք ուզում եք մեզնից հեռանալ. բայց չե՞ վոր, Վարինկա, դժբախտությունը ինձ ել կարող ե պատահել։ Կարող եք ձեզ ել, ինձ ել կործանել, բալիկս։ Ա՛խ գուք, իմ պայծառիկ, ի սեր աստծու, հանեցեք գլխներիցդ այդ ազատ մտքերը և մի տանջեք ինձ իզուր։ Դե՛, ինչպես կարող եք գուք, իմ քույլ, չփնաբավորված քույնակ, ինչպես կարող եք ինքներդ ձեզ կերակրել, կործանումից խուսափել, չարագործներից պաշտպանվել։ Թողեք, այդ, Վարինկա, ուշքի յեկեք, տխմար խորհուրդներն և փսփսուկները մի դնեք, իսկ ձեր գրքույկը մի անգամ ել կարդացեք, ուշադրությամբ կարդացեք, ոգուտ կտա ձեզ։

Станционный смотритель-ի մասին խոսելի Ռատազյանի հետ նա ինձ ասաց, քե բոլորը հին բան ե, և քե հիմա գրքերը բոլորը պատկերներով են և գանազան նկարագրություններով. լավ չհասկացա, քե ինչ եր ասում։ Իսկ վերջում ասաց, քե Պուշկինը լավ գրող ե, քե նա ուրիշ Ռուսաստանը փառավորեց, ու գարձյալ շատ բաներ ասաց նրա մասին։ Այո՛, շատ լավ ե, Վարինկա, շատ լավ. մի անգամ ել կարդացեք գրքույկն ուշադրությամբ, իմ խորհուրդներին հետևեցեք և ձեր հնազանդությամբ բախտավորեցրեք ինձ, ծերունուս։ Այն ժամանակ ինքը տերը կպարգևատրի ձեզ, բալիկս, անպատճառ կպարգևատրի։

Ձեր անկեղծ բարեկամ

Մակար Դեվուշկին

---

1 Նախկին Նևսկի, հիմա Հոկտեմբերյան պրոսպեկտ։

Հուլիս 6.

Վաղորմած տեր, Մակար Ալեքսեևիչ։

Ձեղորան այսօր ինձ համար բերեց տասնհինգ ռուբլի արծաթ փող։ Ինչքան ուրախացավ խեղճը, որ իրեն յերեք ռուբլի տվի։ Գրում եմ ձեզ շտապով։ Այժմ ժիլետ եմ ձևում ձեզ համար, — հրաշալի կտոր է, — դեղնավուն, ծաղկանկար։ Ուղարկում եմ ձեզ մի գրքույկ. այստեղ բոլորը զանազան պատմվածքներ են. յես կարդացի մի քանիսը, կարդացեք դրանցից մեկը „Шинель“ վերնագրով։ — Դուք ինձ համոզում եք միասին թատրոն գնալ. թանգ չի լինի արդյոք։ Դուցե քիչ պատկերասրահ գնանք։ Արդեն շատ վաղուց է, որ յես թատրոնում չեմ յեղել, չեմ էլ հիշում յերբ։ Միայն ելի վախենում եմ, թանգ չի նստի։ Ձեղորան միայն յերեքում է ռուբլի։ Նա աստմ է, որ դուք սկսել եք բոլորովին այնպես չապրել, ինչպես Թուլլ է տալիս ձեր կարողությունը, յես ինքս էլ եմ տեսնում այդ, միևնակ ինձ վրա վրդովան եք ծախսանել։ Տեսնեք, բարեկամս, վատ բան դուրս չգա։ Ձեղորան առանց այն էլ ինչ-որ լուրեր հասցրեց ականջիս, թե դուք կարծեմ վճռ եք ունեցել ձեր տանտիրուհու հետ նրան հաստանելիք վճարը չտալու համար. յես չատ եմ վախենում ձեզ համար։ Թեև, ասաք բարով, շտապում եմ։ Մի փոքրիկ գործ կա, գլխարկիս ժապավենները փոխում եմ։

Վ. Դ.

Գիտեք, յերբ մենք թատրոն գնալու լինենք, յես իմ նոր գլխարկը կդնեմ, իսկ ուսերիս սև մանտիլիան կգցեմ։ Շատ կլինի արդյոք։

Հուլիս 7.

Վաղորմած սիրուհի, Վարվառա Ալեքսեևնա։

... Ահավասիկ յես դարձյալ յերեկվանից մասին։ — Ախ, ջանիկս, կար ժամանակ, որ մենք էլ գժություններ էինք անում։ Սիրահարվել էի այդ դերասանուհու վրա, մինչև ականջներս սիրահարվել, և գնա էլ վոչինչ, իսկ զարմանալին այն էր, որ յես նրան հաճախ քիչ բոլորովին չէի տեսել և թատրոնում էլ ընդամենը մի անգամ էի յեղել, այնուամենայնիվ սիրահարվել էի։ Այն ժամանակ ինձ հարևան ապրում էին չորս տաքսլուխ ջահելներ։ Ընկերացա հետները, ակամա ընկերացա, թեև ինձ միշտ վայելուչ հեռավորության վրա էի պահում նրանցից։

Վորպեսզի հետ չմնամ, կես ինքս էլ նրանց ամեն խոսքին հա եմ ասում։ Ականջներս տարան՝ այնքան պատմում եմին այդ ներսանանուհու մասին։ Ամեն գիշեր, հենց վոր նկարչությունը կը լինում, ամբողջ կամպանիան — հարկավոր բաների համար նրանք կերբեք մի սև գրոշ էլ չեյին ունենում—ամբողջ կամպանիան գնում եր թատրոն ամենավերջին տեղերը և ծափահարում, ծափահարում, կանչում, կանչում այդ ներսանանուհուն — ուղղակի կատաղում։ Իսկ հետո չեյին թողնում, վոր քնեմ. ամբողջ գիշեր մինչև լույս նրա մասին եյին խոսում, ամեն մեկը նրան իր գլաշան եր անվանում, ամենքն էլ մեկնակ նրա վրա եյին սիրահարված, ամենքն սրտումն էլ այդ մի հատիկ սոխակն եր։ Ես ինքդ հասկանալ եյիր։ Ինքս էլ չգիտեմ ինչպես կեղավ, վոր նրանց հետ կես էլ գնացի թատրոն. նստել եյինք չորրորդ հարկում, վերևի տեղում։ Վարագույրի միայն ծայրն եյի տեսնում կես, բայց ամեն բան լսում եյի։ Իրավ ե, ներսանանուհին լավ ձայն ուներ — զրնգան, սոխակի, մեղրածոր ձայն։ Այնքան ծափ տվինք, վոր ձեռներումս էլ ուժ չեր մնացել, ըղավում եյինք, ըղավում, մի խոսքով քիչ մնաց մեզ դուրս քշեյին, ասենք՝ ձիշտ ե, մեկին դուրս տարան։ Տուն կեկա, մանե եյի գալիս շշմած. զրպանումս միայն մի ռուբլի կեր մնացել, իսկ մինչև ռոճիկս կատանայի, դեռ տասն որ կար։ Հիմա ինչ եք կարծում, ջանիկս, ինչ անեյի. վոր լավ լիներ հետևյալ որը՝ նախքան ծառայությանը կգնայի, մտա պարիկմախերֆրանսիացու մոտ և ամբողջ կապիտալովս ոծանելիք և հոտավետ սապոն առա, — ինքս էլ չգիտեմ, թե ինչու։ Այն ժամանակ առա այդ բոլորը։ Տանը չհաշեցի էլ, այլ շարունակ մանե եյի գալիս նրա պատուհանների տակ։ Նա ապրում եր նևսկու վրա — չորրորդ հարկում։ Տուն կեկա, մի ժամի չափ հանգստացա ու նորից նևսկի գնացի, վորպեսզի գեթ անցնեմ նրա պատուհանների տակով։ Մեկուկես ամիս մանե եյի գալիս այդպես, քրևե եյի գալիս նրա հետևից, բոպե առ բոպե կատք եյի վարձում և շարունակ անցուդարձ անում նրա պատուհանների առաջով. քանդվեցի, քարը քսվեցի բոլորովին, պարտքերի տակ թաղվեցի ու հետո արդեն սրտիցս հանեցի նրան. ձանձրացա։ Ահա քե ներսանանուհին ինչ կարող ե անել որինավոր մարդուն, ջանիկս։ Աենք ջահել եյի կես այն ժամանակ, ջահել...

Մ. Դ.

Իմ վաղորդյան ուրուհին, Վարվառա Ալեքսանդրա

Ձեր գրքույկը, որ յես ստացա ութն ամսի 6-ին, շտապում եմ վերադարձնել Ձեզ և միաժամանակ շտապում եմ իմ ուշն նամակին մեջ բացատրվել Ձեզ հետ։ Վատ բան եւ, Ջանիկա, վատ բան և այն, որ դուք ինձ այսպիսի ծայրահեղության եք հասցրել։ Ծույլ ասվեք, Ջանիկա, ասեմ Ձեզ. ամեն մի գրության ամենաբարձրյալից և մարդուն բաժին վորոշվում։ Վոմանց վիճակված և գիտնալական ուսադիրներ ունենալ, վոմանց՝ ծառայել իբրև սիսուլյարների սովետնիկ. սրան՝ հրամայել, իսկ նրան եւ՝ անտրտունջ ու յերկյուղածությամբ հնազանդվել։ Այս արդեն ըստ մարդու ընդունակության և հաշվի առնված. մեկը մի բանի յե ընդունակ, իսկ մյուսը՝ մի ուրիշ բանի, իսկ ընդունակությունները տրված են իրեն աստծո կողմից։ — Արդեն մոտ յերեսուն տարի յես, վոր յես ծառայության մեջ եմ. ծառայում եմ անբիծ, վարքով ժուժկալ եմ, անկարգությունների մեջ յերբեք չեմ նկատված։ Իբրև քաղաքացի, համարում եմ ինձ, իմ սեփական գիտակցությամբ, վոր գերծ չեմ թերություններից, բայց միաժամանակ նաև առաքինություններ ունեցող մարդ եմ։ Հարգված եմ իշխանության կողմից, և ինքը նորին գերազանցությունը գոհ և ինձանից. և թեպետ նա ցարդ բարեհաճության առանձին նշաններ չի ցույց տվել ինձ, բայց յես գիտեմ, վոր նա գոհ եւ Ապրել եմ այնքան, վոր մահերս ճերմակել են. մեծ մեղքեր չունեմ։ Ի հարկե, ով վոքը մեղքեր չունի։ Ամեն վոք մեղք ունի, և նույնիսկ գուք եւ մեղք ունեք, Ջանիկա։ Բայց մեծ հանցանքների և հանդգնությունների մեջ յերբեք չեմ նկատված, որինակ, վորևե կարգադրության գեմ կամ հասարակական հանգստության խանգարելու մեջ, այսպիսի բանում յես յերբեք չեմ նկատված, այդպիսի բան եւ չի յեղել. նույնիսկ խաչ պիտի առնայի, — ճշ, ինչ ասեմ։ Այս բոլորը գուք պետք և վոր գիտենայիք, Ջանիկա, և նա եւ պետք և գիտենար, — մենք վոր գրիչը վերցնում և նկարագրելու, ուրեմն պետք և վոր գիտենա բոլորը։ Վշշ, յես այդ չեյի սպասում Ձեզնից, Ջանիկա, վշշ, Վարինկա։ Ա՛յ հենց Ձեզնից եր, վոր չեյի սպասում այդպիսի բան։

Ինչպես Ուրուհի սրանից հետո չի՛ կարելի, վոր ապրես քեզ համար հանգիստ, քո անկյունում, ինչպես վոր կա, ապրես ակնոցդ դինջ, առանց վոչ վոքի ձեռք տալու, աստծու վրեժը սրտումդ, ինքդ քեզ ճանաչելով, վորպեսզի քեզ եւ ձեռք չտան,

վորպեսզի չմտնեն քո բունը տեսնելու, քե ինչ ես անում այնտեղ, ունեմ արդյոք, որինակ, լավ ժիլետ, ունեմ արդյոք ներքնաշորից ինչ վոր հարկավոր է. ունեմ արդյոք կոշիկներ և ինչպիսի տակեր ունեն նրանք. ինչ ես ուտում, ինչ ես խմում, ինչ ես արտադրում... Դե, ինչ գրելու բան է ջանիկա, վոր հենց քենկուզ չես, վորտեղ վոր սալահատակը վատ է, չեզրենն անցնում եմ վոտներիս ծայրերի վրա, վորպեսզի պահպանած լինեմ կոշիկներս։ Ի՞նչ հարկ կա գրելու ուրիշի մասին, քե նա չեզրենն կարիքի մեջ է լինում, քեչ չի խմում։ Կարծես քե ամենքն էլ անպատճառ քեչ պիտի խմեն։ Ի՞նչ է, չես նայում եմ ամեն մեկի քթրանին, քե ինչ պատառ է ծամում։ Ո՞ւմ եմ չես վիրավորել այդպես անելով։ Ջե, ջանիկա, ինչից ուրիշներին նեղացնես, չեզրը վոր քեզ ձեռք չեն տալիս։ Ահա ձեզ մի որինակ, Վարվառա Ալեքսեևնան, ծառայում ես, ծառայում չեռանդով, ջանադիր, իշխանությունդ էլ հարգում է քեզ (ինչ էլ վոր լինի այնուամենայնիվ հարգում է), և ահա վորևե մեկը հենց քթիդ տակ, առանց վորևե նկատելի պատճառի կվերցնի ու պասկվիլ[1] կքխկի քո գեմ։ Իհարկե, ճիշտ է, չեզրենն վորևե մի նոր բան ես կարել տալիս քեզ համար, ուրախանում ես, չես քնում, այլ ուրախանում ես, նոր կոշիկներդ, որինակ, հագնում ես այնպիսի քաղցրությամբ — այդ ճիշտ է, այդ չես զգացել եմ, վորովհետև քնքիշ զալիս է, վոր վոտդ տեսնում ես բարակ, քաշախուստին կոշիկի մեջ, — այս ճիշտ է նկարագրվածս։ Բայց և այնպես չես անկեղծ կերպով զարմանում եմ, քե այդ ինչպես ծյոդոր ծյոդորովիչը առանց ուշադրության թույլ է տվել այդպիսի մի գրքույկ և չի պաշտպանել իրեն։ Ճիշտ է, նա գնում է ջահել սանովնիկ[2] է և չեզրենն սիրում է թղավել, բայց ինչից չեզրավի չես, ինչից հենց չշպրտի չես, չեքեն հարկավոր և մեզպիսաններին շշպրել։ Այո, գնանք քե, որինակ, տոնը պահպանելու համար շշպրել. — դրա համար էլ կարելի չես, պետք է տովորեցնել, պետք է ահ տալ, վորովհետև, — մեր մեջ ասած, Վարինկա, — մեզպես մայրիկ առանց ահը սրտում վոչինչ չեն անում. ամեն մեկն աշխատում է միայն վորևե տեղ նշանակված լինել, քե, տեսնեք, չես այսինչ ու այսինչ տեղն եմ, իսկ գործից վախչում եւ Ճեվ վորովհետև զանազան աստիճաններ են լինում և ամեն մի աստիճան համապատասխան շշպրել և պահանջում, ապա քնակաև և, վոր սրանից հետո շշպրելու տոնն էլ

---

[1] Պասկվիլ — հնչանակի պաբսավագիր։

[2] Սանովնիկ — բարձր աստիճանի պետական ծառայող։

զանազան և լինում — բնական և Աշխարհիս բանն էլ հենց այդպես է, ջանիկս, որ մեզնից ամեն մեկը մյուսի առջև տոն և պահապանում, որ մեզնից ամեն մեկը մյուսին չշպրտում և Առանց այս նախազգուշացման աշխարհս կանգուն չեր մնա, կարգ ու կանոն էլ չեր լինի Անկեղծ կերպով զարմանում եմ, թե ինչպես Ձյուդր Ձյուդրովիչն այս վիրավորանքը թույլ և տվել առանց ուշադրության

Ցավ ինչու պետք և գրել այդպիսի բան Ցավ ինչի չի պետք այդ Ի՞նձ ինչ գրանից, կարդացողներից որևէ մեկը շինել կկարի՞ ինձ համար, ինչ և նոր կոշիկներ կառնի — Ջե, Վարինկա, կկարդա ու դեռ ջարդանակությունն էլ կպահանջի Թաղնվում եմ յերբեմն, թաղնվում, վախենում եմ քիթդ ցույց տալ վորևե տեղ, վորովհետև դոզում եմ ասեկոսաններից, վորովհետև ինչ կա-չկա՝ ամեն բանից պահկվել կշինեն քնզ վրա ահա քո ամբողջ քաղաքացիական և ընտանեկան կյանքը գրականության մեջ գրառանք կկատարեն. ամեն ինչ տված և, կարդացված, ծաղրված, բամբասված Փոդոց դուրս գալ էլ չի լինի, չե՞ վոր այդ բոլորն այնպես ապացուցված և, վոր մեզ պես մարդուն հենց մենակ քայլվածքից կճանաչեն այսօր Դիմա ելի ինչա չունի, յերեք նա գոնե վերջը ուղղած լիներ, վորևե բան մեղմացրած լիներ, որինակ, այն կետից հետո, վորտեղ ասված և, թե ինչպես նրա գլխին քերթեր եկին թափվում, այսպիսի տողեր ել ավելացրած լիներ, թե այս բոլորով հանդերձ նա առաքինի յեր, լավ քաղաքացի, իր ընկերների կողմից այդպիսի վերաբերմունքի արժանի չեր, հնազանդվում եր մեծավորներին (այստեղ կարելի յեր վորևե որինակ բերել), վոչ վոքի չարիք չեր ցանկանում, հավատում եր աստծուն և յերբ վոր մեռավ (յերեք գրողն ուզում և, վոր նա անպատճառ մեռնի), նրա վրա լաց եկին լինում Բայց ամենից լավը այն կլիներ, վոր խեղճին չքողներ մեռնելու, այլ այնպես աներ, վոր նրա շինելը գոնվեր, վոր գեներալը, մանրամասնորեն իմանալով նրա առաքինությունները, խնդրեր, վոր նրան տեղափոխեն իր գրվանատունը, աստիճանը բարձրացներ և լավ ռոճիկ տար, այնպես վոր, այ տեսնք, թե հետո ինչ կլիներ. — չարը պատժված կլիներ, իսկ առաքինությունը՝ հաղթանակած և գրվանատան ծառայող ընկերները կմնային քթները կախ Ես, որինակ, այդպես կանեյի, թե չե ինչ մի առանձին, ինչ մի լավ բան կա նրա գրածի մեջ Այնպես, ինչ-վոր մի պատարկ որինակ ամենօրյա, առօր կենցաղից Ցավ դուք ինչպես վստահացաք

այդպիսի մի գրքույկ ուղարկել ինձ, բայց Ձեր վրա մի չարամիտ գրքույկ է, Վարինկա, դա ուղղակի անհավատալի չի, վորովհետև չի կարող պատահել, վոր այդպիսի աստիճանավոր գործիչն ունենա Այս բանից հետո պետք է բողոքել, Վարինկա, պաշտոնապես բողոքել։

Ձեր ամենախոնարհ ծառա

Մակար Դեվուշկին

Հուլիս 27.

Վողորմած տեր, Մակար Ալեքսեևիչ։

Վերջին անցքերը և Ձեր նամակները վախեցրին, ապշեցրին ինձ և տարակուսանքի մեջ գցեցին, իսկ Ձեղրայի պատմածները բացատրեցին ինձ բոլորը։ Բայց ինչ հարկ կար այդպես հուսահատվելու և հանկարծ ընկնելու այնպիսի մի անդունդ, վորի մեջ դուք եք ընկել, Մակար Ալեքսեևիչ։ Ձեր բացատրություններըը բոլորովին չգոհացրին ինձ։ Տեսնում եք, ճիշտ չեմ՝ ասում կամ կերը պնդում եմ, թե պետք է վերցնեմ ինձ առաջարկած ձեռնտու պաշտոնը, բայց այդ իմ վերջին արկածն էլ չի վախեցնում ինձ։ Դուք ասում եք, թե Ձեր՝ դեպի ինձ տածած սերն և ստիպել Ձեզ ծածուկ պահելու ինձնից Ձեր դրությունը։ Ճիշտ այն ժամանակ էլ արդեն տեսնում էի, վոր շատ բանով պարտական եմ Ձեզ, կերը դուք հավատացնում եիք, թե ինձ վրա ծախսում եք միայն Ձեր հետ գցած փողերը, վոր, ինչպես դուք էիք ասում, պահում էիք լոմբարդում սև որվա համար։ Իսկ այժմ վոր իմացա, թե դուք վոչ մի փող չեք ունեցել, թե պատահմունքով իմանալով իմ աղետալի դրությունը և այդ դրությունից դպացված, վճռել եք առաջուց վերցնել և ծախսել Ձեր ոռճիկը, և նույնիսկ ծախսել եք Ձեր հագուստը, կերը վոր կես հիվանդ էի,— այժմ կես, այդ բոլորը վոր իմացա, այնպիսի մի տանջալից դրության մեջ եմ ընկել, վոր մինչև այժմ-չեմ իմանում, ինչպես ընդունեմ այդ բոլորը և ինչ մտածեմ այդ մասին։ Ա՛խ, Մակար Ալեքսեևիչ, դուք պետք է կանգ առնեիք Ձեր առաջին բարերարությունները հետո, վոր նկրշնչել էին Ձեզ կարեկցությունն ու ազգակցական սերը, և հետագայում չպետք է շռայլեիք փողերը դուռ տեղը։ Դուք զավառանցիք մեր բարեկամությունը, Մակար Ալեքսեևիչ, վորովհետև անկեղծ չեք կեղել ինձ հետ, և այժմ, կերը տեսնում եմ, վոր Ձեր վերջին կոպեկները ծախսել եք իմ արդուզարդի, կանֆետների, գլասաներների, թատրոնի և գրքերի

վրա, — ասպա այդ բոլորն ինձ վրա թանգ և նստում այժմ, վորովհետև զղջում եմ իմ աննեղելի քեքնամտությանն համար (վորովհետև կես ձեզնից ամեն բան ընդունում եյի, առանց հոգալու ձեր մասին), և այն ամենը, ինչով վոր դուք ուզում եյիք հաճույք պատճառել ինձ, այժմ գարշ և դառն ինձ համար և միայն ցավագին ափսոսանք և առաջացրել իմ մեջ։ Վերջին ժամանակս կես նկատում եյի, վոր դուք գարշոտ եք և քնպետ ինքս էլ ինչ-վոր սխուր բան եյի սպասում, բայց այն, ինչ վոր պատահեց այժմ, մտքովս էլ չեր անցնում։ Ինչպես դուք կարողացաք միևնույն այդ աստիճան հոգնպես ընկճվել, Մակար Ալեքսանիչ։ Բայց այժմ ինչ կմտածեն ձեր մասին, ինչ կասեն այժմ նրանք ամենքը, վորոնք ճանաչում են ձեզ։ Դուք, վորին կես և ամենքը հարգում եյինք ձեր հոգու բարության, ձեր համեստության և խոհեմության համար, դուք այժմ հանկարծ ընկել եք այնպիսի մի զզվելի արատի մեջ, վորի մեջ, թվում է, քիչ կերբեք նկատված չենք կեղել առաջ։ Վոր[9]իմանաք, քիչ ինչ պատահեց ինձ, կերբ Ձեզդրան պատմեց, քիչ ձեզ գտել են փողոցում հարբած դրության մեջ և տուն են տարել վոստիկանության ձեռքով։ Ճիշտ քար կարեցի զարմանքից, քիևև ինչ-վոր արտասովոր բանի եյի սպասում, վորովհետև չորս որ կորած եյիք։ Բայց մոռացել եք արդյոք, Մակար Ալեքսանիչ, քիչ ինչ կասեն ձեր իշխանավորները, վոր իմանան ձեր բացակայության իսկական պատճառը։ Ասում եք, քիչ ամենքը ծիծաղում են ձեզ վրա, քիչ ամենքն իմացել են մեր կենակցության մասին և քիչ իրենց ծաղրանքի մեջ ինձ էլ են հիշում ձեր հարևաններդը։ Ուշադրության մի դարձնեք այդ բանի վրա, Մակար Ալեքսանիչ, և, ի սեր աստծու, հանգստացեք։ Ինձ վախեցնում է ձեր կռիվը այն սպանելի հետ. այդ մասին կես լսեցի մուք կերպով։ Բացատրեցեք ինձ, ինչ և նշանակում այդ բոլորը։ Գրում եք, վախենում եյիք ամեն բան հայտնել ինձ, վախենում եյիք ձեր խոստովանությամբ կորցնել իմ բարեկամությունը, քիչ հուսահատության մեջ եյինք, չեյիք իմանում՝ ինչով ոգնեք ինձ իմ հիվանդության ժամանակ, քիչ ծախել եք ամեն բան, վորպեսզի ոգնեք ինձ և քույլ չտաք, վոր հիվանդանոց գնամ, քիչ վորքան կարողացել եք՝ պարտք եք արել և ամեն որ անախորժություններ ունեք տանտիրուհուց. — բայց այս բոլորը ծածկելով ինձնից, դուք ավելի վատն եք ընտրել։ Այժմ կես հո ամեն բան իմացա։ Դուք քաշվել եք ասիպելու ինձ, վոր խոստովանվեմ, քիչ կես եմ կեղել ձեր դժբախտ դրու-

քյան պատճառը, այնինչ այժմ կրկնակի վիշտ եք պատճառել ինձ ձեր վարմունքով։ Այս բոլորն ապշեցրել է ինձ, Մակար Ալեքսեևիչ։ Ախ, իմ բարեկամ, դժբախտությունը վարակիչ հիվանդություն է։ Դժբախտները և աղքատները պետք է հեռու մնան իրարից, վորպեսզի ավելի ևս չվարակվեն։ Ցեսս ձեզ համար այնպիսի դժբախտություններ բերեցի, վորոնց նմանը դուք չեք էլ փորձել առաջ ձեր համեստ և մենակյաց կյանքում։ Այս բոլորը տանջում և սպանում է ինձ։

Այժմ գրեցեք ինձ ամեն բան անկեղծորեն, ես ինչ և պատահել ձեզ և ինչպես է կեղել, վոր այդպիսի բան եք արել։ Հանգստացրեք ինձ, եթե կարելի չէ։ Ինքնասիրությունս չի, վոր սափրում է ինձ գրելու այժմ իմ հանգստության մասին, այլ դեպի ձեզ ունեցած իմ բարեկամության ու սերը, վորոնք վոչնչով չեն ջնջվի իմ սրտից։ Մնաք բարով։ Անհամբեր սպասում եմ ձեր պատասխանին։ Դուք վատ կարծիք եք ունեցել իմ մասին, Մակար Ալեքսեևիչ։

Ձեզ սրտագին սիրող

Վարվառա Դոբրոսելովա

Հուլիս 28.

Իմ անգին Վարվառա Ալեքսեևնա։

Հիմա վոր ամեն բան վերջացած է և ամեն բան կամաց-կամաց իր նախկին դրությունն է ստանում, այդ պատճառով ահա թե ինչ կասեմ ձեզ, ջանիկս. դուք անհանգստանում եք այն մասին, թե ինչ կմտածեն իմ մասին, ուստի շտապում եմ հայտարարելու ձեզ, Վարվառա Ալեքսեևնա, վոր իմ ինքնասիրությունն ամենից բանգ է ինձ համար։ Հետևաբար և զսկվածանալով ձեզ իմ դժբախտությունների մասին և բոլոր անկարգությունների մասին, ծանուցանում եմ ձեզ, - վոր իշխանությունից դեռ վոչ վոք վոչինչ չգիտե և չի էլ գիտենա, այնպես վոր ներսանք ամենքն էլ զերծ ենք հարգանք կտածեն առաջվա պես։ Մի բանից եմ վախենում,—բամբասանքներից։ Մեր տանը տանտիրուհին միայն բղավում է, իսկ այժմ, երբ չես ձեր տասը ռուբլու ոգնությամբ վճարեցի նրան պարտքիս մի մասը, միայն փնթփնթում է և էլ վոչինչ։ Իսկ ինչ վերաբերում է մյուսներին, նրանք էլ վոչինչ։ Նրանցից միայն հարկավոր չեն վոչ փոխ առնել, թե չեն նրանք էլ վոչինչ։ Իսկ ի ամփոփումն իմ բացատրություններին, կասեմ

ձեզ, Ջանիկա, ձեր հարգանքը զեղչի ինձ չես ամենից բարձր եմ համարում աշխարհիս չերեսին և զրանով եմ մխիթարվում այժմ իմ ժամանակավոր անկարգություններին մեջ։ Փառք աստծու, վոր առաջին հարվածը և առաջին զալմաղալները անցան, և զուք այս բանն ընդունեցիք այնպես, վոր ինձ ուխտադրուժ բարեկամ և չնասեր չեք համարում այն բանի համար, վոր չես ձեզ պահեցի ինձ մատ և խարում եչի ձեզ, անկարող լինելով անջատվել ձեզնից և սիրելով ձեզ, ինչպես իմ հրեշտակիկին։ Ջանադիր կերպով եմ կպել այժմ ծառայությանս և պաշտոնս սկսել եմ կատարել լավ։ Ցնծասաղիկ Իվանովիչը ընավ մի խոսք էլ չասաց, չերբ չերեկ անցնում եչի կողքովը։ Չեմ ծածկի ձեզնից, Ջանիկա, վոր ինձ տպանում են պարտքերս և հազուստիս վատ զրությունը, բայց այս էլ ընաս չունի և այս մասին նուչնպես ապաչում եմ ձեզ մի հաստահատվելք, Ջանիկա։ Ուղարկում եք զարձյալ հիսուն կոպեկ, Վարինկա, և այդ հիսուն կոպեկը սիրտս ծակեց։ Ուրեմն ահա ես բանը վոնց շուտ չեկավ, ահա ես բանն ուր հասավ, այսինքն այս չես, ձեր հիմարս չեմ ձեզ, հրեշտակիկիդ ոգնում, այլ զուք, իմ խնդմ վորբիկ, ինձ։ Լավ և արել Թեոդորան, վոր փող և հագնել ձեռ տալժմ վոչ մի հույս չունեմ, Ջանիկա, տառնալու, իսկ չնեմ վորևե հույս ծագի, այն ժամանակ ամեն բան կգրեմ մանրամասն։ Բայց բամբասանքները, բամբասանքներն են ինձ անհանգստացնում ամենից ավելի։ Մնաք բարով, իմ հրեշտակիկ։ Համբուրում եմ ձեր ձեռիկը և ապաչում եմ ձեզ աոողջացեք։ Նրա համար չեմ գրում մանրամասն, վոր շտապում եմ պաշտոնիս, վանդի աչխատասիրությամբ և ջանադրությամբ ուզում եմ քավվել իմ բոլոր հանցանքները և զանցառությունները ծառայությանս վերաբերմամբ. իսկ հետագա պատմությունները բոլոր անցքերի և ապառների հետ ուշնցած արկածիս մասին հետաձգում եմ մինչև յերեկո։

Ձեզ հարգող և ձեզ սրտագին սիրող

Մակար Դեվուչկին

Հուլիս 28.

Ե՜հ, Վարինկա, Վարինկա։ Այ հիմա վոր զուք ևը ժեզանչում և այդ ձեր խղճի վրա կծանրանաս։ Ձեր նամակով ինձ բոլորովին շփոթեցրիք, շլմացրիք, և մինչև այժմ, չերբ զործից ազատ եմ և սրտիս խորքը քափանցնել, տեսա, վոր չես արդարացի եչի,

բոլորովին արդարացի։ Քոսքս իմ դեքորդի մասին չէ (հերն եմ անիծել), այլ այն մասին, որ չես սիրում եմ ձեզ և բոլորովին անխոհեմություն չէր։ Դուք, Ջանիկս, ոչինչ չգիտեք. իսկ որ իմանաք, ես ինչից և այս բոլորը, ինչու չես պիտի սիրեմ ձեզ, այն ժամանակ ուրիշ բան կասեիք։ Դուք այդ հիմնավորված պատրաստությունները հենց այնպես եք ասում, իսկ չես համաստացած եմ, որ ձեր սրտում բոլորովին այդ չէ։

նա Աստված ժողովրդից, գնում էր մենակ, շտապում, — անալի կես Դադում էր տերևի պես, մտածում էր՝ վորտեղ վոր է, սարսափելի մի բան պլուխը կհանի այս վիշակից. մեկ էլ տեսար քամին պտտում անտառում. վղղում է, շվայտում, փոնում վորբաձին, տերևները ահագին քանակությամբ պոկում կամխեցած ճյուղերից, պատյա-պատյա տալիս ոդի մեջ և նրանց հետևից կես-կես, լայն, ադմկալի կերամով, պիլ ծլլթոցներով սուրում են թռչունները, այնպես վոր կերկինքը անանում է, և ամեն ինչ ծածկվում մթամգույն Ջարդանդում էր և այդ միջոցին կարծես լսում էր ինչ-վոր մի ձայն, կարծես մենք շշնջում է. — ավաղ, փախիր, մանուկ, մի ուշանա. այստեղ տանկալի կլինի խավուղն, փախիր, մանուկ — սկզբում ան է ընկնում և վազում էր, վազում այնպես, վոր շունչդ կտրվում էր Հևալով տուն էր հասնում. տանը կննդանատիպուն, ուրախությունն է տիրում. բոլոր կերևնաները պարծի կես դնում. սեսնա կամ խաշխաշ ըաժանում, վոր կհետևնեցը հանենք. Թաց փայտերը ճրթճրթում են վառարանի մեջ. մայրիկս ուրախ հետևում է մեր ուրախ աշխատանքին. պատավ պարակը, Ուչյանան, պատմում է հին ժամանակներից կամ սարսափելի հեքիաթներ կախարդների և մոնեկների մասին. Ծերեխաները սիրով կպչում նրա էրսը, իսկ ամենքի դեմքին ժպիտ և խղաղություն Մեկ էլ հանկարծ լսում ենք ամենքս... սաս՝ ադմակ, կարծես մենք քրխկիքրխկացնում ես — Դատարկ բան. այդ պատավ Ջրոլյուշայի ջահրան է պրպտում. ծիծաղը բռնում է ամենքիս Իսկ հետո գլուխը չենք քնում վախից. սարսափելի կերազներ ենք անանում Մերկանում պարզնում ենք, չենք համարձակվում շարժվել և մինչև լուսա պրպտում ենք վիրմակի տակ Առավոտյան վեր ենք կենում քարից, ինչպես ծաղիկ Նայում ենք պատուհանից դուրս. սառնամանիքը քանել և ամրողջ գաշտը, բարակ աշնանային կերամը կախվել և մերկացած ճյուղերից. Քրքիջ սես բարակ սառույցով ծածկվել և լիճը. ափսակ գլոլըշի և բարձրանում լճից. ծլլում են ուրախ թռչունները Արևը լուսավորում է շուրջը ամեն ինչ պայծառ շողերով և շողերը ջարդում են սպիտակ սես բարակ սառույցը Ամեն ինչ լուսավոր, շողշողուն, ուրախ տեսք ունեն Վառարանի մեջ նորից ճրթճրթում է կրակը. ամենքս նստում ենք սամովարի մոտ, իսկ պատուհաններից ներս և նայում գլուխը քրքջած ու մրսած մեր Պոլկան դուռը և պոչը շարժում Կարևև մի ժամ հայտուտ ձին լծած անցնում է պատուհանների առջևով՝ անտառից վայտ բերելու Ամենքս այնպես

գոհ եմ, այնպես ուրախ... Ա՛խ, ինչպիսի վսակի մանկություն ունեցի ես...

Ահա հիշողություններիս անձնատուր լինելով, հիմա ես լաց չեզա չերևակայի պես։ Այնքան կենդանի, այնքան կենդանի կերպով հիշեցի ամեն ինչ, այնքան պայծառ կերպով առջևս կանգնեց բոլոր անցյալը, իսկ ներկան այնքան մուրճն է, այնքան մռայլ... Ինչով պիտի վերջանա այս, ինչով պիտի վերջանա այս բոլորը։ Գիտեք, ես մի տեսակ հանգստություն ունեմ, մի տեսակ հավատացած եմ, որ այս աշխատանքը կմնանեմ։ Ես շատ, շատ հիվանդ եմ։ Ես հաճախ եմ մտածում, որ կմեռնեմ, բայց չեմ ուզի այստեղի հողում թաղվել։ Գուցե նորից առողջանամ, ինչպես և այն ժամանակ, աշխատեմ, իսկ ես դեռ չեմ ապաքինվել։ Ահա հենց հիմա էլ շատ վատ եմ զգում ինձ։ Ծերտրան այսօր ամբողջ որով գնաց ու-որ, և ես նստած եմ մենակ։ Իսկ ես միքանի ժամանակից ի վեր վախենում եմ մենակ մնալ։ ինձ մի՛շտ թվում է, թե սենյակում ինձ հետ մի ուրիշն էլ կա, թե մեկը խոսում է ինձ հետ, մանավանդ, երբ վորևե բանի մասին մտածմունքի մեջ եմ ընկնում և հանկարծ սթափվում մտածմունքից, այնպես վոր առկում է գալիս վրաս։ Ահա թե ինչու ես այսպիսի մեծ նամակ գրեցի ձեզ. երբ վոր գրում եմ, առկումս անցնում է։ Մնաք բարով, նամակս վերջացնում եմ, վորովհետև հնար չունեմ, հնար ժամանակ։ Առաջածս վոդերից հագուստիս և գլխարկիս համար մոտս մնացել է միայն մի ռուբլի արծաթ։ Դուք տանտիրուհուն տվել եք երկու ռուբլի արծաթ, այդ շատ լավ է. այժմ նա միառժամանակ կլռի։

Ձեր հագուստը մի կերպ կարգի գցեցեք։ Մնաք բարով, ես շատ հոգնեցի. չեմ հասկանում ինչու եմ ես այսպես թուլանում, ամենաչնչին գործողությունքն էլ հոգնեցնում են ինձ։ Գոր վոր պատահի, ինչպես պիտի աշխատեմ։ Այս է ահա, վոր ապանում է ինձ։

Վ. Գ.

Սեպտեմբեր 8.

Աղայենյակդ իմ, Վարինկա։

Այսօր, հրեշտակիկդ իմ, ես շատ ապավորություններ կրեցի։ Նախ՝ պուլես ամբողջ որը ցավում եր։ Մի կերպ թարմանալու համար գնում ես Ծոնատանկայում մեն գալու։ Ծերևկոյան քսան պոտ, խոնավ եր։ Ժամը վեցին արդեն մքնում է։ — այսպես և այժմ։ Անձրև չկար, բայց մառախուղ եր, անձրևից էլ վատ։ Ես-

ինքն յոթնասով յոթիկաթ, լայն շերտերով անց հին կենում ամպերը։ Անհամար ժողովուրդ ևր անցուդարձ անում քարափին և ինչ-սիսի ժողովուրդ. ամենքն էլ սարսափելի, սխրուքիյուն ապրող դեմքերով — հարբած մուժիկներ, քիսաս չուխոնկա կանայք սա-պոգներով և դղզղված մազերով, արտուղչիկներ, կառապաններ, մեր չինովնիկներից վոմանք՝ վորևե կարիքի համար, փողոցային յերեխաներ, փոկանագործի վորևե աշակերտ շերտավոր խալաթով, հարբած, կմախքացած, յուղի մեջ թաթախած դեմքով, կոպիկը ձևաքին, ծառայուքիյունը լրացրած գինվոր մի սաժեն բարձրու-քիյամբ. — ահա քե ինչպիսի հասարակուքիյուն ևր։ Ծերևի այն-պիսի ժամ ևր, վոր ուրիշ տեսակ հասարակուքիյուն չևր ել կա-րող լինել նավագնաց ջրանցք — Ծոնտանկա։ Այնքան անհաս-նում նավակներ են, վոր չես հասկանում, վիրտնղ կարող եյին այդ բոլորը տեղավորվել։ Համուրջների վրա նստած են քաց խոտրեղեն և վաճած խնձորներ ծախող կանայք, ամենքն էլ այն-քան կեղտոտ ու քրջված։ Տխուր տպավորուքիյուն և թողնում Ծոնտանկայում գրանելը։ Վոտներիդ տակ քաց գրանիտ, այս ու այն կողմը քարձր, ան, մրոտ տներ, վոտներիդ տակ մառախուղ, գլխիդ վերևը նույնպես մառախուղ։ Այնքան տխուր, այնքան խա-վար ևր յերևոյթն այստեղ։

Գորոխովայա վոր վերադարձա, արդեն մթնել ևր բոլորովին, և սկսել եյին գազը վառել։ Վաղուց և, վոր չեյի յեղել Գորոխովայում, չևր հաջողվում։ Ամեն կիրակի փողոց և ինչպիսի կրպակներ, հարուստ խանութներ, բոլորը հուրհրատում են, վառվում. կոտրեղեն, ծա-ղիկներ ապակիների հետևը, գանազան գլխարկներ ժապավենով-րուվ գարծում են, քե այդ բոլորը դարսված են հենց այնպես, գնող-կուքիյան համար. մեծ, չե՞ վոր կան մարդիկ, վորոնք առնում են այս բոլորը և նվիրում ընենց կանանց։ — Հարուստ փողոց և, Գեղեմա-նացի բուլոչնիկներ խիստ շատ են ապրում Գորոխովայում. պետք և վոր նույնպես խիստ ունևոր ժողովուրդ լինեն։ Վորքան հատևե-ներ են բոզ ու բոզ անցնում, ամբահատակը վռնց և գիմանում այս բոլորի տակ։ Գազերեն այնքան շքեղ են, ապակիները վռնց վոր հայելի. նեղսը քաժիշ ու մետաքս. լուքեյները ոզնվականներով ուսապրներով, սուրը կախած։ Ճիշ նայում եյի բոլոր հատևերի ներսը. բոլորի մեջ եյ տիկիններ են նստած, այնպես պճնված. գուցե և իշխանուհիներ և կոմսուհիներ են։ Անշուշտ այն ժամն ևր, վոր ամենքն էլ պարահանգիստներ ու ժողովներ եյին շտապում։ Հետա-քրքրական և մտիկից տեսնել իշխանուհի և առհասարակ ազնվա-

գարմ տիկին. պետք է որ շատ լավ լինի. կես վոչ մի ժամանակ չեմ տեսել. տեսել եմ աչ, այսպես, ինչպես հիմա, կոռնիի ներսը նայելուն. Այդտեղ կես հիշեցի ձեզ — Ախ, ազատիչյանչի իմ, բայց այժմ որ հիշում եմ ձեր մասին, ամբողջ սիրտս մղկտում եւ ինչու ուզը, Վարինկա, այդքան դժբախտ եք. Ընչեցանկիկդ իմ, ախր ինչով ուզը վատ եք ընտանց բոլորից. Ուզը բարի կեք, պնդացին, դիտուն, ինչու ուրեմն ձեզ այդպիսի չար բախտ է վիճակվել. Ինչու միշտ այնպես է պատահում, որ լավ մարդը միում է կեղտի վրա ձգված, իսկ մի ուրիշին բախտն ինքն է գնում-կպչում. Դիտեմ, դիտեմ, ջանիկա, որ այսպես մտածելը լավ չե, որ սա ապատամտությունն է. բայց անկեղծ կերպով որ խոսանք, ճշմարիտ խոսքիցը որ ասենք, ինչու մեկին դնենա մեր արգանդում ճակատագիրը բախտավորությունն է տալիս, իսկ մի ուրիշը լույս աշխարհ է գալիս չար աստղի տակ. Այդ ինչպես է լինում, որ բախտավորությունը հաճախ Իվանուշկա դուրաչկին է վիճակվում և բախտն ասում է նրան, — դու, Իվանուշկա դուրաչկի, ձեռքդ կոխիր ապակրիչ տոպրակիները, հանիր, կեր, խմիր, քեֆ արա, իսկ դու, այս-ինչ ու այն-ինչդ, մնայն շրջիանքներդ լպստիր, վորովհետև ուրիշ բանի պետք չես. Մեղք է, ջանիկա, մեղք է այսպես մտածելը, բայց ինչ արած, մարդ ակամա հոդուն մեղք է անում այսպիսի բաներ վոր տեսնում եւ Ինչ կլիներ, վոր դուք էլ, բարիկա, պարծանիկս, աներնդիք այնպիսի կառնիով Ձեր բարեհամ հայացքները կվերասային դեմքերս, և վոչ մի մեղ ամոթ մարդկից. Ամեն կղպակիք դուք վոչ մի քաշվանք հնազանդ հոգուստով, ալլ մեռոտքան և վոսկու մեջ ոչնչացած. Լղարկին, չորիկ-մորիկ չեիք լիներ, ինչպես հիմա, ալլ չուքարատնացի նման քարշ, կարմիր, փապկիկ. Իսկ դես այն ժամանակ կերջանկիկ կլինեիք հենց միայն նրանով, վոր վոտքերից աչքս կգցեիք ձեր պարծում լուսավորված պատուհաններին, վորտեղ ձեր գեղի ստվերը տեսնեիք. Մնում այն միայը, վոր դուք կերջանկիկ եք և ուրախ, իմ լավ ծիտիկ, ինձ էլ կուրախացնեք. Իսկ հիմա ինչ եւ բավականա չե, վոր չար մարդիկ ձեզ կործանել են, վորնա անպետանին, անատակը մեկն էլ վիրավորում է ձեզ. Ես ինչ է, գրագիր կոկիկ նատած է նրա վրա, վոսկի լորնետն մյուսից է նայում ձեզ վրա այդ անամոթը, ուրեմն նա ամեն բան կարող է, ուրեմն նրա անվայելուչ խոսքերը պետք է լսել զիջողաբար. Այդպես հա. Իսկ ինչու չի այդ այդպես. Վորովհետև դուք վորը եք, վորովհետև դուք անպաշտպան եք, վորովհետև դուք չունեք մի ուժեղ բարեկամ, վորը ձեզ

վայելուչ հնարավոր տարբ Ցնվ ինչ մարդ և դա, ինչ մարդիկ են պրոնեք, որոնց համար վարքին վիրավորելը վոչինչ բան եւ Պրոնեք վոչնչությունների են և վոչ ես մարդիկ, ուղղակի վոչնչությունների. պրոնեք միայն մարդիկ են համարվում, այնինչ իսկապես մարդիկ չեն, միչ կան այդ բանում համոզված եմ Ահա ես ինչպիսի մարդիկ են պրոնեք Իսկ իմ կարծիքով, բայիկս, այն շարժանշչիկը, վորին այսոր հանդիպեցի կես Գորոխովայում, ամենի շատ հարգանք և ներշնչում գնալի ինքը, քան պրոնեք Նա ինձ ամբողջ որը մանր և գալիս, մի կերպ կյանք գնում, ապատում, վոր մի անպետք, մանգամ գրող առանց ապրուստի համար, բայց նա իր գլխի տերն է, իր հայալ աշխատանքին և ապրում Նա վոգորմությունն խնդրել չի ուզում, այլ մարդկային հաճույքի համար և աշխատում, ինչպես լարված մեքենա, այսինքն ես ահա, կես էլ սրանով կարող եմ ձեզ հաճույք պատճառել Ճիշտ է, ազքատ է նա, ազքատ, մինչ մինչուն ազքատը, բայց ազնիվ ազքատ է. նա հոգնում է, նա մրսում է, բայց միշտ աշխատում է, ինկոզ կուրավորը, բայց և այնպես աշխատում է Ցնվ շատ կան ազնիվ մարդիկ, ջանիկս, վորոնք ինձ իրենց աշխատանքի չափի և ոգտակարությունի համեմատ քիչ են վաստակում, բայց վոչ վոքի առջև գլուխ չեն խոնարհում, վոչ վոքից հաց չեն խընդրում Ահա կես էլ ճիշտ այնպես, ինչպես այն շարժանշչիկը, այսինքն վոչ ես, վոչ ամենևին այնպես, ինչպես նա, այլ ուրիշ իմաստով, ազնիվ ազնվական տնտեսներից ճիշտ այնպես, ինչպես և նա. ուժերիս չափ աշխատում եմ, այսինքն՝ ինչքան վոր կարողանում եմ Ավելին չկա, իսկ չկա-ին պատասխան չկա

Ցնա նրա համար խոսացի այդ շարժանշչիկի մասին, ջանիկս, վոր այսոր կես կրկնակի զգացի իմ ազքատությունը կանգնեցի, վոր նայեմ շարժանշչիկին Այնպիսի մաքեր եկին մտքս գլուխս, ահա այդ մաքերը ցրելու համար եր, վոր կանգնեցի Ցնա եմ կանգնած, կատաղաններն են կանգնած, մի ինչ-վոր ազջիկ, մենք ել մի փոքրիկ ազջիկ վոտից-գլուխ ցնխոտված Շարժանշչիկը տեղավորվել եր մի ինչ-վոր տան պատշհանների տակ Նկատում եմ մի պատիկ տղա, այսպես մոտ տաս տարեկան. լավիկն եր, բայց հիվանդոտ, չորիկմորիկ, հագին մենակ շապիկ և մի ուրիշ չես իմանում ինչ, համարյա ես բոլիկ կանգնել և, ընդհանը բաց լսում և նվագը. — հայ գիտեք յերևևույթյունն. նայում և, ես ինչպես գերմանացի շարժանշչիկը պար և սկսում իր տիկնիկները. ձեռքերն ու վոտները փետացել են, պոչում և և կրծում ես ծայրը։ Նկատում եմ, վոր ձեռքին ինչ-

վոր Թուղթ կա։ Անցկացավ մի պարոն և ինչ-որ մի փոքրիկ դրամ չպրտեց շարմանչիկին. դրամն ուղղակի ընկավ այն արկղի մեջ, վորի մեջ ներկայացված և պուրպիկ-սիրիներով հետ պարող պուրպիկ Ջրանահացին։ Դրամը զրնգաց քիչ չեն, ցնցվեց իմ ժանկիկը, մի վախկոտ հայացք գցեց շուրջը և յերևի կարծեց, թե փողը յես տվի։ Վազեց ինձ մոտ, ձեռիկները դողում են, ձայնիկը դողում է, Թուղթը մեկնեց ինձ ու ասում է.— գնը։ Բայց արի — դե ինչ ասեմ, հայտնի չեն, ելի. այսինքն — բարեբարներ, յերևխաներ մայր եմ, մեռնում եմ, յերեք յերեխաս սոված են, ոգնեցեք. մեռնելուց հետո այն աշխարհում չեմ մոռանա ձեզ, իմ բարեբարներ, այն բանի համար, վոր դուք այժմ չմոռացաք իմ բալիկներին։— Դե, ինչ կա այստեղ. պարզ բան, առորյա բան, բայց ինչ ունեմ, վոր ինչ տամ։ Ու վոչինչ չտվի. Բայց ինչքան սիրտս մղկտաց։ Ջղճուկ յերեխա, ցրտից կապտած, գուշն ու սոված, և սուտ չի ասում, ասածի և վկա սուտ չի ասում, յես այդ բանը դիտեմ։ Բայց մի բան վատն այն է, վոր ինչու՞ այդ անպիտան մայրերը յերեխաներին չենն խնայում և կիսամեռկ այսպիսի ցրտին Թուղթը ձեռքներն են տալիս ու փողոց ուղարկում։ Նա գուցե քիչ հիմար կնիկ է, ընազդուքյուն չունի. բայց նրա համար գուցե քիչ աշխատող ել չկա, ուստի և նատած և ծալապատիկ, գուցե և ճիշտ վոր հիվանդ եւ Բայց Թող դիմի ուր հարկավոր և. ասենք, գուցե քիչ պարզապես խարեբա յե, սոված ու տկլոր յերեխային դիտմամբ ուղարկում է ժողովրդին խաբելու և խեղճ յերեխային ել հիվանդացնելու։ Ցնվ խեղճ յերեխան ել ինչ պիտի սովորի այդ Թղթերով։ Միայն սիրտը պետք է չարուքյամբ լցվի. մանե և գալիս նա, վազում, խնդրում։ Մարդիկ են անցնում, բայց ժամանակ չունենն։ Նրանց սրտերը քար են, խոսքերն անգութ։ Ե՞ինն գնա, կորի, սուտ ես ասում։— Ահա քիչ ինչ և լսում նա ամենքից, և յերեխայի սիրտը լցվում է չարուքյամբ և իզուր դողում է ցրտում խղճուկ, վախեցած յերեխան, քանդած ընկած Թռչնիկի նման։ Նրա ձեռքերն ու վոտները սառչում են, շունչը կտրվում։ Տնտնում ես. ընկ՝ հազում ել և. հիվանդուքյունն ել հետս չե. զզվելի ոձի պես կմտնի նրա կուրծքը, խոկ հետո մենկ ել տեսար մահը յեկավ կանգնեց գլխին վորևե մի հոտած անկյունում, առանց խնամքի, առանց ոգնուքյան — ու զրանով ել կվերջանա նրա ամբողջ կյանքը։ Ահա քիչ կյանքը ինչ տեսակ է լինում։ Ո՜վ, Վարինկա, ծանր է լսել էլ սեր Քրիստոսից. մոտիկ անցնել և, վոչինչ չտալով, ասել էաստված ոգնի։ Դեռ ինչպես

չունէի մի տեսակ ի սեր Քրիստոսի-ն (և ի սեր Քրիստոսի-քն ել գոնադարձ տեսակ են լինում, ջանիկս)։ Մի տեսակը կա, որ յերկար և, միալար, սովորական, բերան արած, ուղղակի մուրացկի է. այս տեսակին դեռ այնքան ել ծանր չեն, որ չես տալիս. գա յերկարամեայ, վաղուցվա մուրացկան է, արհեստով մուրացկան. գա սովոր է. ասում ես՝ կդիմանա և գիտես, թե ինչպես պիտի դիմանա։ Իսկ մի ուրիշ տեսակ էլ սեր Քրիստոսի՛ն ել կա, որն անսովոր է, հոպիտա, սարսափելի,— ա՛յ, ինչպես այսօր, յերբ յերեխայիդ թուղթը վերցնելու վրա եկի, հենց նուրն տեղում ցանկապատի մոտ կանգնած եր մեկը, ամենքից վոդորմելիորեն չեր խնդրում, բայց ինձ ասաց. «Աղա, տուր ինձ մի գրոշ ի սեր Քրիստոսի՛ն. այնպիսի կցկտուր, հոպիտ ձայնով ասաց, վոր չես ցնցվելը ինչ-վոր մի սարսափելի զգացումից, բայց չոմփ. չունեիր։ Իսկ հարուստ մարդին չեն սիրում, վոր աղքատները բարձրաձայն գանգատվում են իրենց թշվառ վիճակից,— իբր թե անհանգստացնում են, գահկա են տանում։ Այո՛, աղքատությունը միշտ ել գահկա տանող է.— չլինի թե նրանց սովի հառաչանքները խանգարում են քնելու

Ստատվանում եմ ձեզ, բալիկս, այս բոլորն սկսեցի նկարագրել մասամբ նրա համար, վոր սիրտս հետ բերեմ, իսկ ավելի նրա համար, վոր ձեզ ցույց տամ իմ շարադրությունների լավ վոճի օրինակը։ Վորովհետև, դուք ինքներդ ել կխոստովանեք, ջանիկս, վոր վերջերս իմ վոճը ձևավորվում եր։ Բայց այժմ ինձ այնպիսի քաղցիծ և պատկ, վոր չես իմ մտքերին մինչև հոդուս խորքն սկսել եմ կասկածել և թեև ինքս ել գիտեմ, վոր այդ կասկածությամբ չեմ հազթի, բայց և այնպես մի տեսակ կարդարացնեմ ինձ։ Ենվ խնդասես, բալիկս, հաճախ ինքս ինձ, առանց վերևն պատճառի, վոշնչացնում եմ, գրոշի արժեք չեմ տալիս ինձ և մի տաշեղից ել ցածր եմ գնում։ Իսկ յերբ համեստությամբ արտահայտվեմ, այդ դեռ նրանից է լինում, վոր աչքս վախեցած է և հետ եմ հրված, ինչպես հենց թենկուզ այն խղճուկ յերեխան, վոր վոդորմելիորեն խնդրեց ինձնից։ Այժմ չես ձեզ որինակի համար, այլաբանորեն կասեմ, ջանիկս. լսեցեք ինձ. պատահում է, վոր վաղ առավոտյան, ծառայությունն չտապիլիս, գնում եմ, թե ինչպես քաղաքը զարթնում է, վեր է կենում, ծխում, յեռում, աղմկում,— և այսպիսի տեսարանին առջև յերբեմն այնպես եմ նվաստանում, վոր կարծես թե մեկը շրմփացրեց հետաքրքիր քթիս, ու սուսուփուս շարունակում եմ ճանապարհս,

ձեռքս քսի տալիս։ Այժմ նայեցեք, ես ինչ եմ կատարվում այդ ան, մրոտ, մեծ, հաստահիմն տնտեսուհի, խորացեք այդ բանում և այն ժամանակ ինքներդ պատեցեք, արդարացրեք իմ արդյունք, որ չեմ ուշեղից եղ ցածր եղի գնում և անարժան վերաբերվում չիմ- վում։ Նկատեցեք, Վարինկա, որ չես այլաբանորեն եմ խոսում, այլ ուղղակի իմաստով։ Հիմա տեսնենք՝ ինչ եմ կատարվում այդ տնտեսուհի։ Այնտեղ որտեղ մրոտ ու կեղտոտ է, որտեղ խոնավ խորա- քնում, որը կարիքի պատճառով ընակարան եմ համարվում, որտեղ մի արհնատավոր քնից զարթնում եմ, իսկ կերազում ամ- բողջ տիշերը, որինակի համար ասենք, տնտել եր այն կոշիկները, որոնց կաշին կերակ կարել եր պատահմամբ, կարծես թե մարդ անպատճառ պետք է այդպիսի հիմար բան տեսնի կերազում։ Ասենք, նա արհնատավոր է, նա կոշկակար է, նրան ներելի չե, որ մենակ իր առարկայի մասին մտածի։ Նրա կերևակայությունը ծվում, լաց են լինում և ուրախ են։ և մենակ կոշկակար- ները չեն, որ կերբեմն այդպես են վեր կենում քնից, բայց այս դեռ եղի վնաս չունի, և այս մասին չարժեր պրել, բայց ահա թե ինչպիսի հանգամանք է դուրս գալիս, ջանիկս, հենց նույն այդ տան մեջ, մի հարկ վերև թե նեղքան, մոսկվիտի պատասներում և ամենահարուստ մի անձնավորություն պիտերը գուցե թե կերա- զում տեսավ նույն կոշիկները, այսինքն՝ ուրիշ տեսակ, ուրիշ ձևի կոշիկներ, բայց և այնպես կոշիկներ. վորովհետև իմ այստեղ հաս- կացած իմաստով, ջանիկս, մենք ամենքս դուրս ենք գալիս մի քիչ կոշկակարներ։ Ճիշ այս էլ դեռ վնաս չունի, բայց միայն վատն այն է, որ մեզ չէ այդ ամենահարուստ մարդու մոտ, մարդ չկա, որը փոխարեն ներա ականջինն, թե գրավական և այդ մասին մտածենա, մենակ քո մասին մտածենա, մենակ քեզ համար ապրենա. դու կոշկակար չես. կերևակայեիր առաջ ևն և հինգ ուսուցչ բան չի խնդրում. մարիկ արա շուրջդ, հոգացողու- թյուններին համար ավելի ազնիվ բան չես գտնում, քան քո կոշիկները։ Ահա թե ինչ կեղ ուզում ասել ձեզ այլաբանորեն, Վարինկա։ Այս գուցե թե չափազանց ազատ միտք եր, բայց այս միտքը կերբեմն լինում է, կերբեմն գալիս և այն ժա- մանակ ակամա մարդուս սրտից գուրս է պրծնում ջնջում խոսքով Ուսաին և հարկ չկար ինքս ինձ գրոշի արժեք չտալու, վախենա- լով ազմուկից ու գորգոռոցից։ Ուրեմն կեղրակսկնում ներանոյ, ջանիկս, վոր գուք գուցե թե մտածեք, թե կես գրպարտությունն եմ ասում, կամ թե մելամաղձոտությունն է կնկել վրաս, կամ թե

այս բանը չես վորևե գրքից եմ արտագրել։ Վո՛չ, չանիկս, սխալվում եք, այդպիսի բան չկա. գրպարտությունից զզվում եմ, մեղամաղձոտությունն էլ չկա՛ և վո՛չ մի գրքից էլ վո՛չինչ չեմ արտագրել — ահա թե ինչ։

Տուն չկա հոգևկան սխուր տրամադրության մեջ, նստեցի անգանի մոտ, թևքոցս տաքացրի և պատրաստվում եյի մի-յերկու բաժակ թեյ խմելու։ Մեկ էլ տեսնում եմ՝ մոտս է ինձ մոտ Գորշկովը, մեր աղքատ կենդոլը։ Դեռ առավոտը նկատեցի, վոր նա շարունակ ինչ-վոր մտա-մտա և անում կենդոլների շուրջը և ինձ էլ ուզում եր մոտենալ։ Գնաք և ասեմ, չանիկս, վոր նրանց տրտունջը իմ տպրտանքից էլ շատ ու շատ վատ եւ։ Ի՞նչ եմ ասում. կինն ունի, յերեխաներ ունի։ Այնպես վոր, չես վոր Գորշկովը լինելի, չեմ իմանում ճշմարիտ ինչ պիտի անեյի նրա տեղ։ Այսպես ուրեմն մոտս իմ Գորշկովը, գլուխ և տալիս, աչքերը, ինչպես և մի՛շտ, ճտռտմել են, վոտները դես-դեն և շարժում ու վո՛չ մի խոսք չի կարողանում ասել։ Նստեցրի աթոռի վրա, ճիշտ և, կոտրած աթոռ։, բայց, ինչ արած, ուրիշը չկար։ Թեյ առաջարկեցի։ Ներողությունն ընդունեց, յերկար ժամանակ ներողություն եր խընդրում, բայց և այնպես, վերջիվերջո, բաժակը վերցրեց։ Ուզում եր սանդ շաքարն էլ ասել, սկսեց նորից ներողություն խնդրել, բերը չես սկսեցի հավատացնել նրան, վոր շաքար պետք և վերցնել. յերկար ժամանակ վիճում եր, հրաժարվում, վերջապես իր բաժակի մեջ ջրից ամենափոքրիկ մի կտոր և սկսեց հավատացնել, թե թեյը սովորականից դուրս քաղցր եւ Ա՛հ, մինչև վեր սատիճանի նվաստացման և հասցնում մարդկանց աղքատությունը։ — Ե՞հ, ինչ կա, ինչ կհրամայեք — ասացի յես նրան։ — Ել ինչ կա, բարեկամ Մակար Ալեքսեևիչ, — ասաց. — բանս ես պես ու նապես և. ի սեր աստծու, ոգնեցեք իմ թշվառ ընտանեքին, կինս, յերեխաներս, ուտելու բան չկա, յերեսակայեցեք, թե մի հայր, այնքա՛ն յես, ինչ պիտի զգաց, վոր այս տեսնի նրան։ Ուզում եյի խոսեմ, բայց նա խոսքս կտրեց. — Յես տեսնում եմ, ամենքից վախենում եմ այստեղ, Մակար Ալեքսեևիչ, այսինքն վո՛չ թե վախենում, այլ այնպես, գիտեք, քաշվում եմ. նրանք բոլորն էլ հպարտ և քթները վեր ցցած մարդիկ են։ Յես, տեսնում և, ձեզ նեղություն չեյի տա. գիտեմ, վոր դուք էլ անախորժություններ եք ունեցել, գիտեմ, վոր դուք շատ տալ չեք էլ կարող, բայց գոնե մի քի՛չ վոգ տվեք. և նրա համար եմ, տեսնում և, համարձակվել խնդրելու ձեզ, վոր ճանաչում եմ ձեր քարի սիրտը,

դիտեմ, որ դուք ինքներդ էլ կարիքի մեջ եք լինել և հիմա լել կարիքի մեջ եք, և այդ պատճառով էլ ձեր սիրտը կարեկցությունն և զգուշություն ցնդրպահանց նրանով, որ ասաց, թե ներեցեք իմ հանդգնությունը և անքաղաքավարությունը, Մակար Ալեքսեևիչ։ — Ես պատասխանում եմ նրան, թե հոգով չափ ուրախ կլինեյի, բայց վոչինչ չունեմ, բոլորովին վոչինչ։ — «Մակար Ալեքսեևիչ, ասում և նա ինձ, լես շատ չեմ էլ խնդրում, իսկ իմ բանը եսպես ու եսպես և (այստեղ նա կարմրեց) — կինս, ասում և, յերեխաներս սոված են — գոնե մի տասը կոպեկ։ Ես, այստեղ արդեն սիրտս մղկտաց։ Չէ՛, ասացի մտքումս, ինձնից էլ անց են կացել։ Իսկ մտա ծածկել եր ընդամենը քսան կոպեկ, հույս էլ այդ քսան կոպեկի վրա լեր. ուզում եյի վազն իմ ծայրահեղ կարիքների վրա ծախսել։ — Վա՛յ, սիրելիս, ասում եմ, չեմ կարող, բանս եսպես ու եսպես եւ։ — «Ներեցեք եմ, Մակար Ալեքսեևիչ, գոնե ինչքան ուզում եք, ասում և, գոնե տասը կոպեկ։ Արևդիցս հանեցի ու տվի իմ քսան կոպեկը, ջանիկս. այսպես թե այնպես, բարի գործ եր։ Ե՛հ, աղքատություն, աղքատություն։ Ասածկության բռնվեցի նրա հետ. այդ ինչպես և, ասում եմ, որ այդպես կարիքի մեջ եք և դեռ այդպիսի կարոտության մեջ էլ արծաթ հինգ ռուբլով սեռյակ եք վարձել։ Նա ինձ բացատրեց, թե կես տարի առաջ և վարձել և փողը վճարել առաջուց լերեք ամսվա համար. բայց հետո հանգամանքներն այնպես են դասավորվել, որ խեղճը ծնացել և ձեռքերը ծոցին։ Սպասում և լեղել, թե իր գաղը մինչև այդ ժամանակ կվերջանա։ Իսկ նրա գաղն անհաճելի գաղ եւ նա, Վարլինկա, ինչ-որ մի բանի համար գաղի տակ եւ Գանգատ ունի ինչ-որ մի վաճառականի հետ, որը պետական ճուրդի մեջ խաբեբայություն և արել. խաբեբայությունը բացվել և, վաճառականին գաղի լեն տվել, իսկ նա իր ավազակային գործի մեջ խառնել և և Գորշկովին, որը նույնպես ընկել և մի տնսակ պատահմունքով ձիշտը որ ասենք, Գորշկովը մեղավոր և, որովհետև անփույթ և լեղել, շրջահայաց չի լեղել և անհերքելի կերպով աչքից բաց և թողել պետական գանձարանի շահերը։ Մի քանի տարի լե արդեն, որ գաղը շարունակվում և, շարունակ գանգատն արզելքներ են պատահում Գորշկովի դեմ։ — «Ինչ անպատվություն համար, որ բարդում են ինձ վրա, — ասում և ինձ Գորշկովը, — մեղավոր չեմ, ամենևին մեղավոր չեմ, խաբեբայության և կողոպտման համար մեղավոր չեմ։ Այս գործը նրան մի քիչ արատավոր էլ և. նրան արձակել են ծառայությունից

և քիչ չէին պահել, որ նա հիմնովին մեղավոր է, բայց մինչև իր կատարելապես արդարացումը նա մինչև այժմ չի կարողանում վանատականից ստանալ իրեն հասանելիք ինչ-որ մի խոշոր գումար, որ դատարանով պահանջում է ներքինից։ Նա նրան հավատում է եմ, բայց դատարանը նրա լոկ խոսքին չի հավատում. գործն այնպիսի գործ է, այնպես խճճված ու մճճված, որ հարյուր տարուն էլ չես կարող հետ տալ հենց որ կծիկի քիչը մինչ հետ են տալիս, վանատականը նոր ու նոր կշկուռներ է ավելացնում։ Նա ի սրտե կարեկցում եմ Գորշկովին, բայց, ցավում եմ նրա համար։ Մարդն առանց պաշտոնի չի. անհուսալիությանն պատճառով ոչ մի տեղ չի ընդունվում. ունեցած պահուրը կևրել են. գործը խճճված է, մինչդեռ ապրել հարկավոր է. քարտեր պետք էլ, բոլորովին անհարկավոր տեղը, յերեխա չի ծընվել, — այսանդ էլ նոր ծախսեր, տղան հիվանդացավ — ծախսեր, մեռավ — ծախսեր, կինը հիվանդ է. ինքը Գորշկովը տկար է, ինչ-որ հնացած հիվանդությամբ. մի խոսքով մարդը քանդվել, քարն է քանվել բոլորովին։ Սակայն, ասում է, քեն ապատում է, որ այս ուրեք նպաստավոր լուծում կստանա իր գործը և քեն այժմ արդեն ոչ մի կասկած չկա դրանում։ Ցավում, ցավում շատ եմ ցավում նրա հնամար, ջանիկս։ Նա նրան խրատեսացին կորած, աչքը վախեցած մարդ է. հովանավորության պետք ունի, դրա համար էլ չես խրատեսացի նրան։ Դե, Աստ քարով, ջանիկս, Տրխատոսը ձեզ հետ, վոդջ Աստ։ Աղաչյակդ իմ, հենց վոր հիշում եմ ձեզ, վոնց վոր ապեղանի դնես իմ հիվանդ հոգուն, և քեն տանջվում եմ ձեզ համար, բայց և այնպես ձեզ համար տանջվելն էլ քեֆ ուրիշ է և ինձ համար։

Ձեր խոհական քարեկամ

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 9.

Ջանիկս, Վարվառա Ալեքսեևնա։

Գրում եմ ձեզ՝ ինքս ինձ կորցրած։ Ես ամրողջովին հուզված եմ մի սոսկալի պատահարից։ Գլուխս պտտվում է։ Զգում եմ, քեն շուրջս ամեն ինչ պտտվում է։ Ա՜խ, բալիկս, որ իմանաք, քեն այժմ ինչ պիտի պատմեմ ձեզ։ Այս բնչպես եր, որ մենք չեյինք նախազգում այդ։ Վհչ, չես չեմ հավատում, քեն նախազգացած չենք։ Այս բոլորը սիրտս գուշակում եր առա-

ջուց։ Այդ ամենը լսելի չեր նախորոք իմ սրտին։ Նույնիսկ այս որերս այդպիսի մի բան տեսել եմ չերազումս։

Ահա քե ինչ պատահեց։ — Պատմեմ ձեզ առանց վոճի, այլ այնպես, ինչպես լեզվիս կգա։ Այսոր գնացի պաշտոնիս ճեմելու, նստել, գրուժ եմ։ Պետք և գիտենաք, ջանիկս, վոր չես չերնիկ ել եմի գրուժ նույնպես։ Այսպես, ուրեմն, չերնիկ մոտենում և ինձ Տիմոֆեյի Իվանովիչը և անձամբ բարևհաճում և պատվիրել, քե ահա այս թուղթը կարևոր թուղթ և, շտապողական։ Արտագրեցեք, ասում և, Մակար Ալեքսեևիչ, վորքան կարելի չև մաքուր, շտապ և խնամքով. այսոր պետք և ստորագրվի։ — Պետք և նկատեմ ձեզ, հրեշտակիկս, վոր չերնիկ հալս հալ չեր, վոչ մի բանի չեյի ուշում նայել. այնպիսի տխրություն, քախիծ եր պատել ինձ։ Միտս սառնություն եր տիրել, հոգուս վրա խավար եր իջել։ Մաքուժս շարունակ դուք եյիք, իմ խեղճ պայծառիկս։ Այսպես, ուրեմն, չես ել սկսեցի արտագրել. արտագրեցի մաքուր, լավ, միայն քե, չգիտեմ ինչպես ասեմ, վոր ավելի ճիշտ լինեի, ինքը ստատանեմ ինձ մոլորեցրեց, քե գաղտնի ճակատագիրն եր այդպես վորոշել, կամ քե պարզապես այդպես պետք և լիներ, — մի ամբողջ տող բաց եյի թողել, ուստի և տեքը գիտեմ, քե ինչ միտք եր դուրս չեկել. ուղղակի վոչ մի միտք ել չեր դուրս չեկել։ Այդ պատճառով թուղթը չերնիկ ուշացավ և նորին գերազանցությանը միայն այսոր ստորագրելու։ Ես, բանից անտեղյակ, այսոր գնում եմ սովորական ժամին և տեղավորվում եմենչյան Իվանովիչի կողքին։ Պետք և նկատեմ ձեզ, քանիկս, վոր վերջին ժամանակս չես սկսել եմ առաջվանից կրկնակի ավելի քաշվել և ամաչել։ Վերջին ժամանակս վոչ վոքի չերեսին չեյի ել նայում։ Հենց վոր մեկի աչուքը ճրճռաց, չես տեղն ու տեղս ցամաքում եյի, վոչ մնատած եյի, վոչ կենդանի։ Ահա ճիշտ այդպես ել այսոր. սուսուփուս, առանց ձայն-ծպուտ հանելու նստած եյի ինձ համար կծկված, այնպես վոր Ծնֆիմ Ակիմովիչը (այնպիսի մի քերան-պատառած մարդ, վորի նմանը երանից առաջ ել չի չեղել աշխարհիս չերեսին) ասաց այնքան բարձր, վոր ամենքն ել լսեցին. — Մակար Ալեքսեևիչ, ասում և, այդ ինչու՞ այսոր նստած եք այդպես ու-ու-ու, — և հետո ել զեմքն այնպես ծամածռեց, վոր ամենքն ել, ովքեր կային նրա և ինձ մոտ, ծիծաղից թուլացան և, ինարկե, իմ հաշվին։ Ու սկսեցին, ու սկսեցին։ Ես ականջներս ել փակեցի, աչքերս ել փակեցի, նստած եմ ինձ համար, չեմ շարժվում։ Այդպես և արդեն իմ սովորությունը. այդ-

այնա ներանք շատով են ձեռք քաշում ինձնից։ Հանկարծ լսում եմ ազմուկ, վազվզոց, չիրք, լսում եմ — չեն խաբում արդյոք ականջ-ներս — ինձ են կանչում, ինձ են պահանջում, Դևուշկինին են կանչում։ Սիրտս զորաց կրծքիս մեջ ու ինքս էլ չգիտեմ ինչից վախեցա. մենակ այն գիտեմ, որ կյանքիս մեջ չերբեք այդպես չեմ վախեցել։ Մեխվեցի աթոռիս ու մոքսես ես վոչինչ չգիտեմ, մոքսես ես չեմ։ Բայց ահա նորից սկսեցին, ձայները մոտե-նում են ու մոտենում։ Ահա արդեն ականջիս տակ են կան-չում — Դևուշկինին, Դևուշկին, վիրտեղ ե Դևուշկինը։ Աչքերս բաց-բացում եմ. առջևս ցցված ե Ցեվստաֆիյ Իվանովիչը. աստմ ե՛ Մակար Ալեքսեևիչ, գնացեք նորին գերազանցութեյան մոտ շատուց, թղթի պես ինչ-որ տյին ձեզ բերել։ Մենակ այս եր ասածը, բայց այս էլ բավական եր, չե՞, ջանիկս։ Մեռա, հավատա ասածը քրտինք պատեց, գլացուքներից գրկվեցի, գնում եմ, ուզ-պակի վոչ կենդանի չեմ, վոչ մեռած։ Գնում եմ մի անհյակով, մյուս անհյակով, չերբորդ անհյակով, առանձնասանհյակ — ներկա-յացա։ Մի գրական հագիվ, քե ինչի մասին եյի մտածում այն ժամանակ, չես ձեզ տալ չեմ կարող։ Տեսնում եմ, կանգնած ե նորին գերազանցութեյանը, նրա շուրջն էլ՝ նրանք քոլորը։ Կար-ծեմ գլուխ չտվի, մոռացա։ Վախեն այնպես եր բռնել ինձ, վոր շրթունքներս էլ եյին դողդողում, վոտներս էլ եյին դողդողում։ Ցեվ պատճառը մենք չեր, չերկու չեր, ջանիկս։ Նախ, քաշվում եյի։ Նայեցի աչ կողմը հայելու մեջ և ուղղակի քիչ ճնաց խե-լագարվեյի այն բանից, ինչ վոր տեսա այնտեղ։ Ցեվ չերկ-րորդ, չես միշտ այնպես եյի անում, վորպես քե աշխարհիս չե-րեսին չկամ։ Այնպես վոր հագիվ քե նորին գերազանցութեյանը հայտնի լիներ իմ գոյութեյունը։ Դուցե քե այնպես, անցորդակի չտած լիներ, վոր իրենց գերատեսչութեյան մեջ Դևուշկին կա, բայց նրա հետ սրտանց ավելի մոտիկ հարաբերութեյուններ մեջ չեր մտել։

Սկսեց զայրանալ. «Այս ինչ եք արել, պարոն։ Վիրտեղ եյին ձեր աչքերը, հարկավոր քուղթ ե, շտապողական, իսկ դուք վերց-նում, փչացնում եք։ Ցեվ դուք էլ այդ ինչպես եք թույլ տվել»։— այստեղ նորին գերազանցութեյանը դիմեց Ցեվստաֆիյ Իվանո-վիչին։ Ցես միայն լսում եմ, քե ինչպես խոսքերի հնչյուններն են հասնում ինձ. — «Անփութութեյուն, անշրջահայեցողութեյուն։ Անախորժութեյուններին մեջ եք գցում»։ — Բերանս բաց արի ինչ-վոր բան ասելու։ Ուզում եյի ներողութեյուն խնդրեմ, չկարո-

ղացա, փախչել — չհամարձակվեցի, և այստեղ... այստեղ..., ջանիկս, այնպիսի բան պատահեց, որ կես հինգ կել գրիչս հագիվ եմ բռնում ամոքից։ — Կոճակս — այ սատանան տանի — կոճակս, որ կախ եր ընկած թելից, հանկարծ պոկվեց, թռավ, վեր ու վար ցատկեց (յերևի պատահմամբ ձեռքս դիպել եր), գրնգաց և գլորվելով գնաց ընկավ ուղղակի, այո, ուղղակի նորին գերազանցությանն վոտները տակ։ Անթիթալ լինեի ճիվ այս ընդհանուր լուծյան մեջ։ Ահա այս եր իմ բոլոր արդարացումը, ներողություն խնդրելը, բոլոր պատասխանը, բոլորը, ինչ որ պատրաստվում եի ասելու նորին գերազանցությանը։ Հնամանքները ստակալի եին։ Նորին գերազանցությունն խստությունը ուշադրությունն դարձրեց իմ կերպարանքին և հագուստին։ Հիշեցի, թե ինչ տեսա հայելու մեջ։ Առաջ ընկա, որ կոճակը բռնեմ։ Անհնարություն եր յեկել վրաս։ Գոտցա, ուզում եմ վերցնեմ կոճակը — գլորվում է, պտույտ է գալիս, չեմ կարողանում բռնել, մի խոսքով ճարպիկությանը կողմից ել աչքի ընկա։ Այստեղ արդեն զգում եմ, որ վերջին ուժերս հատնում են, որ ամեն, ամեն բան կորած է արդեն։ Ամբողջ վարկս կորած է, ինքս ամբողջապես կորա, վերջացա։ Իսկ մյուս կողմից ել, վորտեղից վորտեղ, յերկու ակնթարթում ել սկսեցին դրդռալ թևերիցս և ծալդոնիի իմ հասցեին ասած խոսքերը։ Վերջապես կոճակը բռնեցի, վերկացա և մնկ վոր հիմարացել եյի, գոնե կանգնեցի շիտ-շիտակ, ձեռքերս ցած։ Ջե, վերտեղ։ Սկսեցի կոճակը կորսված թևերին կպցնել, կարծես թե կկպչեր. ու դեռ ժպտում ել եմ, դեռ ժպտում ել եմ։ Նորին գերազանցությունն սկզբում յերևույթը շուռ ավավ, հետո նորից նայեց ինձ — լսում եմ, ասում է Ցնվատաֆիչ Իվանովիչին. «Այդ ինչ է... մնկ նայեցեք ինչ դրության մեջ է... ինչ է այդպես... ինչ է դա...»։ — Ախ, բալիկս, ել խոսք կա, որ ասեմ։ Աչքի ընկա, չե՞։ Լսում եմ, Ցնվատաֆիչ Իվանովիչն ասում է. «Ընկաված չե, որ մի բանում նկատվածչե, որ մի բանում նկատվածչե, վարքով որինակելի յե, ոռճիկը բավարար. ըստ կոպարի...»։ «Դե, բնթնացրեք գրան մի կերպ, — ասում է նորին գերազանցությունը։ — Տվեք գրան հա գլխից...»։ «Վերցրել է, — ասում են, — վերցրել, ահա այսքան ժամանակվանը հա գլխից է վերցրել։ Ցերևի հանգամանքներն այդպես են, իսկ վարքը լավ է և նկատվածչե, որ մի ժամանակ նկատվածչե։ Ցնա, հրեշտակիկդ իմ, այրվում եյի, դժոխային կրակի մեջ այրվում։ Ցնա մեռնում եյի։ «Դե, ասում է նորին գերազանցությունը բարձ-

բառերն, ջուտով արտադրել Դևուշկին, մոտ յեկեք այստեղ, նորից արտադրեցեք առանց սխալի. բայց լսեցեք...». այստեղ նորին գերազանցությունը դարձավ մյուսներին, զանազան հրամաններ տվավ, և ամենքը ցրվեցին։ Հենց վոր նրանք դուրս գնացին, նորին գերազանցությունը չտապով հանում է թղթապանակը և նրա միջից մեկ հարյուրանոց, «Ահա, ասում է, ինչով վոր կարող եմ, համարեցեք, ինչ ուզում եք, վերցրեք...» ու ձեռքս կոխեց։ Ճնա, հրեշտակիկդ իմ, ցնցվեցի, սիքողջ հոգիս անզգաման յեղավ. չեմ իմանում, ինչ պատահեց ինձ. ուզում եյի նրա ձեռքը բռնել Իսկ նա սիքողջովին կարմրեց, ազատվեցավ իմ, և, — ահա այստեղ արդեն չես մի մազաչափ անգամ չեմ չեղվում ճշմարտությունից, բալիկս, — առավ իմ անարժան ձեռքը և սիրու սեղմեց, այն, այն, առավ և սիրու սեղմեց, կասես իրեն հավասար լինելի, կասես չես եղ իր նման գեներալ լինելի։ «Գնացեք, — ասում է, — ինչով վոր կարող եմ... Մխալներ մի անեք, իսկ այժմ մի կերպ մնդքը կես անեցեք»։

Հիմա, ջանիկս, ահա քեզ ինչպես եմ վճռել. ձեզ ու Ծեդրոլային խնդրում եմ, և յեթե չես գավակներ ունենալի, ապա նրանց եղ հրեամայելի, վոր աղոթք անեն աստծուն, այսինքն՝ ահա քեզ ինչպես, հարկավոր հոր համար աղոթք չանեն, այլ նորին գերազանցության համար ամեն որ և հավիտյան աղոթեն։ Դարձյալ կասեմ, ջանիկս, և այս հանդիսավոր կերպով եմ ասում. — լսեցեք ինձ, ջանիկս, լավ լսեցեք — յերդվում եմ, վոր ինչքան եղ վոր մեր բռլտոության դաժան որերին կործանվում եյի չես հոգեկան վշտից, նայելով ձեզ, ձեր գժբախտությունների և ինձ, իմ ստորացմանը և անընդունակությանը, չնայելով այս բոլորին, յերդվում եմ ձեզ, վոր հարյուր ռուբլին ինձ համար այնքան քանդ չե, վորքան այն, վոր նորին գերազանցությունն ինքը ինձ, ծղոտիս, արբեցողիս, բարեհաճեց սեղմել իմ անարժան ձեռքը։ Դրանով նա ինձ վերադարձրեց ինձ։ Այս վարմունքով նա իմ հոգուն հարություն տվավ, հավիտյանս հավիտենից քաղցրացրեց իմ կյանքը, և չես հասատատ համոզված եմ, վոր վորքան եղ վոր մեղավոր եմ ամենաբարձրյալի առաջ, բայց իմ աղոթքը նորին գերազանցության յերջանկության և քարտության համար կհասնի նրա աթոռին . . . . . .

Ջանիկս Ճնա այժմ հոգեկան ապրանքների այլայլման մեջ եմ, սրտապնդվելու մեջ։ Սիրտս արտիում է, ուզում է դուրս պրծնել կրծքիցս։ Ճեվ ինքս ամբողջապես մի տեսակ կարծես քե

թուլացել եմ։ — Ուղարկում եմ ձեզ 45 ռուբլի աստիճան, 20 ռուբլի տանտիրուհուն եմ տալիս, ինձ մոտ թողնում եմ 35 ռուբլի, վորից 20-ով հազուստս կնորոգեմ, իսկ 15-ը կթողնեմ ապրուստիս համար։ Բայց թե հիմա, առավոտվա այդ բոլոր տպավորությունները ցնցել են ամբողջ նյութությունս։ Կպատկեմ։ Աստված, հանգիստ եմ, շատ եմ հանգիստ։ Միայն թե հոգիս և սրտրվում, և լսում եմ, վոր այնտեղ, խորքում, հոգիս դողում է, թպրտում, շարժվում։ — Կգամ ձեզ մոտ, իսկ այժմ ուղղակի հարբած եմ այդ բոլոր զգացողություններից... Աստված տեսնում է ամեն բան, ջանիկս, դուք իմ անգին աղաչեցակ։

Ձեր արժանավոր բարեկամ՝

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 10.

Իմ սիրելի Մակար Ալեքսեևիչ։

Ցնս անչափ ուրախ եմ ձեր բախտավորության համար և գիտեմ գնահատել ձեր ժնժավորի առաքինությունները, իմ բարեկամ։ Այդպես ուրեմն, այժմ կհանգստանաք ձեր զարդերից։ Միայն թե, ի սեր աստծու, նորից դատարկ տեղը փող մի ծախսեք։ Ապրեցեք խաղաղ, վորքան կարելի կե համեստ, և հենց այս րոպեից սկսեցեք միշտ վորևե բան հետ գցել, վորպեսզի նորից դժբախտությունները հանկարծակի չբերեն ձեզ։ Մեր մասին, ի սեր աստծու, մի անհանգստանաք։ Ցնս ու Ֆեդորան մի կերպ կապրենք։ Ինչու՞ եք մեզ այդքան փող ուղարկել, Մակար Ալեքսեևիչ։ Բոլորովին հարկավոր չե մեզ։ Մենք մեր ունեցածով էլ գոհ ենք։ Ճիշտ է, շուտով մեզ փող կհարկավորվի այս քնակարանից տեղափոխվելու համար, բայց Ֆեդորան հույս ունի մեկից մի ինչ-վոր հին պարտք առանալու։ Սակայն, քսան ռուբլի թողնում եմ ինձ մոտ ծայրահեղ կարիքների համար։ Մնացածը հետ եմ ուղարկում ձեզ։ Փողը պահեցեք, ի սեր աստծու, Մակար Ալեքսեևիչ։ Մնաք բարով։ Ապրեցեք հիմա հանգիստ, առողջ և ուրախ կացեք։ Ավելի շատ կգրեմ ձեզ, բայց սարսափելի հոգնածություն եմ զգում, յերեկ ամբողջ որը չեմ վերկացել անկողնից։ Լավ եք արել, վոր խոստանում եք գալ։ Ցեկեք, ի սեր աստծու, Մակար Ալեքսեևիչ։

Վ. Դ.

Իմ սիրելի Վարվառա Ալեքսեևնա։

Ազաչում եմ ձեզ, բալիկս, մի բաժանվեք ինձնից հիմա, որ ես կատարելապես յոլջանիկ եմ և ամեն բանից գոհ։ Աղաչեցակդ իմ Դուք ձնդրայլին ականջ մի դնեք, իսկ յես ամեն բան, ինչ որ հաճելի չի ձեզ, կանեմ. լավ կպահեմ ինձ, հենց միայն թ հարդանա ներին գնդապանցուհյան ինձ լավ և անբիծ կպահեմ. մենք նորից բախտավոր նամակներ կգրենք իրար, կհայտնենք իրար մեր մաքերը, մեր ուրախութիւնները, մեր հոգսերը, յեթե հոգսեր լինեն. կապրենք, յերկուսով համաձայն և բախտավոր։ Կգրպդվենք գրականութեամբ... Հրեշտակիկդ իմ, Իմ վիճակի մեջ ամեն բնչ փոխվել և ամեն բնչ դեպի լավն և փոխվել։ Տանտիրուհին ավելի դիջող և դարձել, Քերեզան խելոքացել և, նույնիսկ ինքը Յալդոնին մի տեսակ շարժուն և դարձել։ Բատարդյանի հետ հաշտվել եմ։ Ինքս դնացի նրա մոտ, ուրախութիւնից գրդվածե նա, հավատացնը, չանիկս, լավ մարդ և, և ինչ որ նրա մասին ասում եյին վատ, այդ բոլորը դատարկ բան եր Ձես հիմա տեսա, որ այդ բոլորը դրպարտութիւն եր և նա ամենևին մոքում էլ չի անցկացրել մեզ նկարագրելու. Նա ինքն ասաց ինձ այդ։ Գարդաց ինձ մոտ իր նոր գրվածքը։ Իսկ որ այն ժամանակ ինձ լովելաս անվանեց, այդ ամենևին էլ հայհոյանք չեն կամ որևե անվայել անուն. Նա բացատրեց ինձ։ Այդ բառ առ բառ ոտարագրի լեզվից և վերցրած և նշանակում է ժիր տղա և յեթե ավելի գեղեցիկ, ավելի գրականորեն ասենք նշանակում է՝ ներ, տղա, կաբա՞ն, — ահա քե ինչ և վոչ քե ուրիշ վորևե բան։ Անմեղ հանած և յեղել, հրեշտակիկդ իմ։ Իսկ յես, ուշտաս, նեղացա, վորովհետև հիմար եյի։ Այնպես վոր հիմա ներողութիւն խնդրելի նրանից... Ձեվ յեղանակն էլ ինչ լավ և այսոր, Վարինկա, ինչ հրաշալի ձիշտ և, առավոտյան մի քիչ ցուրտ եր, անձրև են մաղում։ Վոչինչ։ Բայց ոդը թարմացավ մի քիչ։ Գնացի կոշիկներ առնելու և գարմանալի կոշիկներ առա։ Անցկացա Նևսկով։ «Пчелка»-ն կարդացի։ Հմա Գլխավորը մոռանում եմ ձեզ պատմել.

Գիտեք ինչ։

Այս առավոտ խոստում եյի Ցեմելյան Իվանովիչի և Ակսենտիյ Միխայլովիչի հետ նորին գերազանցութեան մասին։ Այո, Վարինկա, նա մենակ ինձ հետ չի այդպես վոդորմածաբար վարվել։ Նա մենակ ինձ համար չի բարերար, իր սրտի բարութեամբ ամբողջ աշխարհին և հայտնի։ Շատ տեղերից են նրա պատվին

վատաբանությունները վեր առաքվում և շնորհակալության արցունքները թափվում։ Նրա մոտ մի վորբ աղջիկ և չեղել դաստիարակվելիս։ Բարեհաճել և մարդի տալ նրան. ամուսնացրել և մի հայտնի մարդու հետ, վորն իրեն իսկ՝ նորին գերազանցության մոտ և հատուկ հանձնարարություններ և կատարում։ Մի այրի կնոջ վորդուն տեղավորել և մի ինչ-վոր դիվանատան մեջ և ուրիշ շատ դանազան բարեգործություններ և արել։ Ճիա, Ջանիկա, իմ պարտքը համարեցի այդտեղ նեթե իմ լուսյան ել զցել։ Ի լուր ամենացուն, պատմեցի նորին գերազանցության վարմունքը, յես բոլորը պատմեցի նրանց և վոչինչ չթաքցրի։ Ամոթս գրպանս դրի։ Ի՞նչ ամոթ, ի՞նչ ինքնասիրություն այդպիսի հանգամանքում։ Հենց այդպես ել սաստի լսելի կերպով — թող փառավոր լինեն նորին գերազանցության գործերը։ Ծոստում նյի գրավիչ կերպով, տաք-տաք նյի խոստում ու չեյի կարմրում, ընդհակառակը, հպարտանում նյի, վոր առիթ ունեյի այդպիսի բան պատմելու։ Ճիա ամեն բանի մասին պատմեցի (ձեր մասին միայն խոհեմաբար լռեցի, Ջանիկա), թե իմ տանտիրուհու մասին, թե Ծալդոնիի մասին, թե Բատագյայի մասին, թե կոշիկներիս մասին, թե Մարկովի մասին — ամեն բան պատմեցի։ Մի քանիսը ծիծաղում եյին, հա, ճիշտ և, նրանք ամենքն ել ծիծաղում եյին։ Միայն, յերևի թե իմ կերպարանքի մեջ վորևե ծիծաղելի բան եյին գտել, կամ թե իմ կոշիկների մասին — հենց կոշիկներիս մասին։ Իսկ վորևե վատ մտադրություններից չեր լինել։ Այդ այդպես և, ջահելություն և, կամ նրա համար, վոր նրանք հարուստ մարդիկ են, բայց վատ, չար մտադրությամբ վոչ մի կերպ չեյին կարող իմ ճառը ծաղրել։ Այնինքն վորևե բան նորին գերազանցության վերաբերյալ — այդ վոչ մի կերպ չեյին կարում անել նրանք։ Ջե՛, Վարինկա։

Ճիա մինչև հիմա յել վոչ մի կերպ չեմ կարողանում մի տնական ուշքի գալ, Ջանիկա։ Այս բոլոր անցքերն այնպես են շփոթեցրել ինձ։ Փայտ ունե՞ք դուք։ Ձեզ.չմրսացնեք, Վարինկա, դժվար չե մրսելը։ Ո՛հ, Ջանիկա, դուք ձեր տխուր մտքերով սպանում եք ինձ։ Ճիա աղոթում եմ աստծուն, ինչպես եմ աղոթում ձեզ համար։ Ուրինակ, բերեք գուլբաններ ունե՞ք կամ տաք հագուստից վորևե բան։ Տեսեք, աղաչեյակը իմ, յերեթե վորևե բան հարկավոր լինի ձեզ, ի սեր աստղածողի, դիմեցեք ինձ։ Թե չե կհանդգնամ։ Ուղղակի յեկեք ինձ մոտ։ Հիմա վատ ժամանակներն անցել են։ Իմ մասին մի անհանգստանաք։ Առաջներս ամեն բան պարզ, լավ եր

Բայց ինչ վատ ժամանակներ էին, Վարինկա՛, Ծ՛ո, միևնույն է, անցան։ Տարիները կանցնեն, այդ ժամանակների համար էլ հոգս կքաշենք։ Հիշում եմ ջահելությանս տարիները։ Չե՞ գիտե, հա՛, Ներքևի կռպեկ էլ չէին ունենում։ Հագիս բան չունեի, ոտաբաց էի, բայց ուրախ։ Առավոտյան կանցնեի Նեվսկով, մի սիրունիկ դեմք կհանդիպեի և ամբողջ որը յուրջանիկ էի։ Աքանչելի, արքանչելի ժամանակ եր, ջանիկս։ Լավ բան և աշխարհիս յերեսին ապրելը։ Մանավանդ Պետերբուրգում։ Ձերիկ յես արտասուքն աչքերիս մեջ էի գալիս ասածուն, վորը տերը Քրոնշեյտեն տա այդ տխուր ժամանակի բոլոր մեղքերիս — տըրտունջներիս, աղաո մտքերիս, դեքոշիս և ապարանիս համար։ Ձեր մասին ապրիքիս մեջ հիշեցի հիացքով։ Մենակ դուք էիք, հրեշտակիկս, ինձ ուժ տալիս, մխիթարում ինձ, բարի խորհուրդներ ու խրատներ տալիս։ Այս բանը, ջանիկս, յերբեք չեմ կարող մոռանալ։ Ձեր բոլոր նամակներն այստղ պահպըրեցի, աղաչյակդ եմ։ Դե՛, Ձեզ բարով, ջանիկս։ Առում են, այստեղ մոտերքը ծախու հոգուստ կա։ Կգնամ տեսնելու։ Ուրեմն, Ձեզ բարով, հրեշտակիկդ, Ձեզ բարով։

Հոգով-սրտով Ձեզ անձնվեր՝

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 15.

Վաղորդյան տեր Մակար Ալեքսեևիչ։

Ձեռ վողջ նյությամբ սարսափելի հուզման մեջ եմ։ Մեկ լսեցնեք, թե ինչ և յեղել մեզ մոտ։ Ինչ-վոր ճակատագրական բան եմ նախազգում։ Ահա ինքներդ դատեցեք, իմ անգին բարեկամ. պարոն Բըկովը Պետերբուրգումն ու Ծեդորան հանդիպել և ներան։ Նա կատաղով գնալիս և յեղել, կառապանին հրամայել և կանգնեցնել կառքը, մոտեցել և Ծեդորային և սկսել և հարցուփորձ անել, թե վորտեղ և ապրում։ Ծեդորան սկզբում չի յեղել ասելիս։ Հետո Բըկովը քաջինձադով ասել և, թե ինքը գիտե ով և ապրում ներա մոտ (յերևում և, Աննա Ֆյոդորովնան և ներան ամեն բան պատմել)։ Այն ժամանակ Ծեդորան չի համբերել և հենց այնտեղ նեթ վողոցումն սկսել և, ներան հանդիմանել, շպրտել, ասել և, թե նա անբարոյական մարդ և, թե նա յե իմ բոլոր դժբախտությունների պատճառը։ Բըկովը պատասխանել և, թե յերբ վոր մարդ գըոշ չունի, իհարկե, դժբախտ կլինի։ Ծեդորան ասել և ներան, վոր յես

կարող եմ ապրել իմ ձեռքի աշխատանքով, կարող եմ ամուսնանալ կամ քեզ վորևէ տեղ ճարել ինձ համար, իսկ այժմ առ միշտ գժբախտացել եմ, հիվանդ եմ և շուտով կմեռնեմ։ Այս խոսքերի վրա Բըկովը նկատել է, թե չես գեռևս շատ ջահել եմ, թե գեռ խելք չունեմ և թե մեր աճուկն ել է կոտրվել (նրա խոսքերն են)։ Ես ու Ենգուրան կարծում էինք, թե նա չգիտե մեր բնակարանի տեղը, բայց հանկարծ, յերևի, յերբ յես նոր դուրս գնացած եմ յեղել Գաստինից Իվորում բան-ման առնելու, նա մտնում է մեր սենյակը. կարծեմ նա չի ուղեցել ինձ տանը տեսնել։ Ցերկար հարց ու փորձ է արել, թե ինչպես ենք ապրում, ամեն բան տըներել է, տնտղել է իմ աշխատանքը, վերջապես հարցրել է. — այդ ինչ աստիճանավոր է, վոր ծանոթ է ձեզ հետ։ Այդ միջոցին դուք անցնելիս եք յեղել բակով. Ենգուրան մատով ցույց է տվել ձեզ. նա մոտիկ է տվել ու ծիծաղել. Ենգուրան խնդրել է նրան, վոր հեռանա, ասել է, վոր յես առանց այն ել հիվանդ եմ դառնությունների և քե ինձ համար խիստ անհաճելի բան կլինի, վոր նրան մեր տանը տեսնեմ։ Նա լռել է. ասել է, քե այդ կողմովն անցնելիս է յեղել և մտել է հենց այնպես. ուղեցել է Ենգուրային 25 ռուբլի տալ. Ենգուրան, իհարկե, չի վերցրել. — Ինչ է նշանակում այս։ Ինչու յե յեկել մեզ մոտ։ Ես չեմ կարողանում հասկանալ, վորտեղից նա ամեն բան գիտե մեր մասին։ Հազար ու մի յենթադրություններ եմ անում։ Ենգուրան ասում է, քե Ակսինյան, իր տալը, վորը գնում-գալիս է մեր տուն, ծանոթ է լվացարարուհի Նաստասյայի հետ, իսկ Նաստասյայի հորեղբոր տղան դռնապան է այն գեպարտամենտում, վորտեղ ծառայում է Աննա Յոլորովնայի քեռորդու մի ծանոթը։ Ահա այս ճամբով չի՞ անցել արտյոք բամբասանքը։ Ասենք, շատ կարելի յե, վոր Ենգուրան սխալվում է և. չենք իմանում, ինչ մտածենք։ Մինչև նա նորից կգա մեզ մոտ։ Սարսափում եմ, վոր մտածում եմ այս մասին, Ենգուրան, վոր յերեկ պատմում էր այս բոլորը, յես այնպես վախեցա, վոր քիչ մնաց ուշաթափվելի վախից։ Ել ինչ են ուզում ինձնից։ Հիմա յես չեմ ել ուզում ճանաչել նրանց։ Ինչ գործ ունեն ինձ հետ, մի խեղճ աղջկա հետ։ Ա՛խ, ինչպիսի ահ ու դողի մեջ եմ այժմ. կարծում եմ, թե ահա, վորտեղ վոր է, կմտնի Բըկովը։ Ինչ սիրուն անեմ։ Ել ինչ նոր բան է պատրաստում ինձ համար իմ ճակատագիրը։ Ի սեր Քրիստոսի, յեկեք ինձ մոտ հենց այժմ, Մակար Ալեքսեևիչ։ Եկեք, ի սեր աստծու, յեկեք։

Վ. Դ.

Ջանիկա, Վարվառա Ալեքսեևնա։

*Սոյն թվիս մեր քնակարանում անպատմելի ցավալի, անբացատրելի և անսպասելի մի անցք պատահեց։ Մեր խնդմ Գորշկովը (սևաթաք և ձեզ նկատեմ, Ջանիկա) քոլորովին արբշռացել եր։ Վչխոն արդեն վաղուց եր հանվել, իսկ այսոր նա դնացել եր լսելու վերջնական վորոշումը։ Գործը նրա համար շատ բախտավոր կերպով եր վերջացել։ Ինչ մնդադրանք ել վոր բարձվել եր նրա վրա անփութքյան և անշրջահայեցողութքյան համար — բոլորի համար կատարյալ ներում եր դուրս գնկել։ Վճռել եին վաճառականից նրա ոգին մի նշանավոր գումար առնել, այնպես վոր նրա հանգամանքները խիստ լավացնել եյին, պատիվը ել ազատվել եր բծից և ամեն բան լավացել եր, — այնպես վոր ցանկութքյունն ամենակատարյալ կերպով կատարվել եր։ Այսոր նա առն գնկավ ժամը յերեքին։ Ներսն իրանը չեր, գունատ, ինչպես քաթան, շրթունքները դողդողում եին, իսկ ինքը ժպտում և — գրկից կնոջը, յերեխաներին։ Մենք ամենքս խմբովին գնացինք նրա մոտ շնորհավորելու նրան։ Նա խիստ զգացված եր մեր վարմունքից, գլուխ եր տալիս ամեն կողմը, անդմում եր մեզնից ամեն մեկի ձեռքը մի քանի անգամ։ Ինձ նույնիսկ թվաց, թե նա հատկով բարձրացրեց և ե շոկվիլ, և թե աչքերն ել չեն կրակում։ Այնպիսի հուզման մեջ եր խնդը։ Ջոր կարողանում յերկու րոպե տեղում մնալ։ վերցնում եր ամեն բան, ինչ վոր պատահում եր, հետո նորից գցում, անդադար ժպտում եր և գլուխ եր տալիս, նստում, վեր կենում, նորից նստում, խոսում եր, ասվածի գլխի՝ ինչ. ասում եր ազատվա, պատիվս, բարի անուն, զավակներս» — և ինչպես եր ասում։ Մինչև անգամ լաց յեղավ։ Մենք նույնպես մեծ մասամբ արտասվեցինք։ Դատաստյանը յերևի ուզում եր նրան քաջալերել և ասաց. — «ազատիլը ինչ կանես, յերբ ուտելու բան չունես։ վոզը, վոդն և գլխավորը, բարեկամ. ահա քե ինչի համար շնորհակալ յեղեք աստծուց» — և այս ասելով խրեց նրա ուսին։ Ինձ թվաց, թե Գորշկովը վիրավորվեց, այսինքն՝ վոչ թե ուղղակի զժգոհությունն հայտնեց, այլ միայն մի տեսակ ոտարոտի նայեց Դատաստյանին և նրա ձեռքը հեռացրեց ուսից։ Իսկ առաջ այդպիսի բան չեր լինի, Ջանիկա Ասանք, քնավորությունները զանազան են լինում։ Ա՛յ, որինակ, յես այդպիսի ուրախության ժամանակ չեյի հպարտանա. յերբեմն մարդի մի ավելորդ անգամ գլուխ տալը և ինքնանվաստացումը վոչ այլ բանից և լինում, յեթե վոչ հոգու

բարեբեդունից և սրտի ավելորդ փափկությունից... Սակայն բանն իմ մասին չեր — ձեռս, ասում է, փողն էլ և լավ. փառք աստծու... փառք աստծու...» ու հետո, ինչքան ժամանակ վոր մենք նրա մոտ եյինք, շարունակ կրկնում եր. «փառք աստծու, փառք աստծու...»։ Նրա կինը համով առատ ճաշ պատվիրեց։ Մեր տանտիրուհին ինքը պատրաստեց։ Մեր տանտիրուհին մատաղ բարի կին եր։ Ճիվ մինչև ճաշը Գորշկովը չեր կարողանում մի տեղ նստած մնալ։ Մանում եր ամենքի սենյակը, կանչկրին քեռ չկանչկրին։ Այնպես, կմտներ, կժպտար, կնստեր աթոռի վրա, վորևե բան կասեր, յերբեմն էլ վոչինչ չեր ասի ու կգնար։ Միչմանի մոտ նույնիսկ վերցրեց խաղաթուղթը. նրան նստեցրին, վոր իբրև չորրորդ[1] խաղացող խաղա։ Խաղաց, խաղաց, խաղի մեջ ինչ-վոր հիմար բան արավ, մեքանի անգամ թուղթ գնաց ու վեր կացավ։ «Չե, ասում է, յես այնպես, յես, ասում է, հենց այնպես, ելիբ — ու հետացավ։ Ինձ հանդիպեց մի ջանջքուռ, առավ յերկու ձեռքս էլ, նայեց ուղղակի աչքերիս զարմանահրաշ կերպով, ձեռքս սեղմեց և հետացավ և շարունակ ժպտալով, բայց մի տեսակ ծանր, տարորինակ կերպով ժպտալով, կասես մեռել լիներ։ Նրա կինը լաց եր լինում ուրախությունից. ասես որվա պես ուրախություն եր տիրում նրանց տանը։ Շուտով ճաշեցին։ Ճաշից հետո նա ասաց կնոջը. «Լիսեցնիք, հոպյակս, յես մի քիչ կպառկեմ», — ու գնաց պառկեց։ Աղջկան կանչեց իր մոտ, ձեռքը դրավ նրա գլխին և յերկար, յերկար ժամանակ շոյում եր յերեխայի գլուխը։ Հետո նորից գլեմեց կնոջը. «Իսկ ձեր և Պետենկան. մեր Պետյան, ասում է, Պետենկան...»։ Կինը յերեսը խաչակնքեց և պատասխանում է, թե չե վոր նա մեռավ — «Հա, հա, գիտեմ, բոլորը գիտեմ, Պետենկան հիմա յերկնային թագավորության մեջ է»։ Կինը տեսնում է, վոր նա իրեն կորցրել է, անցքը ցնցել և նրան բղավում է, և ասում է նրան. — «Հոգիս, լավ կլինի, վոր քնեիր»։ — «Հա, լավ, յես իսկույն, յես մի քիչ», — այստեղ նա յերեսը դարձրեց, մի քիչ պառկած մնաց, հետո նորից շուռ եկավ, ուղեց ինչ-վոր բան ասել։ Կինը չլսեց, հարցրեց բան չեղավ։ Իսկ նա չպատասխանեց։ Կինը մի քիչ սպասեց, — քնեց ասում է, ու դուրս գնաց տանտիրուհու մոտ։ Մի ժամից հետո վերադարձավ — ու տեսնում է մարդը դեռ չի զարթնել և պառկած է իր համար, չի շարժվում։ Կարծեց՝ քե քնած է, նստեց և ինչ-վոր բանի կացավ։ Նա

[1] Գրնգնգրան կոչվող խղճամտոն է, վոր կարելի յե նաև յերեքով խաղալ բայց ընդունված է չորս հոգով խաղալը։

պատմում ես, քեզ կես ժամից չափ աշխատում ես և այնքան խոր մտածմունքների մեջ ես ընկել, որ մինչև անգամ չես հիշում, թե ինչի մասին ես մտածում, ատում ես միայն, թե մարդու մասին մտացել ես։ Միայն հանկարծ ուշքի ես գալիս ինչ-որ մի անհանդիստ նախազգացումից, և ամենից առաջ նրան ապշեցնում է անդյակում տիրող գերեզմանային լռությունը։ Նայում ես մահճակալին և տեսնում, որ մարդը պառկած է միշտ նույն դրության մեջ։ Մոտենում ես նրան, վերմակը հետ քաշում, տեսնում է մարդը սառը-սառը։ — Մեռավ, ջանիկս, մեռավ Գորշկովը, հանկարծ մեռավ, կասես կայծակը տվից սպանեց։ Բայց քե ինչից մեռավ — մտածած պիտես։ Այս բանն ինձ այնպես է զբաղեցնում, Վարինկա, որ մինչև հիմա էլ չեմ կարողանում ուշքի գալ։ Մի տեսակ հավատս չի գալիս, թե մարդ կարող է այսպես հանկարծ մեռնել։ Ախ, խեղճ, վոզդրամնի Գորշկով։ Ախ, քախտ, քախտ։ Կինը լաց է լինում, ահ ու դողի մեջ են փոքրիկ աղջիկը կուչ է եկել մի անկյունում։ Այնպիսի իրարանցում է ընկել այնտեղ. բժշկական քննության պիտի կատարեն, թե ինչ... Հիշատը չեմ կարող տալ ձեզ։ Միայն մեղքանալու բան է, ահ, ինչպես մեղքանալու։ Տխուր բան է, որ մտածում ես, թե իսկապես չես իմանում վերչ որը, վերչ ժամը... Ջուր տեղն ընկնում մեռնում ես

. . . . . .

Ձեր

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 19.

Վոզդրամած տիրուհի, Վարվառա Ալեքսեևնա։

Շտապում եմ ծանուցանելու, բարեկամիդ իմ, որ Բաստրյկովն ինձ համար աշխատանք և ճարել մի հեղինակի մոտ։ — Մի ինչ-որ մարդ յնկավ նրա մոտ, հետը մի հատ ձեռագիր բերեց. — գրածը ատածու, շատ աշխատանք կար։ Միայն չեմ իմանում ինչ-ինս գործի նատեմ, վորովհետև այնքան վատ և գրված, որ չի կարդացվում. շատ են ուզում, բոլորը ինչ-որ այնպիսի մի բանի մասին և գրված, որ կասես չի յել հասկացվում... Քեզքին 40 կ. պայմանավորվեցինք։ Այս նրա համար եմ գրում ձեզ, բալիկս, որ հիմա կոշտակը փող էլ կլինի։ — Դե, հիմա Ձեզ բարով, Ջանիկս։ Ճես արդեն ուղղակի նատում եմ աշխատանքի։

Ձեր հավատարիմ բարեկամ

Մակար Դեվուշկին

Իմ թանգագին բարեկամ, Մակար Ալեքսանեից,

Ցերեկով որն և արդեն, իմ բարեկամ, վոր վոչինչ չեմ գրել ձեզ, իսկ յես շատ-շատ հոգսեր ունեյի, շատ ահ ու դող կրեցի։ Ցերեկ չեն, մեկել որն ինձ մոտ եր Բըլկովը։ Ցես մենակ եյի, Ձեղորան գնացել եր ուր-վոր։ Դուռը յես բաց արի և նրան վոր տեսա, այնպես վախեցա, վոր չկարողացա տեղից շարժվել։ Զգացի, վոր գուցեն Թոմայի նա մտավ, իր սովորության համաձայն, բարձրաձայն ձիծաղելով, մի աթոռ առավ ու նստեց։ Ցես յերկար ժամանակ չեյի կարողանում ուշքս գլուխս հավաքել, վերջապես նստեցի անկյունում իմ գործին։ Շուտով դադարեց ձիծաղելուց։ Կարծեմ իմ տեսքը զարմացրեց նրան։ Ցես այնպես եմ նիհարել վերջին ժամանակս. այտերս ու աչքերս փոս են ընկել, թաշկինակի պես դունատ եյի... իսկապես, ով ինձ մի տարի առաջ տեսել է, դժվար թե հիմա ճանաչի։ Նա յերկար և անհետևն նայում եր ինձ. վերջապես նորից ուրախացավ։ Ինչ-վոր բան ասաց. չեմ հիշում ինչ պատասխանեցի, և նա նորից ծիծաղեց։ Մի ամբողջ ժամ նստած եր ինձ մոտ. յերկար խոսում եր ինձ հետ. հարցնում եր միքանի բաներին մասին։ Վերջապես, գնալուց առաջ, առավ ձեռքս և ասաց (յես ձեզ գրում եմ բառ առ բառ). «Վարվառա Ալեքսեևնա։ Ցոսքը մեր մեջ Ցես, Աննա Ցյոդորովնան, ձեր ազգականուհին, իսկ իմ մոսիկ ծանոթուհին և բարեկամուհին, շատ սուրբ կին և (այստեղ նրան մի անվայել անուն եմ տվեց)։ Նա ճանապարհից հանեց ձեր քեռու աղջկան և ձեզ եմ կործանեցրի։ Իմ կողմից յես եմ այդ բանում սուրբ պանվինցի. ասենք, ես, աղխարհի բան եմ, ելիշ։ Այստեղ նա քրքջաց, վորքան ուժ ուներ։ Հետո նկատեց, թե ինքը գեղեցիկ խոսելու վարպետ չեմ և թե ղլխավորը, վոր հարկավոր եր բացատրել և վորի մասին աղնվությամբ պարտքը հրամայում եր լրեն չլռել, ինքն արդեն բացատրեց, և թե կարճ խոսքերով ավարտեմ և ձեռացածը։ Այստեղ հայտարարեց ինձ, թե խնդրում է իմ ձեռքը, թե իր պարտքն է համարում վերադարձնել իմ պատիվը, թե ինքը հարուստ է, թե հարստանքից հետո ինձ կտանի իր տափաստանի ղյուղը, թե ուզում է այնտեղ նավատատեղներ վորսալ, թե այլևս յերբեք Պետերբուրգ չի գա, վորովհետև Պետերբուրգում ապրելը ղվիլի յան, թե այստեղ Պետերբուրգում ունի, ինչպես ինքն արտահայտվեց, մի անպիտան յեղբորորդի, վորին յերդվել է գրկել

ժառանգությունից և հատկապես այդ բանի համար, այսինքն՝ որպեսզի ժառանգներ ունենալու համար եմ, որ խնդրում եմ իմ ձեռքը, քանի այդ է գլխավոր պատճառն իր խնամախոսության։ Հետո նկատեց, թե ես շատ աղքատ եմ ապրում, թե զարմանալի չեն, որ ես հիվանդ եմ, ապրելով այսպիսի մի հյուղում, նախադռնյակից, թե մի ամիս էլ որ միամիտ այսպես, անպատճառ կմեռնեմ. ասաց, թե Պետերբուրգում բնակարաններն անպիտան են և, վերջապես, թե ինձ որևէ բան հարկավոր չի արդյոք։

Նրա առաջարկից այնպես եմի շշմել, որ ինքս էլ չգիտեմ ինչու լաց եղա։ Իմ արցունքները նա շնորհակալության տեղ ընդունեց և ասաց ինձ, թե ինքը միշտ հավատացած է եղել, որ ես բարի, զգայուն և ուսում առած որմորդ եմ, թե ինքը նախ մանրամասն տեղեկություններ և հավաքել իմ այժմյան վարքի մասին և հետո միայն վճռել, որ իմ ձեռքը խնդրի։ Այստեղ նա հարցուփորձ արավ ձեր մասին, ասաց, թե ամեն ինչ լսել է, թե դուք աղնիվ մարդ եք, թե ինքն իր կողմից չի ուզում կեսախոտապատ Մեսալ ձեր առչին և թե ձեզ բավականին կլինի 500 ռուբլի այն բոլորի հաշվով, ինչ որ դուք արել եք ինձ համար։ Իսկ եղբայրս նրան բացատրեցի նրան, թե դուք ինձ համար այնպիսի բան եք արել, որի համար վոչ մի փողով չի կարելի վճարել, նա ինձ ասաց, թե այդ գաղափար բան է, թե այդ բոլորը առմանների են, թե կես գնա ջահել եմ և բանաստեղծություններ եմ կարդում, թե առմաններին կործանում են ջահել աղջիկներին, թե գրքերը միայն բարոյականությունն են վնասում և թե ինքը հանդուրժել չի կարող վոչ մի գիրք, խորհուրդ տվեց իր տարիքին հասնելուց հետո մարդկանց մասին խոսել. ասյն ժամանակ ան-հաց ավելացրեց նա, ճանաչեք մարդկանց։ Հետո ասաց, որ լավ մտածեմ իր առաջարկների մասին, թե ինքը շատ կնեղանա, որ կես այսպիսի մի կարևոր քայլ առանց մտածելու անեմ, ավելացրեց, թե անխոհեմությունը և հափշտակությունը կործանում են անփորձ ջահելությունը, բայց ինքը չափազանց ցանկանում է, որ կես նպաստավոր պատասխան տամ, թե, վերջապես, հակառակ դեպքում, ստիպված կլինի ամուսնանալ Մոսկվայում մի վաճառականի աղջկա հետ, որովհետև, ասում է նա, կես չեղել եմ անպիտան չեզբորորդուս զրկել ժառանգությունից։ Նա գոռալ հինգ հարյուր ռուբլի թողեց, ինչպես ինքն ասաց, կանգնեմանների համար. ասաց, թե գյուղում կես կհատատանամ քուլուխ նման, թե իր մոտ իմ քեֆին քեֆ չի հասնի, թե հիմա ինքը

չափազանց շատ զբաղված եմ, քեզ ամբողջ որը գործերի հետևից եմ յեղել ընկած և քեզ հիմա ի միջի այլոց եմ մտել ինձ մոտ։ Այստեղ նա հեռացավ։ Ցնս յերկար մտածում նյի, ծանը ու քնքնե անում ու մտածելով տանջվում. վերջապես վճռեցի։ Իմ բարեկամ, յես կամուսնանամ նրա հետ, յես պետք և համաձայնեմ նրա առաջարկին։ Ցեքե մեկը կա, վոր կարող և ազատել ինձ իմ խայտառակությունից, վերադարձնել իմ անունը, հեռացնել ինձնից իմ աղքատությունը, զրկանքներն ու դժբախտություններն ապագայում, այդ մեկն նա յես եմ լինչ ապասեմ ապագայից, եմ լինչ հարցնեմ ճակատագրիս։ Ցեդրան ասում և, քեզ բախտին քացով չպետք և տալ. ասում և, քեզ բախտն եմ հենց այդ և, վոր կա։ Ցնս գոնե ուրիշ ճանապարհ չեմ գտնում ինձ համար, անգին իմ բարեկամ։ Ի՞նչ անեմ։ Աշխատանքով առանց այն եմ բոլորովին փչացրել եմ առողջությունս. չարունակ աշխատել չեմ կարող։ Ծառայությանն մտնեմ։ — Դարդից կչորանամ. քացի դրանից վոչ վոքի խաթրն եմ չեմ առնի։ Ցնս հիվանդ եմ ի բնե, ուսաի և մի ծանը բեռ կլինեմ ոտար մարդկանց ձեռքին։ Ի՞նարկե, յես այժմ եմ դրախտ չեմ գնում. բայց ի՞նչ անեմ, իմ բարեկամ, ճիշտ ինչ և ի՞նչ կա, վոր ընտրություն անեմ։

Ցնս ձեզնից խորհուրդ չի՞նդրեցի։ Ուզում նյի մենակ ծանը ու քնքնե անեմ։ Վճիռս, վոր այս րոպեին կարդացիք դուք, անփոփոխելի յե, և այդ վճիռս անհապաղ հայտնում եմ Բըկովին, վորն առանց այն եմ շտապեցնում և ինձ, վոր վերջնական պատասխան տամ։ Նա ասաց, քե գործերը չեն սպասում, քե պետք և գնա և քե հո չի՞ կարելի գատարկ բաներին պատճառով հետաձգել։ Ասելած գիտես, յերջանի՞կ կլինեմ, քե վոչ. իմ ճակատագիրն աստծու սուրբ, անիմանալի զորության ձեռքին և, բայց յես վճռել եմ։ Ասում են, վոր Բըկովը բարի մարդ և, նա կհարգի ինձ, գուցե քե յես էլ հարգեմ նրան։ Եվ լինչ կարելի յե դրանից ավելի սպասել մեր ամուսնությունից։

Տեղեկացնում եմ ձեզ ամեն բանի մասին, Մակար Ալեքսեևիչ։ Ցնս հավատացած եմ, վոր դուք կհաստատեք իմ բոլոր գործերը։ Մի աշխատանք հեռացնելու ինձ իմ մտադրությունից։ Ձեր չանքերն սպարդյուն կլինենն։ Ձեր սրտում կշտապատեցնեք այն ամենը, լինչ վոր ասիպել և ինձ այսպես վարվելու։ Սկզբում շատ նյի անհանգստանում, բայց այժմ ավելի հանգիստ եմ։ Ի՞նչ կա առաջներս — չգիտեմ, լինչ լինում և, քող լինի. լինչպես աստված կտա։

Բլկոնը յնկավ, նամակս թողնում եմ կիսատ։ Ելի շատ բան կլի ուզում ասել ձեզ։ Բլկոնը արդեն այստեղ է։

Վ. Դ.

Սեպտեմբեր 23.

Ջանիկս, Վարվառա Ալեքսեևնա։

Ես, Ջանիկս, շատ ուզում եմ ձեզ պատասխանել. յես, Ջանիկս, շատ ուզում եմ ձեզ հայտարարել, որ յես ապշած եմ։ Այդ բոլորը մի տեսակ ինչ-որ այն չէ... Ներեք մեզ թաղեցինք Գորշկովին։ Հա, այդ այդպես է, Վարինկա, այդ այդպես է. Բլկոնը ազնիվ կնքոջով է վարվել. միայն թե ահա տեսնում եք, բալիկս, դուք այդպես էլ համաձայնում եք։ Իհարկե, ամեն բանում աստծու կամքն է, այդ այդպես է, այդ անպատճառ այդպես պետք է լինի. այսինքն այդտեղ աստծու կամքը անպատճառ պետք է լինի, և երկնքի տանջողի նախախնամությունը, իհարկե, և՛ բարեգութ է, և՛ անքննելի, և ճակատագիրը նույնպես միևնույն բանն է — ձեզդ համակրանքն էլ ձեր կողմն է։ Իհարկե, դուք հիմա բախտավոր կլինեք, Ջանիկս, ամեն բան կունենաք, իմ ազավնյակ, իմ պայծառիկ, դուք իմ սիրունիկ, իմ հրեշտակիկ, — միայն դիտեք ինչ, Վարինկա, այդ ինչպես այդպես շուտով... Հա, գործերը... ա. Բլկովը գործեր ունի, — իհարկե, ով չունի գործ, կարող է պատահել, որ նա էլ գործեր ունենա... տեսա նրան, որ ձեզնից դուրս էր գալիս։ Նեսք ունեցող, տեսք տղամարդ է, մինչև անգամ շատ տեսք տղամարդ է։ Միայն այս բոլորը մի տեսակ այնպես չէ, բանն այն չէ իսկապես, որ նա տեսք տղամարդ է. դե, յես էլ հիմա մի տեսակ կորցրել եմ ինքս ինձ։ Միայն թե հիմա ինչպես ասենք պետք է գրենք իրար։ Ուկ յես, խակ յես, ինչպես պետք է մեզնից ընտի։ Ես, իմ հրեշտակիկ, բոլորը կշռադատում եմ, բոլորը կշռադատում, ինչպես դուք եք գրել, սրտիս մեջ կշռադատում եմ այդ բոլորը, այդ պատճառները։ Ես արդեն քսաներորդ թերթն եմ վերջացնում արտագրել, այնինչ վրա հասան այդ բոլոր անցքերը։ Ջանիկս, ահա դուք գնում եք, ուրեմն ձեզ համար պանապան բաներ պետք է առնեք. պանապան կոշիկներ, հագուստ, հրես, ի դեպ, յես մի ծանոթ խանութի էլ գիտեմ Գորոխովայում. հիշում եք, որ ձեզ բոլորը նկարագրում եմ էլի։ — Բայց չե՞ Այդ ինչպես կարելի չի, Ջանիկս, ինչ եք ասում. չե՞ որ հիմա ձեզ համար անկարելի չի, որ գնաք, բոլորովին անկարելի, ամենևին անկարելի։ Չե՞ որ

շատ բաներ պետք է առնենք և կարող ենք գնալ։ Բացի դրանից յեղանակն էլ հիմա վատ է. մեկ նայեցեք, անձրևը վոնց է շռռալի գալիս և ինչ խոնավ, մեկ էլ... մեկ էլ այն, վոր կմրսեք, իմ հրեշտակիկ, սրտիկդ կմրսի։ Այդ ինչպես է, վախենում եք ոտար մարդուց, բայց գնում եք։ Իսկ չես ուժ հուսով պետք է ճամփա այսօրը։ Ես, այ Ծեզդրան ասում է, քեզ ձեզ մեծ քախտավորությունն է սպասում... բայց չէ վոր նա կատաղի կնիկ է և ուզում է ինձ կործանել։ Այսոր յերեկոյան ժամ կգամ, ջանիկս։ Կգայի ձեզ տեսնելու Էի, ճիշտ է, ջանիկս, կատարյալ ճշմարտությունն, վոր դուք ուսում առած որիորդ եք, առաքինի և զգայուն, բայց ավելի լավ կլինի, վոր նա վաճառականի աղջիկ առնի։ Դուք ինչ եք կարծում, ջանիկս, ավելի լավ կլինի, չէ, վոր վաճառականի աղջիկ առնի։ Իմ Վարինկա, հենց վոր մքնեն, կգամ ձեզ մոտ մի ժամով։ Հիմա հո վազ է մքնում, այնպես վոր կգամ։ Ցեսս, ջանիկս, մի ժամով անպատճառ կգամ ձեզ մոտ այսոր։ Ահա դուք հիմա սպասում եք Բըկովին, իսկ հենց վոր նա գա, այն ժամանակ... Ա՛յ, սպասեցեք, ջանիկս, կգամ...

Մակար Դևուշկին

Սեպտեմբեր 27.

Իմ բարեկամ Մակար Ալեքսեևիչ։

Գարոն Բըկովն ասաց, թե դես անպատճառ յերեք դյուժին շապիկ պիտի ունենամ հոլանդական քաթանից։ Այնպես վոր պետք է վորքան կարելի յե շուտով կարող կանայք գտնել յերկու դյուժինի համար, իսկ ժամանակ շատ քիչ ունենք։ Գարոն Բըկովը բարկանում է. ասում է, թե այդ փալաս-փուլուսները չափազանց գալամազալ բաներ են։ Մեր հարսանիքը հինգ որից հետո յե, իսկ հարսանիքի մյուս որը գնում ենք։ Գարոն Բըկովն շտապում է, ասում է, թե դատարկ բաների վրա շատ ժամանակ չպետք է կորցնել։ Ցես հոգնել եմ դես-դեն վազելուց և հագիվ եմ վոտիս վրա կանգնում։ Սարսափելի շատ գործ կա, բայց, հավատացեք, ավելի լավ կլիներ, վոր վոչինչ չլիներ։ Էն, մեկ էլ ինչ եմ ասում. բլոնդը և ժանյակը պակասում է, այնպես վոր պետք է առնել, վորովհետև պարոն Բըկովն ասում է, թե չի ուզում, վոր իր կինը ժան գա խոհարարուհու պես, և թե դես անպատճառ պետք է հանացնեմ բոլոր կալվածատերերի կանանց։ Այս նա ինքն է ասում։ Այսպես, սիրելի Մակար Ալեքսեևիչ, գնացեք, խնդրում եմ,

մադամ Շիֆոնի մոտ Դորոխովայա փողոց և խնդրեցիք, որ, նախ, ապրատկեղնն կարողներ ուղարկի մեզ մոտ և, երկրորդ, ինքն էլ գար։ Այսոր չես հիվանդ եմ։ Մեր նոր քնակարանում այնպես ցուրտ է և սարսափելի անկարգություն է տիրում։ Պարոն Բըկովի մորաքույրը հալից ընկել է պատավոխյունից։ Վախենում եմ, որ մինչև գնալնդրա ժամին, բայց պարոն Բըկովը ասում է, թե վոչինչ, ուշքի կգա։ Մեր տանը սարսափելի անկարգություն է տիրում։ Պարոն Բըկովը մեզ հետ չի ապրում, դրա համար էլ ծառայողները կորչում են, աստված գիտե՝ ուր։ Պատահում է, որ մենակ Ձեզդրան է մեզ ծառայում. իսկ պարոն Բըկովի կամերդինները,[1] որը նայում է ամեն բանի, չերրորդ օրն է արդեն հայտնվել չի՝ ուր է կորել։ Պարոն Բըկովը գալիս է ամեն առավոտ, շարունակ չարտոնում է չերեկ ծնծեց տան գործակատարին, որը համարձակ է անախորժություններ ունեցավ վոստիկանության հետ... Մարդ չկար, որ ձեզ նամակներ ուղարկեյիր։ Գրում եմ քաղաքային փոստով։ Չեմ, քիչ ետոց մոտանալի ամենից կարևորը։ Ասացեք մադամ Շիֆոնին, որ բլոնդներն անպատճառ փոխի չերեկվա նմուշի համաձայն և ինքն էլ գա ինձ մոտ ցույց տալու նոր կտորը։ Ասացեք, որ չես միտքս փոխել եմ կանգնելի մասին, որ կանգնելը պետք է կարել մանր։ Մեկ էլ ասացեք, որ քաղիմիոնների վրա վիճակների տառերը պետք է կարել առանձրով. չանի եք, առանձրով և վոչ քիչ հարթակարով։ Տեսեք, չմոռանաք — առանձրով։ Ա՛յ, էլի ինչ, քիչ եր մնում մոռանայի։ Ի՞ր առաջու, ասացեք նրան, որ պելերինայի վրա թեքթիկները կարի բարձր, թեղիկները և վիշերը կորզոնեն, և հետո վզնոցին ժանյակ կամ լայն ֆալբալա դնի։ Ներում եմ, իմ կոզմից այս հայտնեցեք նրան, Մակար Ալեքսեևիչ։

Ձեր

Վ. Գ.

Հ. Գ. Ես այնպես խնդրահարվում եմ, որ ձեզ շարունակ առնչում եմ իմ հանձնարարություններով։ Ահա անցյալ որն էլ դուք ամբողջ առավոտը վազվզում եյիք գես ու դեն։ Բայց ինչ արած։ Մեր տանը վուշ մի կարգ չկա, իսկ չես ինքս տկար եմ։ Ուրեմն մեզ արանջաք ինձ վրա, Մակար Ալեքսեևիչ։ Այնպիսի թախիծ և տխրում ինձ։ Ա՛խ, չերանի գիտենայի ինչ կլինի, իմ բարեկամ, իմ տխրելի, իմ բարի Մակար Ալեքսեևիչ։ Ես մինչև

1 Անչոկի ազատավոր։

անգամ վախենում եմ խորը նայելու իմ ապագային։ Երբեմնակ ինչ-որ նախազգում եմ, և կասես մի տեսակ մշուշի մեջ եմ ապրում։

Ի սեր աստծու, իմ բարեկամ, ոչինչ չմոռանաք, ինչ որ ասացի։ Երբեմնակ վախենում եմ, որ սխալվեք։ Ունեմ հիշեցնեք, տամբուրով և ոչ թե հարթակարով։

Վ. Դ.

Սեպտեմբեր 27.

Վաղորդյան տիրուհի Վարվառա Ալեքսեևնա։

Ձեր բոլոր հանձնարարությունները կատարեցի ժրաջան կերպով։ Մազամ Շիֆոնն ասում է, թե ինքն էլ արդեն ուզում եր կարել տամբուրով, թե այդ ավելի վայելուչ է, թե ինչ, չգիտեմ, լավ չհասկացա։ Մեկ էլ ինչ-որ ֆալբալա եյիք գրել, ֆալբալային մասին էլ խոսեց։ Միայն թե, ջանիկս, մոռացա, թե ինչ եր ասում ֆալբալայի մասին։ Միայն հիշում եմ, որ խիստ շատ եր խոսում. այնպիսի անպիտան կին եւ ի՞նչ եր էլ, ինքը կգա ամեն բան կպատմի ձեզ։ Ես, ջանիկս, բոլորովին հոգնել եմ։ Այսօր պաշտոնիս էլ չգնացի։ Միայն թե դուք, բալիկս, դուք եք հուսահատվում։ Ձեր հանգստությանն համար կես պատրաստ եմ բոլոր խանութները ման գալու։ Գրում եք, թե վախենում եք խորը նայել ապագային։ Բայց չե՞ որ այսոր ժամը յոթին կերամանաք ամեն ինչ։ Մազամ Շիֆոնը ինքը կգա ձեզ մոտ։ Ուրեմն մի հուսահատվեք. հուսացեք, ջանիկս, դուցե թե ամեն ինչ լավ կլինի։ Ո՛հ, ֆալբալա, ֆալբալա, անիծյալ ֆալբալա։ Ես կվազեի ձեզ մոտ, հրեշտակիկ, կվազեի, անպատճառ կվազեի, արդեն մի-յերկու անգամ մոտենայա էլ ձեր տան բակի դռանը։ Բայց շարունակ Բըկովը, այնինքն՝ ուզում եմ ասել, պարոն Բըկովը միշտ այնպես չարացած է լինում, որ... ես՝ էլ ինչ ասեմ։

Մակար Դևվուշկին

Սեպտեմբեր 28.

Վաղորդյան տեր, Մակար Ալեքսեևիչ։

Ի սեր աստծու, այս րոպեիս վազեցեք ականատործի մոտ։ Ասացեք նրան, որ ականջի ոդերը հարկավոր չեն մարգարիտով և գմբուխտով շինել։ Պարոն Բըկովն ասում է, թե չափազանց քանդ են

Ձաքանում է, ասում է, քե առանց այն էլ զրպանում փող չի Ռասցել և քե մենք կորոստում ենք իրեն, իսկ յերեկ ասաց, վոր ինքե առաջուց իմանար, քե այսպիսի ծախսեր կլինեն, իսկի էլ չեր կապվի։ Ասում է, քե հենց վոր պսակվենք, իսկույն էլ կմեկնենք, քե հյուրեր չեն լինի և պարելու. հույս չունենամ, քե առնելը գնա հետս յենա։ Ահա քե ինչպես է խոսում նա։ Իսկ ասաված էլ է տեսնում, վոր ինձ հարկավոր չեն այդ քուրերը։ Ինքը պարոն Բըկովն է այդ քուրերը պատվիրել։ Ճես նրան պատասխանել չեմ համարձակվում. այնպես տաքարյուն մարդ է։ Ներեցեք պիտանամ՝ ինչ է սպասում ինձ։

Վ. Դ.

Սեպտեմբեր 29.

Աղաչյակդ եմ, Վարվառա Ալեքսեևնա։

Ճես, այսինքն ակնառարծեն ասում է — լավ. իսկ յես սկզբում ուզում էլի իմ մասին ասել, վոր հիվանդացել եմ և չեմ կարողանում անկողնից վերկենալ։ Թարսի պես հիմա, վոր աներս քան չատ կա, հարկավոր ժամանակ է, մրսել եմ, գլուխը տանի։ Մանուշյանում եմ նուչնպես, քե իմ գործախոսություններըը բավական չեյին, նորին գերպատվությունն էլ քարևհաճեց խիստ լինել և Ժամելյան Իվանովիչի վրա շատ ևր քարկանում ու զրավում է վերջը հոգնեց խնդիրը։ Ահա և յես ծանուցանում եմ ձեզ այս բոլորը մասին։ Գարձյալ ուզում էլի միքանի քան գրել, միայն քե վախենում եմ նեղությունն պատճառել ձեզ։ Ջե վոր, ջանիկս, յես հիմար, հասարակ մարդ եմ, գրում եմ, ինչ վոր պատահում է, այնպես վոր գուցե քե գուք ուրիշ քան կարծեք.— ահա, էլ ինչ ասեմ։

Ձեր

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 29.

Վարվառա Ալեքսեևնա, քալիկս։

Այսոր Ժեղորային տեսա, աղաչյակդ իմ։ Ասում է, քե վաղը ձեզ պսակում են արդեն, իսկ վաղը չե մյուս որը մեկնում ենք և քե պարոն Բըկովը արդեն ձիյեր է վարձում։ Նորին գերպատվության մասին արդեն ծանուցեցի ձեզ, ջանիկս։ Մեկ էլ — Գորոխովայի վրա գտնված խանութից ստացած հաշիվներն ստու-

գնցի. բոլորը ճիշտ է, բայց միայն շատ քանդ եւ Միայն ինչու պարոն Բլկովը բարկանում է ձեզ վրա։ Դե, բախտավոր լինեք, ջանիկս։ Ձեռ ուրախ եմ. այն, յես ուրախ կլինեմ, յեթե դուք բախտավոր լինեք։ Ձեռ յնկեղնցի կգայի, ջանիկս, բայց չեմ կարող, մեջքս ցավում եւ Ձեռ եւի նամակներն մասին. հիմա ոչ պետք է մեր նամակներն իրար հասցնել, ջանիկս։ Էմ Ծեզորայինն դուք բարեբարեբիյուն եք արել, բանիկս։ Այդ բարի գործ է, վոր արել եք, իմ բարեկամ, այդ դուք շատ լավ եք արել։ Բարի գործ։ Իսկ ամեն մի բարի գործի համար տերը ձեզ կորհնի։ Բարի գործերն առանց հատուցման չեն ձգում եւ բարեգործությունը միշտ կպսակվի աստծու արդարությամբ պսակով, վաղ թե ուշ։ Ջանիկս, կուզեյի շատ բան գրել ձեզ. այսպես, ամեն ժամ, ամեն րոպե կուզեյի գրել։ Ինձ մոտ գարձյալ Ծացել է ձեր մի գրքույկը, «Повести Белкина»։ Գիտեք ինչ, ջանիկս, այդ գրքույկը հետ մի պահանջեք, նվիրեցեք ինձ, իմ աղաչյակ։ Այս նրա համար չեմ ասում, թե շատ եմ ուզում կարդալ։ Բայց ինքներդ էլ գիտեք, ջանիկս, ձմեռ է գալիս, գիշերները յերկար կլինեն, տխուր, ահա դրա համար էլ կնատեմ կկարդամ։ Ձեռ, ջանիկս, իմ բնակարանից կտեղափոխվեմ ձեր հին բնակարանը եւ կվարձեմ Ծեզորայից։ Այդ պղնիվ կնոջից հիմա վոչ մի պայմանով չեմ բաժանվի, բացի դրանից, նա այնքան աշխատասեր է։ Ձեր դատարկ բնակարանը յերեկ մանրամասն գիտեցի։ Այնտեղ, ինչպես վոր դրած եր ձեր քարզան, նրա վրա էլ կարը, այնպես էլ կար ձեռք չվված, անկյունում։ Գիտեցի ձեր կարը։ Այնտեղ Ծացել եյին էլի զանազան կտորտանքներ։ Իմ մի նամակի վրա դուք սկսել եյիք քեվեր փաքաքել։ Անդանի մեջ քղքի մի քերքիկ գտա, վորի վրա գրված եր — «Վողտոված sbr, Մակար Ալեքսեյեվիչ։ Շտապում եմ» — այսքանը։ Ներսում է վորև մեկին ընդհատել և ձեզ ամենահետաքրքիր տեղում։ Անկյունում պատվարի հետքը գրված և ձեր մահճակալը... Աղաչյակդ իմ Դե, Ծաք բարով, Ծաք բարով, իմ ջան աստծու, շուտով մի քան պատասխանեցեք իմ այս նամակին։

Մակար Դեվուշկին

Սեպտեմբեր 30.

Իմ անգին բարեկամ, Մակար Ալեքսեեվիչ։

Ամեն ինչ վերջացավ։ Վիճակս վորոշվեց, չգիտեմ ինչպիսի վիճակ, բայց յես հնազանդ եմ ասածու կամքին։ Վաղը մեկնում

ինձ։ Մնաք բարով իմ ասում ձեզ վերջին անգամ, իմ անգին բարեկամ, իմ բարերար, իմ հարազատ։ Դարձ մի անեք ինձ համար, ապրեցնեք բախտավոր, հիշեցնեք ինձ և Ձեզ աստծու որդնատիպությունը իմնի ձեզ վրա։ Ես հաճախ կհիշեմ ձեզ մարքսմս, ապրիքներիս մեջ։ — Ահա և վերջացավ այս ժամանակը։ Անցյալից հիշողությունները չես քիչ ուրախալի բան իմ տանելու իմ նոր կյանքի մեջ. այդ պատճառով իլ ավելի ևս քանդագին կլինի հիշողությունս ձեր մասին, ավելի ևս քանդ կլինեք դուք իմ սրտին։ Դուք իմ միակ բարեկամն եք. այստեղ մենակ դուք եյիք սիրում ինձ։ Ձեզ վոր չես ամեն բան տանում եյի, չի վոր գիտեյի, թե վորքան եյիք սիրում ինձ։ Իմ մի ժպիտը, նամակիս մի տողը ձեզ յերջանկություն եր պատճառում։ Դուք հիմա պետք և հետ տվորնք ինձնից։ Ինչպես պետք և մենակ Ձեզ այստեղ։ Ո՞ւմ հուսով եք Ձեզնու այստեղ, իմ բարի, քանդագին, միակ բարեկամ։ Թողնում եմ ձեզ գրքուկը, քարգան, սկսած նամակը, յերբ վոր նայեք այդ սկսված տողերին, մտքով շարունակեցեք կարդալ այն ամենը, ինչ վոր կկամենայիք լսել կամ կարդալ ինձնից, այն ամենը, ինչ վոր կգրեյի ձեզ, եսկ ինչ չեյի գրի ձեզ հիմա։ Հիշեցեք ձեր խեղճ Վարինկային, վորն այնքան սաստիկ սիրում եր ձեզ։ Ձեր բոլոր նամակները Ձեզին ծեղրայի կամոզում, վերնի ավկղում։ Գրում եք, թե հիվանդ եք, եսկ պատն Բլկովը չի թողնում, վոր այստր վորև և տնէ գնամ։ Ես ձեզ կգրեմ, իմ բարեկամ, խոստանում եմ, վոր կգրեմ, բայց միայն աստված դիտե, թե ինչ կարող և պատահել։ Այսպես ուրեմն, այժմ հրաժեշտ տանք իրար առաջին, իմ բարեկամ, իմ սիրելի, իմ հարազատ բարեկամ, առաջին... Ո՜հ, ինչպես հիմա կգրեյի ձեզ։ Մնաք բարով, իմ բարեկամ, Ձեզ բարով, Ձեզ բարով։ Ապրեցեք բախտավոր, ողջ ու առողջ։ Իմ ապրիքը հավիտյան ձեզ համար կլինի։ Ո՜, ինչքան սխտոր եմ, ինչպես ճնշվում և ամբողջ հոգիս։ Պարոն Բլկովը կանչում և ինձ։

Ձեզ հավիտյան սիրող՝

Վ.

Հ. Գ. Հոգիս այնքան լիքն և, այնքան լիքն և հիմա արցունքներով... Արցունքները խեղդում, պատառատում են ինձ։ Մնաք բարով։ Տեր իմ աստված, վորքան սխտոր եմ։

Հիշեցեք, հիշեցեք ձեր խեղճ Վարինկային։

Ջանիկս, Վարինկա, աղաչյակդ իմ, անգինդ իմ Ձեզ տանում են, դուք գնում եք։ Դե, ավելի լավ և հիմա սիրտս պոկեն կրծքիցս, քան թե ձեզ՝ ինձնից։ Այդ ինչպես դուք — Ահա, դուք լաց եք լինում և գնում եք։ Ահա այս բոպեիին ձեզնից նամակ ստացա, ամբողջովին արցունքով թրջված։ Նշանակում է, չեք ուզում գնալ, նշանակում է, զոռով են տանում ձեզ, նշանակում է, խղճում եք ինձ, նշանակած է, սիրում եք ինձ։ Բայց ինչպես թե, ում հետ պետք է լինեք այժմ։ Այնտեղ տխուր կլինեք, սիրտներդ վեր չի գա։ Դարդը կկրծի ձեր սիրտը, մինչից հիմ կանի։ Դուք կմնաք այնտեղ, տարը հողը կդնեն ձեզ, վոչ վոք էլ չեք ունենա այնտեղ, վոր լաց լինի ձեզ վրա։ Պարոն Բրկովը ամբողջ ժամանակ նապաստակները կլինի վորսալիս... Ախ, Ջանիկս, Ջանիկս այդ ինչ արիք, ինչպես կարողացաք այդպիսի բան վճռել։ Այդ ինչ արիք, ինչ արիք, այդ ինչ բնդրիք ձեր գլխին։ Ախր ձեզ գերեզման կդնեն այնտեղ. նրանք ձեզ կսպանեն այնտեղ, հրեշտակիկդ իմ։ Ջե՛ վոր, Ջանիկա, դուք ծուլ եք վեռուբի պես։ Վա՛յ, մեռնի իմ գլուխը, վիրտեղ էլի կնա։ Ել ինչ բանի էլի նայում կես, հիմարու։ Տեսնում եմ, կերեխան խնդուքիդ է անում, գլուխը ցավում է։ Դրանից էլ հեշտ բան, — բայց չե՛ վոր, չե՛. ինչպես վոր հիմար էլի, այնպես էլ հիմար ծնացի, վոչինչ չմտածեցի, վոչինչ չտեսա, հետ կասես իրավունք ունեի, հետ էլ գործն ինձ չեր վերաբերում, և դեռ վազվզում էլ էի ֆելդշալի հետևից... Ջե՛, Վարինկա, կես վեր կկենամ, մինչև վաղը վեր կկենամ, գուցե քե՛, կառողջանամ և վեր կկենամ... Ծնա՛, Ջանիկս, անիծյալի տակ կգցեմ ինձ, չեմ թողնի, վոր գնաք։ Բայց վոչ, այդ ինչ է խոսացնում։ Ո՞նչ իրավունք ունեմ։ Ծնա կդամ ձեզ հետ. ձեր կարեսի հետևից վազ կտամ, չեքե՛ ինձ չվերցնեք ձեզ հետ, վազ կտամ, ինչքան վոր վոտներումս ուժ կլինի, մինչև վոր շունչս հատնի։ Բայց գիտեք դուք, Ջանիկս, քե՛ ինչ կա այնտեղ, քե՛ ուր եք գնում։ Դուցե քե՛ չգիտեք, ապա ուրեմն ինձ հարցրեք։ Այնտեղ տափաստան է, բալիկս, տափաստան, մեռկ տափաստան, այ, ինչպես ձեռքիս ափը՝ մերկ։ Գնիկարմանն այնտեղ անզգա կե, մուժիկը անկիրթ, հարբեցող։ Այնտեղ հիմա ծառերի տերևները թափվել են, այնտեղ անձրևներ են գալիս, այնտեղ ցուրտ է, — և դուք այնտեղ եք գնում։ Դե՛, պարոն Բրկովն այնտեղ զբաղմունք ունի, նա իր նապաստակների հետ կլինի այնտեղ. իսկ դուք ինչ գիտի պետք։ Ուզում եք կալվածատերի կին լինել, Ջանիկս։ Դե՛, հրեշտակիկդ իմ, մեկ նայեցեք ձեզ, դուք

նամանաւ եք արդյոք կալվածատերի կնոջ... Ինչպե՞ս կարող է այդպիսի բան լինել, Վարինկա։ Ո՞ւմ պետք է նամակներ գրեմ, Ջանինկա։ Ձա՛ ես, մեկ լավ մտածեցնք, Ջանինկա, մեկ ինքներդ ձեզ հարցրեք, ես ու՞մ պետք է նամակներ գրի նա, այսինքն՝ կես։ Էլ ո՞ւմ պետք է Ջանինկ անվանեմ, ո՞ւմ պետք է տամ այդ սիրելի անունը։ Հնուց ձեր դաննեմ ձեզ, հրեշտակիկդ իմ։ Ես կմեռնեմ, Վարինկա, անպատճառ կմեռնեմ, սիրտս չի դիմանա այդպիսի մի դժբախտությանն։ Ես ձեզ սիրում եմ, ինչպես ատծու լույսը, սիրում եմ, ինչպես հարազատ աղջկաս, կես ձեր ամեն ինչը սիրում եմ, Ջանինկա, բալիկս, և ինքս էլ միայն ձեզ համար եմ ապրում։ Ես աշխատում եմ, ես գրքեր գրում, ման եմ գալիս, ես գրանում եմ իմ դիտողություններս տալիս եմ գրքին բարեկամական նամակների ձևով, այս բոլորը ձեզ համար եմ անում, վոր դուք, Ջանինկա, այստեղ, դիմացս, ինձ մոտիկ եյիք ապրում։ Դուք, գուցե ես, այս չդիտեիք էլ, բայց այդ իսկապես այդպես եր։ Լսեցեք, Ջանինկա, ինքներդ դատեցեք, իմ սիրելի աղավնյակ, այդ ինչպե՞ս կարող է լինել, վոր դուք հեռանաք մեզնից։ Բալիկս, ախր չի կարելի, վոր դնաք, անկարելի կե, ուղղակի կատարելապես վոչ մի հնարավորություն չկա։ Հրես անձրև է գալիս, խակ դուք քոչել եք, կմրսե՛ք։ Ձեր կառքը կբրջվի, անպատճառ կբրջվի. հենց վոր քաղաքից դուրս դնաք, կկոտրվի, դիտեմամբ կկոտրվի։ Ջե վոր այստեղ Պետերբուրգում կառքեները շատ վատ են շինում։ Ես այդ կառքի շինողներին բոլորին էլ ճանաչում եմ. նրանք միայն աշխատում են ձեզ պահպանել, վորևե մի խաղալիք կպցնել, բայց վոր ամուր լինի, կյանքում չեն շինում։ Ես, Ջանինկա, կչոքեմ պարոն Բըկովի առջև, կես նրան կպաշտպանեմ, բոլորը կպաշտպանեմ։ Դուք էլ, Ջանինկա, պաշտպանեք, որինակ կերպով պաշտպանեք նրան։ Ասացեք, վոր ձեռքի՝ չեք կարող դնալ... Ախ՛, ինչո՞ւ նա Մոսկվայում վաճառականի աղջկա հետ չամուսնացավ։ Թող այդպիսի մի աղջկա հետ ամուսնանար այնտեղ։ Վաճառականի աղջիկն ավելի կպաշտեր նրան. այդ արդեն չես գիտեմ, թե ինչու։ Իսկ կես ձեզ կպահեյի այստեղ ինձ մոտ։ Ախր նա ձեր բնչն ե, Ջանինկա, այդ Բըկովը։ Ինչո՞վ նա ձեզ հանկարծ սիրելի դարձավ։ Դուք, գուցե թե նրա համար, վոր նա շարունակ ֆալբալաներ և առնում ձեզ համար, դուք, գուցե թե, դրա համար։ Բայց ախր բնչ բան և ֆալբալան, ինչի՞ ես պետք ֆալբալան։ Ջե վոր դա հիմար բան և, Ջանինկա։ Այստեղ գործը վերաբերում է մարդկային կյանքին, խակ ֆալբալան,

ջանիկս, փալաս ես, փալասի մի կտոր։ Հրես քեզ էլ քեզ, հենց ոռճիկս ստանամ, ձեզ համար ինչքան ուզեք, ֆալբալա կառնեմ, կառնեմ ֆալբալա, ջանիկս. էս հրեն մի ծանոթ խանութի էլ գիտեմ. միայն թե սպասեցեք, վոր ոռճիկս ստանամ, հրեշտակիկդ իմ, Վարդինիկ։ Ախ՛, տեր իմ աստված, տեր իմ աստված։ Այդպես ուրեմն, դուք պարոն Բըկովի հետ անպատճառ տափաստան եք գնում, անդարձ գնում։ Ա՛խ, ջանիկս... Հմ, դուք ինձ մի պրեցեք, մի պրեցեք ինձ սմին բանի մասին, և էլրը եք գնալու, այնտեղից էլ նամակ գրեցեք։ Թե չեն հրեշտակդ իմ էլրկնայինն, չի՛ վոր այս վերջին նամակը կլինի, և չի՛ վոր վոչ մի կերպ չի կարող լինել, վոր այս նամակը վերջինը լինի։ Հա, ե՛, ինչպես կարող է պատահել, վոր այդպես հանկարծ, իսկապես, անպատճառ վերջինը։ Հմ, վմ՛չ, էս կգրեմ և դուք էլ գրեցեք... Թե չեն իմ վոճն էլ հիմա ձևավորվում է... Ախ, բալիկս, ինչքա՜ն պետք վոճը։ Հրես հիմա չեմ իմանում ինչ եմ գրում, ամենևին չեմ իմանում, վոչինչ չեմ իմանում, և գրածս չեմ կարդում, վոճս էլ չեմ ուղղում, այլ գրում եմ, միայն թե գրեմ, միայն թե շատ գրեմ ձեզ...

Աղաչելակդ իմ, բալիկս, ջանիկս։

ՍՊԻՏԱԿ ԳԻՇԵՐՆԵՐ

ՍԱՆՏԻՄԵՆՏԱԼ ՎԵՊ

(Շերազադի հիշատակարանից)

Գուցե նա սխալված եր,
Որ գնեց մի վայրկյան
Քո սրտին մոտ լինելու։

Խ. ՏՈՒՐԳԵՆԵՎ

ԱՌԱՋԻՆ ԳԻՇԵՐ

Ջմայլելի գիշեր եր, այնպիսի գիշեր, որպիսին լինում է գուցե միայն այն ժամանակ, սիրելի ընթերցող, երբ մենք յերիտասարդ ենք։ Յերկինքն այնպես աստղազարդ եր, պայծառ եր այնպես, որ, նայելով նրան, հարկավոր եր ակամա հարցնել՝ միթե մի այդպիսի յերկնքի տակ կարող են ապրել զանազան ցասկոտ ու քմահաճ մարդիկ։ Այս ևս մի նոր, գեղահաս հարց և, սիրելի ընթերցող, շատ գեղահաս, սակայն քեզ նա ստիպում հրամանով շատ հաճախ այցելի քո սիրտը։ Ուստի՛ր քմահաճ և զանազան ցասկոտ պարոններին մասին, յես չեյի կարող չհիշել և իմ բարեբարո վարմունքն այդ ամբողջ որը։ Թեև առավոտից ինձ սկսեց տանջել մի ինչ-որ զարմանալի անձկությունն, հանկարծ թվաց, որ ինձ, միանակի, ամենքը ձգում են ու ամենքը հեռանում են ինձանից։ Հարկավ, յուրաքանչյուրն ունի իրավունք հարցնելու.— ովքե՞ր են այդ ամենքը, որովհետև ահա ութ տարի յե՝ յես ապրում եմ Պետերբուրգում և դրեթե վոչ մի ծանոթություն չեմ կարողացել ձեռք բերել։ Բայց ինչի՞ս են հարկավոր ծանոթությունները։ Առանց այդ ևլ ամբողջ Պետերբուրգն ինձ ծանոթ է, ահա ինչու ինձ թվաց, թե ամենքն ինձ ձգում, հեռանում են, յերբ ամբողջ Պետերբուրգը հանկարծ վոտքի յելավ, գնաց ամառանոց։

Մենակ Ջեռլն ինձ համար զարձավ տանկալի։ Ամբողջ յերեք որ գնգնում եյի քաղաքում խորին թախիծի մեջ, մինչդամայն չհասկանալով, թե ինչ և պատահում ինձ։ Նևսկի պրոսպեկտն եյի գնում, թե պարոնզ, թե քափատում եյի առափնյա վողոցում, վոչ մի տեղ չեյի տեսնում վոչ մեկին այն մարդկանցից, վորոնց սովոր եյի տեսնել մինչդեռ տեղում վորոշյալ ժա-

մերին, ամբողջ տարին՝ Ինարկե, նրանք ինձ չեն ճանաչում, բայց կես ճանաչում եմ նրանց։ Ես շատ լավ եմ ճանաչում նրանց, կես գրեթե ուսումնասիրել եմ նրանց գնմքերը և հիանում եմ նրանցով, կերը ուրախ են, ու տխրում եմ, կերը մոայլված են։ Ես գրեթե բարեկամություն եմ հաստատել մի ծերունու հետ, որին հանդիպում եմ ամեն որ որոշ ժամին Ծոնատանկայի վրա։ Նրա գնմքը հանդիսավոր է, մտախոհ. շարունակ իր քթի տակ շշնջում է ինչ-որ և — ձախ ձեռքը քորփափում, ունենալով աջ ձեռում մի ճյուղավոր կերկայն ձեռնափայտ վոսկե կորով։ Նույնիսկ նա նկատել է ինձ ու կարեկից է գնալի ինձ։ Ես գրեթե պատահի մի որ, կերը կես որոշյալ ժամին Ծոնատանկայի վրայով չլինեմ, հավատացած եմ, որ նա կտխրի։ Ահա ինչի մենք կերբեմն քիչ է ՃՈՒՄ իրար բարևենք, մանավանդ կերբ կերկուսս էլ հոգևկան լավ տրամադրության մեջ ենք։ Նորեկս, կերբ մենք ամբողջ կերկու որ չեկինք տեսել իրար, և կերբորդ որը հանդիպեցինք, արդեն ուղում եկինք մեր գլխարկը բարձրացնել, կերբ բարեբախտաբար ժամանակին ուշքի կեկանք, ձեռներս իջեցրինք ու կարեկցաբար անցանք միմյանց մոտով։

Տներն էլ են ինձ ծանոթ։ Փողոցով անցնելիս, յուրաքանչյուրը նրանցից առաջ է վազում, նայում է ինձ իր բոլոր լուսամուտներով և քիչ է ՃՈՒՄ ասի. «Բարև, ինչպես է ձեր առողջությունը։ Ինքս, փառք աստծու, առողջ եմ և մայիս ամսին ինձ վրա մի հատ էլ կավելացնենք, կամ՝ «ինչպե՞ս է ձեր առողջությունը, իսկ ինձ վազը պիտի նորոգենք, կամ «քիչ ևր ՃՈՒՄ, որ այրվեի, և շատ վախեցած և այլն և այլն... Նրանցից միքանիսն իմ սիրելիներն են, կան և մերձավոր բարեկամներ։ Մեկը նրանցից մոտիկը և այս ամառ ճարտարապետի մոտ քըժկվվել։ Դիտմամբ ամեն որ նրան այցելելու կեմ, որպեսզի մի գուցե, տերը մի արտացե, վատթարանե նրա առողջությունը։ Ես կերբեք չեմ մոռանալ մի շատ գեղեցիկ բաց-վարդագույն առավոտություն։ Դա քառասնի մի տնակ ևր, այնքան վոքրիկ և այնքան բարեհամբույր ևր նայում ինձ և այնքան հպարտ ևր նայում իր սև հարևաններին, որ սիրտս ուրախանում ևր, կերբ անցնում եկի նրա մոտով։ Անցյալ շաբաթ անցնում եմ վոդոցով և հանկարծ լսում եմ մի սրտաշարժ ճիչ. «Ինձ նեղկում են գնդին գուլնույս։ Զարտպորձնները։ Բարբարոսները։ Նրանք վոչինչ չկնայեցին, վոչ այուններս, վոչ կատնիզնները, և իմ բարեկամը գնդնից ինչպես գնդձանիկ։ Այս առիթով քիչ ՃՈՒՄ, որ մաղձս յեռաց,

և ինձ մինչև այսօր էլ ուժ չունեմ տեսնելու իմ այլանդակված իրականությունը, որին նետվել են Հինաստանի պետական գուշտով։

Այսպես, ուրեմն, ընթերցող, դուք այժմ գիտեք, թե ինչպես եմ ծանոթվել Վասիլբուրգի հետ։

Ես արդեն ասացի, որ ամբողջ կերակուրը որ ինձ տանջում էր մի անհանգստությունն, մինչև որ գուշակեցի նրա պատճառը։ Փորոքնեղում ես վատ զգում էր — սա չկա, նա չկա, ձեր կարծիք այսինչը — իսկ տանը, ինչպես ասում են, ինքս իմը չկեր։ Ամբողջ կերկու կերակուր ձգտում էի գիտենալ՝ ինչ և պատճառում ինձ։ Ինչքա տանը նստելն ինձ համար այդքան տանջալի չես Հնով տարօրինակությունքով նայում էի միստավաճ, կանանշադրյա պատերին, Մատրոնայի հաշիվ չանքերով սարդի վտանգով վարագուրված առաստաղին, գիտում էի ամեն մի մեռոս, մանրելով, արդյոք չարիքը այդտեղ է թաղնված (վորովհետև կերը մի սեռոս էր կերակվա տեղում չես, ու չես իմ գլխի տերը չեմ), նայում էի լուսամուտին — քաղաքը դուրս, վոչ մի քիթքիթացնող Հես նայելիս կանչեցի Մատրոնային, հայրաբար հանդիմանելի սարդի վտանգի առիթով և առհասարակ նրա անփութությանը վերաբերմամբ, բայց նա միայն նայեց ինձ զարմացած ու հեռացավ, առանց իմ հարցերին պատասխանելու, այնպես վոր սարդի վտանգը մինչև այսօր էլ հանգիստ կախված է իր տեղում։ Վերջապես, այսօր առավոտ միայն գուշակեցի, թե ինչ է պատճառում ինձ Հես, չէ վոր ներանք ինձնից են ամառանոց վտարելու։ Վորովհետև չէ վոր ինչ-վոր կաթ-չկար պետք էր ուրիշ տեղ, կամ տեղափոխվել էր, կամ տեղափոխվում էր ամառանոց, վորովհետև յուրաքանչյուր ծանրաբեռն արտաքինով մի պատվավոր պարոն, վոր կատաղ էր վարձում, իսկույն ևեթ իմ աչքում դառնում էր ընտանիքի պատկառելի հայր, վոր իր տաղտկալից պաշտոնական գրասենյակների հետո ուղեվորվում է իր ընտանիքի գիրկը, ամառանոց, վորովհետև յուրաքանչյուր մի անցորդ այժմ ուներ միանգամայն ուրիշ մի տեսք, վորը քիչ էր Հես ամեն մի անցորդի ասի. ես ինձ, պարոններ, միայն անցորդիկ չեմ այսօր, ես ամառանոց եմ գնում։ Հենց վոր մի լուսամուտ էր բացվում, վորի ապակուն քիթիկնատրիկ երես նեղը և շաքարի նման ճերմակ մատիկներ, հենց վոր դուրս էր ցցվում մի սիրուն աղջկա գլխիկ, և աղջիկը կանչում էր անցնող ծաղկավաճառին, կես իսկույն ևեթ կերակա-

կայում էին, որ ծաղիկները գնվում են հենց այնպես, այսինքն՝ ոչ մի նրա համար, որ գնողը նրանցով զվարճանա քաղաքային տոթալի բնակարանում, այլ մի՝ ահա շուտով պիտի գնալ աժառանց և ծաղիկներն էլ պիտի տանեն իրենց հետ։ Այդ քիչ է. յես իմ յուրատեսակ գյուտարարությամբ ասպարեզում այնպիսի հաջողություններ ունեի, որ արդեն կարող էի անախալ, միայն արտաքինից դատելով, ասել, թե ով որ ամառանոցում և ապրում, կամենան և Ապտեկարսկի կղզիների կամ Պետերդոֆի ճանապարհի բնակիչները մյուսներից տարբերվում էին իրենց կեցվածքի ու ձևերի նրբությամբ, ամառային զբնաւոր զգեստներով և շքեղ կառքերով, որոնցով քաղաք էին գալիս։ Գատգոլովայի բնակիչներն այնտեղ, հեռվում էլ, առաջին իսկ հայացքից ճանաչում էին իրենց վողջամտությամբ և լրջությամբ։ Կրեատովսկի կղզու հաճախորդը տարբերվում էր իր անվրդով — զվարթ արտաքինով։ Ձերը տեսնում էի կա՛հ-կարատու, զանազան աշխոների, տեղացիների, տաճկական և ոչ տաճկական քաղմոցների ու այլևայլ տնայնի իրերի ամբողջ լեռներով բեռնավորված սայլերին հետ ընթացող սայլապանների յերկայն շարանը և այդ լեռների գագաթին փառավորապես քաղմած վարիտ խոհարարուհուն, որ իր սիրուղ ապրանքը աչքի լույսի պես է պահում, յերբ տեսնում էի տնային իրերով ծանր բեռնավորված նավակները, որ Նևայի կամ Մոնաստանկայի վրայով սահում էին դեպի Մեվ գետը, — իմ աչքում տատնապատկվում, հարյուրապատկվում էին թե սայլերն ու թե նավակները։ Ձեվ թվում էր ինձ, որ ամենն ինչ վաղուց չի եղել, ամենն ինչ տեղափոխվել և ամառանոց, թվում էր, որ ամբողջ Պետերբուրգն ապառնում է ամայանալ, անապատ դառնալ, այնպես որ, վերջիվերջո, յես սկսեցի ամաչել վիրավորվել ու տխրել, որ ինքս ձեռնհասությունս չունեի ամառանոց գնալու։ Ես պատրաստ էի գնալ յուրաքանչյուր սայլի հետ, յուրաքանչյուր պատկառելի արտաքին ունեցող և սայլ վարձած պարոնի հետ։ Բայց, ավաղ, վիշ մինչ և վիշ վոք ինձ չէր հրավիրում։ Կարծես ինձ մոռացել էին, կարծես յես նրանց համար իսկապես ոտար էի։

Մի որ յես շատ յերկար մտն յեկա, այնչափ, որ, համաձայն իմ սովորության՝ մոռացա ուր լինելս. յերբ հանկարծ ինքս ինձ տեսա քաղաքի մաքսային արգելանի մոտ։ Վայրկենապես ինձ պատշաճեց մի ուրախություն, և յես ցանկալով արգելանի մյուս կողմը, քայլեցի ցանված արտերի ու արոտատեղերի միջով։ Ես հոգնա-

Ծուխ չկար, դղում էր միայն իմ ամբողջ կազմով, որ մի ինչ-որ բան ընկնում է իմ հոգուց։ Բոլոր անցորդները նայում էին ինձ այնքան զարհուրած, որ քիչ էր մնում գլուխ տային ինձ։ Ամենքն ուրախ էին, չգիտեմ ինչու, ամենքն, առանց բացառության, սիրտ էին ծխում։ Ինձ կես այնչափ էլ ուրախ, որչափ կարող չկար լինել Տարծես հանկարծակի ընկել էի Իտալիա. բնությունն այն աստիճանի զորեղ էր վոգևվորել ինձ, հիացահիմնադ զարթացուս, որ քիչ էր Ծագել խեղդվիր քաղաքի պատերի մեջ։

Կա ինչ-որ մի անբացատրելի-սրտաշարժ բան մեր պետրոսբուրգյան բնության մեջ, կարդ նա գարնան սկզբին հանկարծ արձակում է կարկնքից տրված իր բոլոր ուժերը, դուզվում ու զարդարվում է բոլոր գույներով... Նա ինձ ակամա հիշեցնում է այն հիվանդոտ ու վտիտ աղջկան, որին նայում ես կարեկցությամբ, կարեկցություն կարեկցական սիրով, կարեկցություն էլ ուզակի չես նկատում նրան, և որը, սակայն մի վայրկյան դառնում է անբացատրելիորեն գեղեցիկ, և դուք սքանչացած, անկամա հարցնում եք. այդ վիր զորությունն է ստիպել այդ տխուր, մատիտի աչքերին այդպիսի հրով փայլելու։ Ի՞նչն է արյունը մղել դեպի այդ դունատ ու նիհար այտերը։ Ի՞նչն է կրքով վազդել դեմքի այդ նուրբ ու քնքուշ գծերը։ Ինչու՞ է այդպես վառվում այդ կուրծքը։ Ի՞նչն է այդպես հանկարծակի ուժ, կյանք ու գեղեցկություն տվել խեղճ աղջիկ կերևին, ինչն է ստիպել այդ կերևը վազել այդպիսի ժպտուն, կենդանանալ այդպիսի կայծակնային ու ապտղուն ծիծաղով։ Դուք նայում եք ձեր շուրջը, դուք մնում եք մենկին, դուք աշխատում եք գուշակել... Սակայն վայրկյանն անցնում է, և դուցե վաղը դուք նորեն հանդիպելք նույն մտախոհ ու ցրված հայացքը, ինչ-որ առանձ եր, նույն դունատ կերևը, նույն հեզությունն ու անվատահությունը շարժումներին և նույնիսկ մի տեսակ մեռելային անձկություն ու գղջում բոլոր էության համար... Ցավ դուք ցավում եք, որ այդպես շուտ, այդպես անվերադարձ թռավ վայրկենական դեղեցկությունը, որ նա այդպես խորասուխկ և դուք վազից ձեր առջև, ցավում եք այն պատճառով, որ նրան սիրելու անգամ ժամանակ չունեցաք...

Այնուամենայնիվ, իմ գիշերն էլ ավելի լավ, քան ցերեկը։ Ահա թե ինչպես։

Ես քաղաք էի գա շատ ուշ, և արդեն տասը ժամը զարկել եր, երբ մոտեցա իմ բնակարանին։ Ես գալիս էի ջրանցքի

առաջինյա փողոցով, ուր այդ ժամին վոչ վոք չի լինում սովորաբար։ Նա ապրում եմ քաղաքի ամենահեռավոր մի մասում։ Նա գալիս նյի յերգելով, վորովհետև յերբ յես յերջանիկ եմ, անպատճառ մի բան մրթմրթում եմ քիթիս տակ, ինչպես և ամեն մի յերջանիկ մարդ, վոր չունի վոչ բարեկամներ, վոչ բարի ծանոթներ, վորոնց հետ կարողանար բաժանել իր ուրախությունը։ Հանկարծ ինձ պատահեց մի ամենաանսպասելի արկած։

Ջրանցքի ափին կանգնած եր մի կին։ Ծանկապատին հենված՝ նա, ըստ յերևույթին, նայում եր ջրանցքի պղտոր ջրին։ Նա հագած եր սենապարզ անագույն վերարկու և գլխին դրած եր մի սիրուն գեղանագույն գլխարկ։ «Սա աղջիկ ե, և անպատճառ անահերդ», մտածեցի յես։ Նա կարծես չլսեց իմ քայլերի ձայնը, նա նույնիսկ չշարժվեց, յերբ յես անցա նրա մոտով՝ շունչս պահած և սաստիկ բաբախող սրտով։ «Ծարդրինակ և, մտածեցի յես, յերևի նա շատ խորը մտածմանն մեջ ե», և հանկարծ տեղն ու տեղս կանգ առա բնավռնածի պես։ Ինձ լսեցի մի խուլ հեկեկանք։ Այո, յես սխալված չեյի. աղջիկը լալիս եր և հետզհետե ավելի ու ավելի ուժգին։ Ատելած իմ։ Սիրտս սկսեց ճմլտալել։ Վորքան ել կանանց վերաբերմամբ տատամսոտ լինեյի, բոլորն բացառիկ եր։ Ինձ հետ դարձա, մոտեցա նրան և անպատճառ հարատասանեյի «սիրուհիդ», յեթե չգիտնայի, վոր այս ածականը հազար անգամ արտասանվել ե ռուսական քոլոր քարձրաշխարհիկ վեպերում։ Այդ եր միայն, վոր լեզուս զսպեց։ Բայց մինչ յես մաքում մի ուրիշ բառ եյի փնտռում, աղջիկն ուշքի յեկավ, հետ նայեց, շփոթվեց ու շտապեց հեռանալ ինձնից։ Ինձ անմիջապես հետևեցի նրան, բայց նա, այս տեսնելով, քողեց ավելը, անցավ դիմացի մայթը։ Ինձ չհաջողվեցավ փողոցն անցնել։ Սիրտս քրքռում եր՝ ինչպես վորսված քոշնիկի սիրտը։ Հանկարծ մի դիպվածն ինձ ոգնության յեկավ։

Մայթի մյուս կողմում, իմ անծանոթուհուց վոչ հեռու յերեվաց ֆրակը հագին սուխոդ տարիքով, բայց չի կարելի ասել սուխոդ քայլվածքով մի մարդ։ Նա ընթանում եր յերևելով և զգուշաբար հենվելով պատերին։ Իսկ աղջիկը սլանում եր սլաքի պես, փուտկոտ և անվատահ, ինչպես ընթանում են առհասարակ այն բոլոր աղջիկները, վորոնք չեն կամենում, վոր վորևե մեկը ցանկություն հայտնի՝ դիշերը նրանց ուղեկցելու դեպի տուն։ Ինձ պետք եր, յերևույթ պարոնը յերբեք չեր կարող նրան հասնել, յեթե իմ հակառակորդը նրան չդրդեր արվեստական միջոցների դիմելու։

Ինչ անա հանկարծ իմ պարոնը, առանց մի բառ արտասանելու, իր կանդնած տեղից պոկվում է և արնքամց վազում է իմ անծանոթուհու հետևից։ Աղջիկը թռչում եր հողմի պես, բայց չկարողացավ պարոնը հասավ նրան։ Աղջիկը ճչաց, իսկ չես... որ նա իմ հանկարծապրին այն կեսկեսուռ ձեռնափայտի համար, վոր այս անգամ իմ աջ ձեռքումն եր։ Նա վայրկենապես անցա մայթի մյուս կողմը, վայրկենապես անհոգ պարոնը հասկացավ բանի նյութությունը, անհագիելի խնդասուրությունը հաշվի առավ, լռեց, հետ քաշվավ և միայն այն ժամանակ սկսեց իմ դեմ բողոքել բավականին յուռութուն ածականներով, վորը մինչ այդպես շատ հետաքրքիր։ Սակայն նրա խոսքերը հաղիվ-հազ հասան մեր լսելիքին։

— Տվեք ինձ ձեր ձեռը,—ասացի չես իմ անծանոթուհուն, — և նա այլևս չի համարձակվիլ մեզ մերձենալու։

Նա լուռ տվեց ինձ իր ձեռը, վոր դեռ դողում եր ահից ու հուզմունքից։ Ա՛հ, անհոգ պարոն։ Ինչպե՞ս չես այդ բոլորին սրտնեում հյուր քեզ։ Ինչ քնքշակի նայեցի աղջկան։ Նա շատ սիրուն եր ու անահիտ. չես գուշակել հյուր նրա ան արտասանությունը վրա ամենևին վայլում եր արտասուքը՝ այժմյան ահից թե առաջվա վշտից—չգիտեմ։ Բայց շրթունքների վրա արդեն փայլում եր ժպիտը։ Նա նայեց ինձ նուշնպես դողդոջուկ, քնքշակի կարմրեց և հայացքը վար նետեց։

— Ահա տեսնում եք, ինչու այն ժամանակ չէիք ցնծում ձեզ մերձենալուս Ինչ ես չես ձեզ մոտ լինելի, վոչինչ չեր պատահի...

— Ինչ ձեզ չեյի ճանաչում. չես կարծում հյուր դուք եք...

— Բայց մի՞թե այժմ ինձ ճանաչում եք։

— Մի փոքր։ Ահա, որինակ, ինչու համար եք դողում։

— Ա՛հ, դուք գուշակեցիք հենց առաջին հայացքից,—պատասխանեցի չես՝ աղջկա խնդացիությամբ հիացած։ — Այո, դուք հենց առաջին հայացքից գուշակեցիք։ Ճիշտ է, չես կանանց վերաբերմամբ քաջարի չեմ, չես հուզված եմ, չեմ վիճում, ձեղնից վոչ պակաս, մի քիչ առաջ, երբ այդ պարոնը ձեզ վախեցրեց... Այժմ չես ինչվոր ահի մեջ եմ։ Կարծես չերակում եմ, իսկ չես չերակում եք չեյի կարող չերևակայել, թե ինչքանից պիտի խոսեմ վարեմ մի կնոջ հետ։

— Ինչպես։ Մի՞թե...

— Այո, մի՞թե իմ ձեռը դողում է, պատճառն այն է, վոր չերբեք նրան չի անցել մի այնպիսի փոքրիկ ու սիրունիկ ձեռ,

վորպիսին ձերն եւ Ձեռ միանգամայն խորհացնել եմ կանանցից, այսինքն՝ ես երբեք չեմ եղ ընտելացել նրանց... ես միևնակ եմ... Ձեռ մինչև անգամ չգիտեմ՝ չասացի՞ արդյոք ձեզ վորևե հիմարություն։ Ասացեք ինձ ուղղակի. կանխավ ասում եմ, վոր ես վիրավորվող մարդ չեմ...

— Վոչ, դուք վոչ մի հիմարություն չասացիք, ընդհակառակը։ Ձեվ յերեք դուք պահանջում եք, վոր արտաքոց լինեմ, կասեմ ձեզ, վոր տղամարդի այդ տեսակ անհամարձակությունը կանանց դուր ե գալիս, իսկ յերեք կամենում եք ավելին գիտենալ, ինձ եղ նա դուր ե գալիս, և ես մինչև տուն ձեզնից խույս չեմ տալու։

— Վախենում եմ դուք այնպես անեք, — սկսեցի ես հիացմունքից խեղդվելով, — վոր ես դադարեմ անհամարձակ լինելուց, այն ժամանակ ինձ քարով իմ միջոցներս...

— Միջոցներ։ Ի՞նչ միջոցներ, ինչի՞ վերաբերմամբ։ Այդ արդեն վատ է։

— Ներեցեք, չեղվիցս թռավ այդ խոսքը, բայց ինչպես կկամենայիք, վոր այսպիսի մի րոպեյին չլիներ ցանկություն...

— Ցանկություն դուր գալու, արդյոք։

— Դե, իհարկե։ Ի սեր աստծու, յեղեք բարի, ինքներդ գտեցեք, ձվ եմ ես։ Ահա արդեն քսանվեց տարեկան եմ և յերբեք վոչ մեկին չեմ տեսել։ Ուրեմն ինչպես կարող եմ խոսել և՛ լավ, և՛ հաջող, և՛ տեղին։ Ձի վոր ձեզ համար ձեռնտու չե, վոր ես լինեմ անկեղծ ու պարզ։ Ձեռ չգիտեմ լռել, յերբ սիրտս և խոսում իմ մեջ։ Այո, իհարկե, միևնույնն եւ Հավատացեք, վոչ մի կին, յերբեք, յերբեք։ Վոչ մի ծանոթություն Ձեվ ամեն որ յերազում եմ, քեզ, վերջապես, յերբևե ես կհանդիպեմ վորևե մեկին։ Ախ, յերեք դուք գիտենայիք քանի անգամ եմ ես այս ձեռվ սիրահարվել...

— Բայց ինչպես, ձեմ վրա...

— Վոչվորքե, իզնակես վրա, նրա, վորին տեսնում եմ յերազումս։ Ձեռ իմ տեսիլների մեջ ստեղծում եմ ամբողջ վեպեր։ Ա՛հ, դուք ինձ չեք ճանաչում։ Ճիշտ ե, առանց այդ չի լինել, մի յերկույերեք կանանց հանդիպել եմ, բայց ինչ կանայք եյին։ Տնտեսուհիների նման քաներ եյին, այնպես վոր... Բայց ես ձեզ պիտի ծիծաղացնեմ, ես ձեզ կասեմ, վոր ես մի քանի անգամ մտածել եմ վոդոցուս մի վորևե արիստոկրատ կնոջ հետ պարզ և պարզ խոսել, իհարկե, յերբ նա մենակ և, խոսել, ինչ ասել կուզեն, հարցանքով, անհամարձակ, կրքոտ, ասել, վոր ես կործանվում եմ

մնա-մնաք, որ քող նա ինձ չվանդի, որ չունեմ ուրիշ միջոց դոնե մի կին ճանաչելու, ներշնչել նրան այն միտքը, որ կնոջ պարտականությունն է չմերժել ինձ պես դժբախտ մարդու խնդումկ աղերսը։ Մոռանել եմ ասել, որ իմ ամբողջ պահանջը վերջապես այն է, որ իրավունք տրվի ինձ ինչ-որ մի-երկու յեղբայրական խոսքեր ասելու, որ հենց առաջին քայլից ինձ չվանդի, հավատա ինձ, ասելիքս լսի, ծիծաղի ինձ վրա՝ յեթե կամենա, հուսադրի ինձ, մի յերկու խոսք ասի, միայն յերկու խոսք, այնուհետև քող ինկուզ այլևս չհանդիպենք իրար։ Բայց դուք ծիծաղում եք... ասելիք չես դրա համար էլ ասում եմ...

— Ընդհանաք, չես ծիծաղում եմ այն բանի վրա, որ դուք ինքներդ ձեր թշնամին եք։ Ցնցեք դուք փորձեյլը, գուցե ձեզ հաջողվեր, ինկուզ բանը փոդոցում պատահեր... Որքան պարզ, այնքան լավ։ Ոչ մի բարի կին, յեթե միայն հիմար չի կամ այդ պահին առանձնապես բարկացած չի վրանև բանի վրա, չեր համարձակվի ձեզ վոնդել՝ առանց ձեր աղերսած այդ յերկու խոսքն ասելու... Սակայն, ինչ եմ ասում։ Ի հարկե, ձեզ խնդապարի տեղ կընդուներ։ Չես գտնում եմ ըստիս։ Չես ինքս շատ բան գիտեմ այդ մասին, քեն մարդին ինչպես են ապրում աշխարհի վրա։

— Ա՛հ, շնորհակալ եմ, — գոչեցի յես, — դուք չգիտեք, քեն ինչ արիք ինձ համար։

— Լավ, լավ։ Բայց, ասացեք խնդրեմ, ինչից դուք գիտացաք, որ յես մի այնպիսի կին եմ, որի հետ... որին, վերջապես, դուք համարեցիք արժանի... ուշադրության ու բարեկամության։ Որին, կարճ ասած, չհամարեցիք, ինչպես դուք անվանեցիք, տնտեսուհի։ Ինչու՞ դուք վճռեցիք ինձ մոտենալ։

— Ինչու՞ Ինչու՞ Բայց դուք ձեռնակ եյիք, այն պարոնը չտիպատնց համարձակ եր, այժմ գիշեր եւ Համաձայնվեցիք, որ այդ իմ պարտականությունն եր...

— Վո՛չ, վո՛չ, այդ չեմ ասում, այլ այն, ավելի առաջվանը։ Ջե՞ որ դուք այդ պարոնին տեսնելուց առաջ էլ կամեցաք ինձ մոտենալ։

— Այնտեղ, մյուս կողմից, ձեմարիտն ասած՝ չգիտեմ ինչ պատասխանել... Ցնվ վախենում եմ... Գիտեք, յես այսոր յերջանիկ եյի, յես գնում եյի յերգելու։ Ցես յեղել եյի քաղաքից դուրս։ Ցես յերբեք չեյի ունեցել այդպիսի յերջանիկ րոպեներ իմ կյանքում։ Դուք... չգիտեմ, կարելի յե՞ ինձ այդպես թվաց... Ներեցեք ինձ, որ սիրտ հիշեցնեմ... ինձ թվաց, որ դուք լալիս եյիք, և

յես... չեյի կարող լսել այդ... իմ սիրտը նեղվում եր... Ա՛հ, աստված իմ... մ՛ըթե յես չեյի կարող կարոտել ձեզ... Մ՛ըթե դեպի ձեզ յեղբայրական կարեկցությունը զգալը մեղք եր... Ներեցեք, յես ասացի, կարեկցությունս... Մի խոսքով, մ՛ըթե յես կարող եյի ձեզ վիրավորել նրանով, որ ակամա ժառանգեցի ձեզ մոտենալ...

— Թողեք, բավական ե, մի խոսեք, — արտասանեց աղջիկը, հայացքը ցած նետելով և սեղմելով ձեռքս։ Մեղավորը յես եմ, որ այդ մասին խոսք բաց արի, բայց ուրախ եմ, որ ձեր վերաբերմամբ չսխալվեցի... Բայց ահա արդեն հասանք մեր տունը, յես պիտի անցնեմ այդ ներբանցքը, յերկու քայլ ե... Գնաք բարով, ընորհակալ եմ...

— Բայց մ՛ըթե, մ՛ըթե մենք յերբեք այլևս չպիտի հանդիպենք իրար... Մ՛ըթե դրանով ել պիտի վերջանա։

— Տեսնում եք, — ասաց աղջիկը, ծիծաղելով, — սկզբում դուք միայն յերկու խոսք եյիք ցանկանում, իսկ այժմ... Բայց, սակայն, յես ձեզ վոչինչ չեմ ասի... Գուցե և հանդիպենք իրար։

— Ցես վաղն այստեղ կգամ, — ասացի յես։ — Ա՛հ, ներեցեք ինձ, յես արդեն պահանջում եմ...

— Այո, դուք անհամբեր եք... Դուք դրնեթե պահանջում եք...

— Լսեցեք, լսեցեք, — ընդհատեցի յես, — ներեցեք, յեթե յես դարձյալ ասեմ մի վորևե անհարմար բան... Բայց ահա ինչ, յես չեմ կարող վաղն այստեղ չգալ։ Ցես յերազող մարդ եմ, յես այնքան քիչ իրական կյանք ունեմ, վոր այնպիսի րոպեները, վորպիսին և ներկայինը, համարում եմ այնքան հազվագյուտ, վոր չեմ կարող այդ րոպեները չկրկնել իմ յերազների մեջ։ Ցես ձեր մասին կերազեմ ամբողջ գիշեր, ամբողջ շաբաթ, ամբողջ տարի։ Ցես վաղն անպատճառ կգամ այստեղ, ճիշտ այստեղ, նույնիսկ հենց այս վայրը և ճիշտ սույն ժամին ու կլինեմ յերջանիկ, յերևակվանը հիշելով։ Այս վայրն ինձ համար արդեն սիրելի յես Պետերբուրգի մեջ յես ունեմ յերկու-յերեք այսպիսի տեղեր։ Ցես մի անգամ նույնիսկ լաց եմ յեղել հիշողություններից, ինչպես դուք... Ա՛խ պիտեն, գուցե դուք ել արանից տասը րոպե առաջ լաց եք յեղել հիշողություններից... Բայց ներեցեք ինձ, յես նորից ինձա ժոռացա, գուցե դուք յերբևե այստեղ յերջանիկ եք յեղել...

— Լավ, — ասաց աղջիկը, — վաղը յես ել գուցե գամ այստեղ տասը ժամին։ Տեսնում եմ, վոր այլևս չեմ կարող ձեզ պահել... Բանն այն ե, վոր յես պետք և այստեղ լինեմ, չկարծեք՝

քեզ տեսակցություն եմ նշանակում, վերջ, դես այստեղ պիտի լինեմ ինձ համար։ Բայց ահա ինչ... գե լավ, դես ուղղակի կասեմ. վերջինը, ինչև գոք եվ գաք, առաջինը՝ վոր գարձյալ կարող ե այստեղ գես տնախորժությունը պատահել, սակայն այս մի կողմ թողնենք... Մի խոսքով, դես կկամենայի պարզապես ձեզ տեսնել, վորպեսզի ձերից խոսք առնեմ ձեզ։ Միայն, գիտեք, ինձ չպիտի մեղադրեք, այնպես չե՞։ Չկարծեք, վոր դես հեշտությամբ եմ տեսակցությունը նշանակում... Ցես չեյի եվ նշանակի, ինչև... Բայց ինչ այս իմ գաղտնիքը լինի։ Միայն կանխապես մի պայման...

— Պայման։ Ասացեք, ասացեք, ամեն ինչ ասացեք կանխավ, դես ամեն ինչի համաձայն եմ, պատրաստ եմ ամեն բանի, — գոչեցի դես հիացմամբ, — դես իմ վասին պատասխանատու եք, դես կլինեմ հնազանդ, որինակելի... Գուք ինձ ճանաչում եք...

— Ցես ել հենց նրա համար եմ ձեզ վաղը հրավիրում, վոր ձեզ ճանաչում եմ, — արտասանեց ազդիկը, ծիծաղելով։ — Ցես ձեզ ճանաչում եմ կատարելապես։ Բայց նայեցեք, ինչևք պայմանով. առաջինը (միայն բարի յեղեք կատարելու բոլորը, ինչ վոր պիտի խնդրեմ, — անհանձն եք, դես անկեղծորեն եմ խոսում)՝ չխրտնացրվեք ինձ վրա... Այդ չի կարելի, հավատացնում եմ ձեզ։ Բարեկամությանը համար պատրաստ եմ, ահա իմ ձեռը... Իսկ սիրահարվել չի կարելի, խնդրում եմ...

— Սիրվում եմ, — գոչեցի դես, բռնելով նրա ձեռը։

— Բավական ե, մի յերդվեք, գիտեմ, գուք պատրաստ եք վաղվի ինս պայքելու։ Մի գատապարտեք ինձ այսպես խոսելու համար... Ցեքն գուք գիտեյիք... Ցես ևս չունեմ մեկը, վորի հետ կարողանայի մի խոսք խոսել և վորից կարողանայի մի վոևե խորհուրդ հարցնել։ Դարկին, հո չի՞ կարելի փողոցներում խորհրդատուներ վնտռել, գուք բացատրեյեն եք։ Ցես ձեզ այնպես եմ ճանաչում, վոր կարծես քսան տարի բարեկամներ ինչք յեղել... Գուք չեք գավաճանի ինձ, այնպես չե՞։

— Գուք կտեսնեք... Միայն քե դես չգիտեմ՝ ինչպես պիտի սպրեմ մինչև վաղը։

— Ինեցեք ամուր, բարի գիշեր, և հավատացեք, վոր դես սրտին հավատում եմ ձեզ։ Մի քիչ առաջ գուք այնպես լավ ասացեք, քե մերքե յուրաքանչյուր զգացմունք, նույնիսկ յեղբայրականն համակրանքի համար պիտի հաշիվ տար։ Գիտե՞ք, գա այնքան լավ եր ասված, վոր նույն վայրկյանին իմ մեջ միտք ծագեց՝ հավատալ ձեզ...

— Բայց, ի սեր աստծու, ինչո՞ւմ հավատալ։ Ո՞նչ։

— Մինչև վաղը։ Այժմ թող այդ գաղտնիք ճնաւ Ավելի լավ կլինի ձեզ համար, քնկուզ հեռվից կնմանվի մի ռոմանին կարելի չե, չես վաղը ձեզ կասեմ, կարելի չե, վոր չասեմ եւ ճնաւ դեռ ևլի կիսոսեմ ձեզ հետ, մենք ավելի կծանոթանանք իրար...

— Ո՞, իհարկե, վաղը չես իմ մասին ամեն ինչ կպատմեմ ձեզ։ Բայց այս ինչ ե, կարծես, հրաշք և պատահում ինձ... Վեր-տեղ եմ չես, աստված իմ։ Աստղեր, մի՞թե դուք գոհ չեք, վոր չբարկացաք, չվոնդեցիք ինձ հենց սկզբում, մի ուրիշ աղջիկ պես։ Միայն յերկու բոպե, և դուք ինձ արդեն ընդմիշտ յերջանկացրիք։ Այո, յերջանկացրիք։ Ով գիտե, գուցե դուք ինձ հաշտեցրիք ինձ հետ, գուցե փարատեցիք իմ կասկածները... Գուցե չես այնպիսի բոպեներ ունեմ, վոր... Բայց, այո, վաղը չես ամեն ինչ կպատմեմ, դուք ամեն ինչ կիմանաք, ամեն ինչ...

— Հավ, ընդունում եմ, հենց ինքներդ ել կսկսեք...

— Համաձայն եմ։

— Ծոհսուքյուն։

— Ծոհսուքյուն։

Ցեվ մենք բաժանվեցինք։ Ճնաւ չբլնցի ամբողջ գիշեր. չես սիրտ չարի տուն դառնալ, չես այնպես յերջանիկ եյի... Մինչև վաղը։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԻՇԵՐ

— Ահա, և ապրեցիք մինչև այս ժամը,— ասաց աղջիկը ծիծաղելով և ձեռքս սեղմելով։

— Այդքան յերկու ժամ և այստեղ եմ, չգիտեք՝ ինչ դրության մեջ եյի ամբողջ որը։

— Գիտեմ, գիտեմ... Բայց դեպի գործ։ Գիտեք ինչու համար յեկա։ Ջե վոր յերեկվա նման ընդհատանություն չպիտի ջարդ-կրատենք։ Ահա ինչ. մենք պետք և այստեղից խելացի վարվենք։ Ճնաւ այդ մասին յերկար եմ մտածել յերեկ։

— Ի՞նչ բանում, ինչ բանում պիտի խելացի վարվել։ Իմ կողմից, չես պատրաստ եմ, բայց, հավատացեք, կյանքումս ավելի խելոք բան չի պատահել ինձ, քան այժմ...

— Իրոք։ Առաջինը՝ խնդրում եմ ձեզ, այդպես մի սեղմեք իմ ձեռները, յերկրորդ՝ հայտնում եմ ձեզ, վոր այստեղ չես ձեր մասին յերկար մտածեցեք։

— Հետո, ինչով վերջացավ։

— Ինչով վերջացավ։ Վերջացավ նրանով, որ հարկավոր է ամեն բան նորից սկսել, որովհետև մորպես իշխանապետության այս ամսոր մորոշեցի, որ դուք դեռ ինձ բոլորովին անծանոթ եք, որ ես կարեկ վարվեցի ինչպես մի կարեկա կամ մի աղջիկ և, ինարկե, դուրս չկավ, որ մեզավորն ամեն բանի մեջ իմ բարի սերտն է, այսինքն՝ ես ինձ զովեցի։ Այս պատճառով, որպեսզի սխալս ուղղեմ, վճռեցի ամենամանրամասն կերպով տեղեկանալ ձեր մասին։ Բայց մորովհետև չկա մի ուրիշը, որից տեղեկանայի, ուստի ինքներդ պիտի ինձ պատմեք ամեն ինչ տակից մինչև ղլուխ։ Ինչ, սասցեք, ձվ եք, ինչ մարդ եք դուք։ Շուտ սկսեցեք, պատմեցեք ձեր պատմությունը։

— Պատմությունը։ — զոչեցի ես, վախեցած, — պատմությունը։ Բայց ձվ ձեզ ասաց, թե ես պատմություն ունեմ։ Ես պատմություն չունեմ...

— Ուրեմն ինչպես եք ապրել դուք, քանի որ պատմություն չունեք, — ընդհատեց նա խոսքս, ծիծաղելով։

— Միանգամայն ուստնց մորենե պատմություններին։ Ապրել եմ հենց այնպես, ինչպես միղնում ապում են, ինքս ինձ համար, այսինքն՝ մենե-մենակի միանգամայն մենակ, — հասկանում եք՝ ինչ ասել է մենակ։

— Բայց ինչպես մենակ։ Այսինքն դուք չեք ծնողքի չե՞ք ունեցել։

— Ո՛, մոչ, ունենալը ունեցած եմ, բայց և այնպես մենակ եմ։

— Ուրեմն դուք մոչմորքի հետ չե՞ք խոսում։

— Հազվ իմաստով մոչմորքի հետ։

— Բայց ձվ եք դուք, բացատրեցեք։ Սպասեցեք, ես գուշակում եմ, մորեկ դուք էլ ասա ունեք ինձ նման։ Իմ ասած կուրը և ես ահա ամբողջ կյանքս նա ինձ մոչ մի անգ չի քողել գնալու, այնպես որ ես գրեթե խոսելը միանգամայն մոռացել եմ։ Բայց մեր ես սրանից մեկու ասրի ասած չարաճճությունն արի, նա անասել, որ ինձ պահել անկարելի է, կանչեց ինձ և դնդասեղով իմ ղլխատը կպցրեց իր ղլխատին — և այն ժամանակից ահա ամբողջ սրեքով նստած ենք միասին։ Նա գուլպաներ և հյուսում՝ քանի կուրը և, իսկ ես պիտի նրա մոտ նստեմ՝ կար անեմ կամ բարձր ձայնով գիրք կարդամ նրա համար։ Դա մի տարորինակ սովորություն է, որ ես ահա մեկու ասրի է արդեն գնդասեղով կպած եմ իմ տատին։

— Ա՜հ, աստվածի իմ, ինչ դժբախտություն։ Վա՛յ, կես այդ-պիսի տատ չունեմ։

— Քանի վոր չունեք, այդ ինչպես եք կարողանում տանը նստել։

— Լանցնեք, դուք կամենո՞ւմ եք գիտնալ՝ ով եմ կես։

— Դե, իհարկե, իհարկե։

— Բառի լուրջ իմաստո՞վ։

— Բառի ամենալուրջ իմաստով։

— Համեցեք, կես տիպ եմ։

— Տ՛ետ, տ՛ետ։ Ինչ տիպ, — գոչեց աղջիկը, այնպես քըր-քջալով, վոր կարծես ամբողջ մի տարի նրան չեր հաջողվել ծիծաղել։ — Ձե, չե՛, ձեզ հետ շատ զվարճալի կես։ Տեսեք, այստեղ մի նստարան կա։ Նստեք։ Այստեղ վոչվոք չի շրջում, մեզ վոչ-վոք ականջ չի դնի, և սկսեցեք ձեր պատմությունը, վորովհետև դուք այլևս ինձ չեք կարող հավատացնել, թե պատմություն չունեք։ Ունեք, միայն թաղցնում եք։ Առաջինը՝ ինչ բան և տիպը։

— Տիպը։ Տիպը մի որիգինալ բան և, այնպես, մի ծիծա-ղելի մարդ, — պատասխանեցի կես, ինքս էլ քրքջալով նրա ման-կական ծիծաղից հետո։ — Դա մի տեսակ բնույթ եւ Լանցնեք, գի-տեք արդյոք ինչ ասել է յերազող։

— Ցերազո՞ղ։ Ինչպե՞ս չգիտնալ։ Ցես ինքս յերազող եմ։ Պատահում է, վոր տատիս մոտ նստած՝ ինչքեր ասես պաշարում է գլուխս։ Ցնվ ահա սկսում ես յերևակայել այնպես, վոր, ինչ ասեմ, հանկարծ չինական մի իշխանի հետ ես ամուսնանում։ Բայց չե՛ վոր դա յերբեմն լավ է — յերազելը։ Մանկա՛ն, վա՛յ, աստված գիտե։ Մանավանդ, յերբ առանց այդ էլ ուրիշ մտածելու բաներ կան, — ավելացրեց աղջիկն այս անգամ բավականին լուրջ։

— Շատ բարի։ Ցերբ դուք ամուսնացել եք չինական թուլղի-խանի հետ, ուրեմն, միանգամայն, հասկանում եք ինձ։ Դե, լսե-ցեք... Բայց ներողությո՛ւն, կես միևնույն այժմ դեռ չգիտեմ ձեր անունը։

— Վերջապե՛ս։ Շատ շուտ մտաբերեցիք։

— Ա՜հ, աստվածի իմ, խնդրեմ էլ չեկավ հարցնելու, առանց այդ էլ լավ է ինձ համար...

— Անունս նատաննկա կես։

— Նատաննկա։ Միայն այդ։

— Միայն։ Միքե՛ այդ քիչ է ձեզ համար, ինչ անկուշտ եք։

— Քիչ ես վոչ, շատ ես, շատ շատ ես, ընդհակառակը, Նաստենկա, դուք բարի աղջիկ եք, քանի վոր հենց առաջին անգամից ինձ համար Նաստենկա դարձաք։

— Ախր, անասք, գիտե՞

— Դիտե, լսեցեք, Նաստենկա, տեսեք ինչ ծիծաղելի պատմություն է դուրս գալիս։

Ձեռ նստեցի նրա մոտ, լուրջ կեցվածք ընդունեցի, և սկսեցի մորուսի պատմությունը։

— Նաստենկա, կանո, չեմեն դուք այդ չգիտեք, կան Պետերբուրգում բավական սարսափելի անկյուններ։ Այդ տեղերը կարծես նույն արևակը չի թափանցում, վորը լուսա և տալիս բոլոր պետերբուրգցիներին, այլ թափանցում է մի ինչ-վոր նոր, կարծես հատկապես այդ անկյուններին համար պատրաստած արևակ և ամեն ինչ լուսավորում է մի առանձին տեսակ լուսով։ Այդ անկյուններում, սիրելի Նաստենկա, կարծես թե մի ուրիշ կյանք է ապրում, վոչ նման այն կյանքին, վոր կեսում է մեր շուրջը, մի կյանք, վոր կարող է լինել չոլի՞ը սարից, չոլի՞ը ձորից այն կողմը գտնվող անհայտ թագավորության մեջ, բայց վոչ թե մեզ մոտ, մեր լուրջ-լրջատյուն ժամանակներում։ Ահա այդ կյանքը ինչ-վոր մի մաքուր-գիտնատասիկականի, կերմ-իդեալականի և միևնույն ժամանակ (ախմդ, Նաստենկա) ողոռ-պրոզայինի, սովորականի, վորպեսզի չասենք ծայր ատիճան ձղճիմի մի խառնուրդ է։

— Ձեռ, ամեր իմ ասածած, ինչ հասկացաք։ Այդ ինչ եմ լսում կես։

— Կլանք, Նաստենկա (քիչում է ինձ, վոր կես կերթեք չեմ հոգնի ձեզ Նաստենկա անվանելուց), կլանք, վոր այդ անկյուններում ապրում են սարսափելի մարդիկ, — բերատողները։ Ճերատողը — չեմեն հարկավոր է դրա մանրամասն բացատրությունը — մարդ չեն, այլ մի ինչ-վոր մթնշին տեսի մի բան։ Պատապարվում է նա մեծ մասամբ մի վորևե անմատչելի անկյունում և կարծես նույնիսկ ընկնելիս լուսից թաղնվում է այնտեղ։ Մի անգամ անպատրվելով իր անկյունում, արդեն պատվաստվում է նրան ինչպես խխունջն իր կեղևին։ Այո, նա շատ նման է դրան այդ հետաքրքրական կենդանուն, վորը միաժամանակ և՛ կենդանի է, և՛ առն և վորը կոչվում է կրեյս։ Ինչ ևք կարծում, ինչու՞ համար և նա այդպես սիրում իր չորս պատերը, վորոնք ներկված են անպատճառ դեղնագույն, մխոտված են, մռայլ և աննկարելիի չափ ապրված ծխախոտի ծխով։ Ինչու՞ այդ ծիծաղելի պարոնը,

յերբ նրա մոտ այցելության և գալիս իր հաղվագյուտ ծանոթներից մեկը (վերջիվերջո բոլոր ծանոթները խուսափում են նրանից), ինչու հարցնում եմ, այդ ծիծաղելի պարոնը հանդիպում և նրան այնպես չփոթված, քաշվելով և այնպես այլայլված, որ կարծես, հենց նոր մի վոճիր և գործել իր չորս պատերի մեջ, կարծես նա կեզծ դրամ և կտրել կամ ինչ-որ վոտանավորներ և հորինել ամսագրին ուղարկելու համար մի անատոլյագիր նամակի հետ, ուր գրվում և, թե բանաստեղծն ինքը մեռած և և թե նրա բարեկամն իր սրբազան պարտականությունն և համարում հրատարակել նրա վոտանավորները։ Ասացեք, նատաննկա, ինչու այդ յերկու խոսակիցների մեջ զրույցը չի հաջողվում, ինչու մի ծիծաղ կամ զվարթ բառ չի թռչում հանկարծակի նրա մոտ և ամառվոր բարեկամի բերնից, մի մարդու, վոր առնասարակ շատ և սիրում և՛ ծիծաղը, և՛ զվարթ խոսքը, և՛ զրույցը գեղեցիկ սեռի ու այլ և այլ ուրախ նյութերի մասին։ Վերջապես, ինչու այդ բարեկամը, վոր յերևի նոր և ծանոթացել և առաջին այցն և, վոր անում և — վորովհետև նման դեպքում յերկբորդը չի լինելու, բարեկամս էլ այլևս չի գա — ինչու այդ բարեկամը ինքն այդպես քաշվում և, այդպես քարանում, չնայելով իր սրամտությանը (յերեք միայն ունի), նայելով տանտիրոջ շուռ յեկած դեմքին։ Ինչու տանտերը միանգամայն արդեն ինքն իրեն կորցրել և՝ խոսակցությունը հարթելու, գունավորելու, իր կողմից աշխարհային վարք ու բարքի ծանոթությունն ցույց տալու, նույնպես գեղեցիկ սեռի մասին զրուցելու և գնի դրանով սխալմամբ յեկած խեղճ այցելուին դուր գալու հակայական ու ապարդյուն ջանքերից հետո։ Ինչու հյուրը հանկարծ ճանկում և իր գլխարկը և դուրս և գալիս շտապով, անակնկալ հիշելով մի կարևորագույն գործ, վոր յերբեք չի յեղել, և մի կերպ իր ձեռն ազատելով տանտիրոջ ջերմ սեղմուկներից, տանտիրոջ, վոր ամեն կերպ աշխատել և ցույց տալ ղղում և կորցրածը վերադարձնել։ Ինչու հետացող բարեկամը, դռներից դուրս գալով, քրքջում և և տեղնուտեղը խոսք և տալիս իրեն այլևս յերբեք չգալ այդ խեղճերի մոտ, վոր խեղճերն ինքնըստինքյան շատ լավ տղա յեն։

— Լսեցեք, — ընդհատեց խոսքս նատաննկան, վոր ամբողջ ժամանակ ականջ եր դնում ինձ զարմացած, աչքերն ու բերանը բաց, — լսեցեք, յես չգիտեմ միանգամայն, թե ինչից պատահեց այդ բոլորը և դուք ինչու համար եք տալիս այդպիսի ծիծաղելի հարցեր։ Մի բան, վոր հաստատ գիտեմ, այն և, վոր

բոլոր այդ արկածները պատահել են անպատճառ ձեզ հետ, բառ առ բառ։

— Անկասկած, — ասացի ես ամենալուրջ կեղծանակով։

«Հա, ընկերացրենք, վոր կնա մոտս եմ նստում։ Ամենքը գարմանում են, պարերն ընդհատվում են, նայում են վայրենաբար, հետ են քաշվում։ Այսպես, բայց ահա այդտեղ է, վոր կնա արտահայտվում եմ. կնա պնում եմ ուղիղ դեմքի սարսափած Գանզրանենմոլը և ամենախղաքուշ ժպիտով, ամենապարզ խոսքերով սում

եմ. ձայնակս, այնպես, կես ահա նորին գերազանցության Մահապան Նիկիֆորովիչի մոտ եյի։ Կարծեմ գիտես, վոր հարեվանության ժեջ և, կես իսկույն քեքեանկի ծաղրական կեղանակով պատմում եմ Տրիֆոնի դեպքը։ Տրիֆոնից անցնում եմ այն բանին, թե ինչպես վոտքով գնացիր Ե՛ն, ասում եմ, հանկարծ կերաժշտության ձայն եմ լսում, հետաքրքրվում եմ ու վոստիկանից տեղեկանում եմ, վոր դու ամուսնանում ես։ Մտածում եմ, կնկ մտնեմ ստորագրյալիս մոտ, տեսնեմ իմ աստիճանավորներն ինչպես են զվարճանում... Ինչպես են ամուսնանում։ Կարծում եմ, վոր դու ինձ դուրս չես վռնդիր։ Վռնդել. ինչ բառ է, մի տառապրյալի համար։ Վեցց քեզ կվռնդի։ Ընդհակառակը. կարծում եմ շունչը կտրած կնարձակվի վրես, վոր նատեցնի բազկաթոռի վրա, հիացմունքից կդողդողա, սկզբում նույնիսկ չի իմանա ինչ անի։

Ե՞նե, ինչը կարող է այս իմ վարմունքից ավելի հասարակ, ավելի գեղեցիկ լինել։ Ո՞նչու համար ներս մտա։ Այդ ուրիշ խընդիր է։ Այդ արդեն գործի բարոյական կողմն է։ Ահա հենց դրա մեջ է կորիզը։

Հա՛, ինչի մասին եյի մտածում։ Այո՛։

Ե՞նե, իմարկե, նրանք ինձ կնատեցնեն իրենց ամենապատավավոր հյուրի հետ, մի վորևե աստիճանավորի կամ մի կարմրաքիթ պաշտոնաթող շտաբս-կապիտանի հետ... Դոգուլը փառահեղ է նկարագրել այն որիգինալներին։ Դե, իմարկե, ծանոթանում եմ նորահարսի հետ, գովում եմ նրան, խրախուսում եմ հյուրերին, ինդրում եմ նրանց չնեղվել, զվարճանալ, պարերը շարունակել, սրախոսում եմ, սիրալիր ծիծաղում եմ, վոր մի խոսքով կես սիրալիր և սիրելի կնեմ։ Ես միշտ սիրալիր եմ և սիրելի, կերբ ինքս ինձնով գոհ եմ... Հ՞ը, հենց քանն էլ այն է, վոր կես, կարծես, դեռ մի փոքր, վոչ քիչ հարբած, այլ այնպես...

Ի՞մարկե, կես վորպես ջենտլմենն, նրանց հետ ինձ պահում եմ ինչպես նրանց հավասարը։ և ամենևին չեմ պահանջում վորևե առանձին արտաքին նշաններ պատվի... Բայց բարոյապես, բարոյապես ուրիշ բան է... Նրանք կհասկանան և կգնահատեն... Իմ վարմունքը նրանց մեջ կարթնացնի ազնվության Դե, հնըստեմ կես ժամ, նույնիսկ մի ժամ։ Գարզ է, վոր հրաժեշտ կտամ ճիշտ ընթրիքից առաջ, իսկ նրանք կիբարանցվեն, կնվիեն, կսապակեն զանազան խորտիկներ, մինչև գետին խոնարհվելով դուրս կգան, բայց կես միայն մի գավաթ շամպայն կխմեմ, կշնորհավորեմ, իսկ ընթրիքից կհրաժարվեմ։ Կասեմ՝ գործեր ունեմ։ Ես

հնոց վոր կասեմ, ջուրթներդ ամենքի դեմքերը կզառնան պատկառավոր — լուրջ։ Դրանով չես ներքուիյամբ կհիշեցնեմ, վոր չես և իրենք տարրեր բաներ ենք։ Ձերկինք և չերկիր։ Ձես այդ կանեմ վոչ քեն ներանց նեղշնչելու համար, այլ չէ վոր հարկավոր և անել... Նույնիսկ անհրաժեշտ և բարոյական իմաստով, ինչ վոր ես ասեր։ Սակայն չես նույն բոպեին կժպտամ, նույնիսկ կծիծաղեմ, և հետո ամենքը կխրախուսվենք։ Մի անգամ ես կատակ կանեմ ներանցից հետո, հը։ Ախա նաև ինչ, կակնարկեմ, քե մի անգամ ես կզամ ուղիղ ինձ ամիս անցած, վորպես խնամի, հե, հե, հե։ Իսկ նա անտարակույս մինչև այդ ժամանակ կծնի... Չէ վոր ներանք ճաշարանների տեսա են բնդհանավորվում։ Դենի, ամենքը ձիճապից կբերհանեն, ներահարսը կկարմրի ամոթից։ Ձես զգացմունքով կհամբուրեմ ներա ճակատը, մինչև անգամ կորննեմ ներան... և ահա մյուս որն իմ սերտադրծուհյունն արդեն ամենքին հայտնի կլինի գիվանատանը։ Մյուս որը կես նորեն խիստ եմ, մյուս որը նորեն պահանջկոտ եմ, նույնիսկ անողորմ, բայց արդեն ամենքը գիտեն, քե ով եմ։ Իմ հոգին գիտեն, իմ նյութհյունը գիտեն։ Ես խիստ և վորպես իշխանավոր, բայց վորպես մարդ — հրեշտակ եմ։ Ձեվ ահա կես հաղթեցի։ Ձես արդեն վորացել իմ ինչ-վոր մոքրիկ վարմունքով, վոր ձեր գլխով անգամ չեր անցնի։ Ներանք արդեն իմն են, կես հայր եմ, ներանք զավակներ... Դենի, ձերդ գերազանցութհյուն, Ստեպան Նիկիֆորովիչ, դնացեք դուք էլ այդպես արեք...

«Դիտեք, հասկանում եք, վոր Պանկրատիոնին իր զավակներին ասելու կես, քե ինչպես ինքը՝ գեներալը քեզ և արել, նույնիսկ գիտել կես լամել իր հարստանքները։ Ձեվ չէ վոր այդ զավակներն իրենց զավակներին և սրանք էլ իրենց թոռներին պիտի պատմեն վորպես մի արբանյակության աննկատ, վոր սահմանվեր, պետական այրը (խոկ կես մինչ այդ ժամանակ կդառնամ այդպիսին) իրենց արժանացրել և և այլն, և այլն... Չէ վոր կես իմ ստորագրյալին կրատձրացնեմ, չէ վոր կես ներան կվերադարձնեմ ինքն իրեն, այդ սամական ասալը ռուբլի ռոճիկ ստացողին։ Չէ վոր կես այդ կկրկնեմ հինգ կամ տասն անգամ, ամենուրեք ժողովրդականութհյունն կվաստակեմ։ Ձես կգերազանցվեմ ամենքի արտերի մեջ, և սահմանն միայն դիտեմ, քե գրանից, այսինքն՝ ժողովրդականութհյունից ինչներ կարող ե դուրս գալ։

Ախտես կամ գրեթե այսպես եր խորհրդածում Իվան Իլյիչը (պատմեցինք, մարդ յերբեմն ինքն իր մտքում շատ բաներ կարող

և ասել, այն էլ եկեղեցականների դրությանը մեջ։ Այդ բոլոր գատողություններըը նրա գլխով անցան ինչ-որ կես րոպեի մեջ, և իհարկե, դուցե նա բավականաչափ յերազներով և իր մեջում Սահապան Նիկիֆորովիչին ամոթահար անելով, հանգիստ տուն գնար, և շատ լավ կաներ, յեթե այդպես աներ, բայց ցավը էլ հենց այն է, որ րոպեն եկեղեցականի եր։ Ավելացրեք և այն, որ հանկարծ նույն վայրկյանին Իվան Իլյիչի լսված յերևակայությանը մեջ նկարվեցին և՛ Սեմյոն Իվանովիչը, և՛ Սահապան Նիկիֆորովիչի ինքնագոհ դեմքերը։

— Ձենք դիմանա, — կրկնում եր բարձրից Սահապան Նիկիֆորովիչը, ժպտալով։

— Հա, հա, հա, — ձայնակցում եր նրան Սեմյոն Իվանովիչն իր ամենապյանդակ ժպիտով։

— Կտեսնենք, թե ինչպես չենք դիմանա, — ասաց վճռականապես Իվան Իլյիչն այնպես, որ մի տեսակ ուշքուշյուն զարկեց նրա յերևակայությանը։

Նա կամքի ջանքերից իջավ և, ամուր քայլերով անցնելով փողոցի մյուս կողմը, դիմեց ուղիղ դեպի իր ատրազրյալ ռեցիստրատոր Պանդոնիմովի տունը։

Ատողը գրավում եր նրանից նա արագ քայլերով մտավ ներս դռնակով, վոտով արհամարհաբար հետ շպրտելով քրդոտ և խոպոտ շնիկին, վորը, ավելի քաղաքավարությանը գան գործի համար, հարձակվել եր նրա վրա խոպոտ հաչոցով։ Նա, մի տախտակամածով անցնելով, հասավ դեպի գավիթ նայող պատշգամբիկին և յերեք ժայռյա խարխուլ աստիճաններով բարձրացավ վեր, մտավ մի շատ փոքր նախասենյակ։ Այդտեղ քեհե վառվում եր ճաքած ճրագի կամ լամպարիկի տակ մի գան, բայց դա չէնանգարեց Իվան Իլյիչին ձախ վոտով հրկնակոշիկով հանդերձ ընկնել, «գալանտերեյա»[1] մեջ, վոր դուրս եր գրված սատկանելու համար։ Նա քնքվեց և, հետաքրքրությամբ նայելով, տեսավ, վոր այդտեղ գրված են յերկու լիքը մեծ ամաններ սառցրած բուլյոնով ծածկած հնդկակրով, բացի դրանից յերկու կաղապարներ «բլամանժե»-ի[2] համար։ Ճնկլաված գալանտերը նրան մի քիչ շփոթեցրեց, և յեղավ վայրկյան, յերբ նա մոռացավ իսկույն նենց դուրս չսկվի՞ արդյոք։ Բայց նա այդ

---

[1] Սառը մսից, գլխավորապես քոչուններկի մսից պատրաստած հնդկակրե, վոր գարդարված և լինում սառցրած բուլյոնով։

[2] Նույնի և փորքուգալի հյութը ժելատինով պատրաստած։ Գլխովի պես բան է։

համարեց ատրուճյուն Թատելով, որ պատահածը վոչ վոք չտասավ և վոչ վոք էլ չի կարող երան կասկածել, շուտով կրկնակոշիկը արին հնաքը թագընելու համար, շոշափեց թագիքով ծածկված գուռը, բաց արավ և մտավ վոքրիկ նախասենյակ, որի մի կնան գրպված եր շինելներով[1], բնկնշներով[2], սալոպներով[3], կապոններով[4] և կրկնակոշիկներով, իսկ մյուս կեսում անդավոր-վել եյին քրտաժիշանները[5] յերկու ջուքակ, մի սրինդ և մի կոնտրաս, վորոնք, ինարկե, փողոցից եյին կանչված. երանք նստած եյին մի շինելված փայտե սեղանի մոտ, մի ճարպե ճրագ առնե և զրոս գոռ պատմելիքներով սղոցում եյին հատելիքի վերջին կտորը. բայց դռնեցով կարելի յեր տեսնել պարզ նրանց վոշոնց, նր

կածուփ մազերով և ճամբին սաստկորեն դիպավ Իվան Իլյիչին։ Նրա աչքին ընկավ նաև վերստասյունի չափ բարձր ինչ-որ զորաքաժնի մի սպա։ Մեկը, ձյուների հետ սրընթաց, անբնական ճչող ձայնով գոռաց. «Մե՛խ, Պանկրոնիմուշկա»։ Իվան Իլյիչն իր վոտների տակ զգաց ինչ-որ առանձանման բան, ըստ յերևույթին հատակը նոր եյին ժամել։ Սենյակում, վոր, իդեպ ասած, շատ ել փոքր չեր, մոտ յերեսուն հյուրեր կային։

Մի րոպե անց՝ կադրիլը վերջացավ, և գրնգեց նույն վայրկյանին պատահեց այն, ինչ վոր յերազում եր Իվան Իլյիչը, յերբ նա յերազում եր կամերյինների վրա։

Դեռ շունչ չառած ու յերեսների քրտինքը չսրբած՝ հյուրերի և պարողների միջև անցավ ինչ-որ անսովոր շշնջյուն։ Բոլոր աչքերը, բոլոր դեմքերը դարձան դեպի նորնկի կողմը։ Հետո ամենքը նույն րոպեին սկսեցին հետզհետե հանդարտել ու հետ ու հետ քաշվել։ Ընկատողների հագուստի փեշերից քաշելով, հասկացրին բանի եյությունը։ Նրանք էլ նայեցին ու հետ քաշվեցին, իսկ Իվան Իլյիչը տակավին կանգնած եր դռների մեջ առանց մի քայլ առաջ շարժվելու։ Նրա և հյուրերի միջև ավելի ու ավելի մեծանում եր դատարկ տարածությունը, վոր ծածկված եր կոնֆետների թղթիկներով, տոմսիկներով և ծխախոտի ծառցորդներով։ Հանկարծ այդ տարածության մեջ յերևաց վիցմունդիրով, ճերմակագույն ծուպ-ծուպ մազերով և կուզ քթով մի յերիտասարդ։ Նա առաջ եր շարժվում մնջքից թեքված, նայելով անակնկալ հյուրին նույն հայացքով, վորով շունն և նայում եր տիրոջը, յերբ սա կանչում և նրան ծեծելու համար։

— Բարև, Պանկրոնիմով, ճանաչո՞ւմ ես, — ասաց Իվան Իլյիչը և նույն պահին զգաց, վոր ասաց շատ անհաջող ձևով։

Միևնույն ժամանակ նա մտածեց՝ ինչ մի զուտ այս րոպեին մի սարսափելի հիմարություն և անում։

— Ձերդ գե...րա...գան...ցու...թյուն, — մրմնջաց Պանկրոնիմովը։

— Հապա, հապա, յես եմ, յեղբայրը, բոլորովին պատահաբար մտա քեզ մոտ, ինչպես և դու ինքդ կարող ես յերևակայել։

Բայց Պանկրոնիմովը անտարակույս վոչինչ չկարողացավ յերևակայել։ Նա աչքերը պլղած, կանգնած եր ամենասարսափելի տարակուսանքի մեջ։

— Կարծում եմ դու ինձ դուրս չես վռնդի... Ուրախ ես քեզ, ուրախ չես, բայց հյուրիդ ընդունիր, — շարունակեց Իվան Իլյիչը,

պղալով, վոր անվախել Թուլուքյան չափ չվոքվում և, ուղում է ժպտալ, չի կարողանում, վոր յերգիծական պատմությունը Սանպան Նինվեցուվինի ու Տրիքոնի մասին դառնում և ավելի ու ավելի անկարելի։

Այնինչ Պանլոնիմովը կարծես դիտմամբ ջղերի կարկամությունից դուրս չեր գալիս և շարունակում եր նայել բոլորովին հիմարաբար։ Իվան Իլյինը ցնցվեց, զգաց, վոր մի այդպիսի բոյի ևս, և տեղի կունենա մի անհավատալի սումբուր։

— Արդյոք չես չխանգարելի՞ ձեզ... Ձնա կխնամանամ, — հազիվ կարողացավ նա արտասանել և մի ինչ-վոր յերակ զղզղոցաց ներքնյուն աջ անկյունում։

Սակայն Պանլոնիմովն ուշքի յեկավ...

— Ինչ ևք ասում, ձերդ գերազանցություն... պատիվ և ինձ համար, — մրմնջաց նա, գլուխ տալով, — բարեհաճեցեք նստել։ Ձեվ, ավելի ուշքի գալով, նա յերկու ձեռներով ցույց տվեց գահավորակը, վորպես, պարի համար, հնազանդել կյին սեղանը։

Իվան Իլյինը հոգով հանգստացավ և նստեց գահավորակի վրա. մնում շտապեց սեղանը մոտեցնել գահավորակին։ Նա մի քանի հայացք ձգեց շուրջը և տեսավ, վոր միայն ինքն և նստած, իսկ մնացյալները վոտքի վրա յեն, նույնիսկ կանայք։ Դա վատ նշան եր։ Բայց գնա այդ մասին ակնարկելու և առհասարակ խոսակցություն սկսելու ժամանակը չեր։ Հյուրերը գնա հետ ու հետ կյին քաշվում, և նրա առջև կծկված կանգնած եր միայն Պանլոնիմովը՝ ամենավերջը ապշած և անժպիտ։ Վատ եր, շատ վատ, կարծ ասած, այդ րոպեին մեր հերոսն այնքան թախիծ կրեց, վոր նրա Հարուն-ալ-ռաշիդյան[1] արշավանքը հանուն սկզբունքի իսկապես կարող եր հերոսություն համարվել։ Հանկարծ ինչ-վոր մի կերպարանք յերևաց նրա կողքին և սկսեց գլուխ տալ նրան։ Իվան Իլյինն անարտահայտելի հաճույքով ու նույնիսկ յերջանկությամբ իսկույն նկատեց իր գրասենյակի սեղանապետին, Ակիմ Պետրովիչ Ջուբկովին, վորին քանի ծանոթ չեր, բայց գիտեր, վոր մի գործունյա ու անխոտոր մարդ եր։ Նա իսկույն վոտքի յեկավ ու ձեռը մեկնեց Ակիմ Պետրովիչին, ամբողջ ձեռը և վոչ յերկու մատները միայն։ Ակիմ Պետրովիչը նրա ձեռն ընդունեց իր յերկու ափերի մեջ խորագույն պատկառանքով։ Գեներալը

---

1 Հարուն ալ-ռաշիդը Բաղդադի հայտնի խալիֆն է (765–809)։ Նրա մասին պատմում են, վոր սովորություն և ունեցել գիշերները հանդերձափոխ ման գալ, իմանալու թե ինչպես են ապրում իր հպատակները։

հաղթահարեց. ամեն ինչ փրկված էր։ Արդարև այժմ Պանդոնիմովը, այսպես ասած՝ յերկրորդ դեմքը չէր, այլ յերրորդը։ Այժմ Իվան Իլյիչն իր խոսքը կարող էր ուղղել սեղանապետին, հարկադրված ընդունելով նրան վորպես ծանոթի և նույնիսկ մերձավոր ծանոթի, իսկ Պանդոնիմովը կարող է միայն լռել և պաշտելությանից սարսել։ Հետևարար վայելչությունը պահպանված եւ իսկ խոսելն անհրաժեշտ էր. Իվան Իլյիչն այդ զգում էր։ Նա տենդում էր, վոր բոլոր հյուրերն ինչ-վոր բան են ապատում, վոր յերկու դոնդի մեջ խճճվել են նույնիսկ տնայինները ու քիչ է մնում իրար ուսերի վրա բարձրանան նրան տեսնելու ու լսելու համար։ Վատն այն էր, վոր սեղանապետը, հիմարաբար, դեռ վոտքի վրա չէր։

— Նստեցեք, — արտասանեց Իվան Իլյիչը, վոչ-ճարպկորեն ցույց տալով նրա տեղն իր մոտ, գահավորակի վրա։

— Ի՞նչ եք ասում... չես այստեղ էլ..., — և Ակիմ Պետրովիչն արագ նստեց մի աթոռի վրա, վոր մատուցեց նրան համառորեն վոտքի կանգնած Պանդոնիմովը։

— Կարող եք յերևակայել դեպքը, — սկսեց Իվան Իլյիչը, դառնալով բացատրելու Ակիմ Պետրովիչին մի քիչ դողդոջուն, բայց արդեն արձակ ձայնով։ Նա նույնիսկ ձգձգում ու բաժանում էր բառերը, շեշտում էր վանկերը, ա տարը արտասանում էր վերպես յե, մի խոսքով ինքն էլ էր զգում ու գիտակցում, վոր ծամածռվում է, բայց տիրել ինքն իրեն չէր կարող։ Ինչ-վոր արտաքին ուժ էր մղում նրան։ Նա սարսափելի շատ և ոսանկլորեն էր գիտակցում։

— Կարող եք յերևակայել, չես մի քիչ առաջ Ստեպան Նիկիֆորովիչ Նիկիֆորովի մոտ էի, կարելի չե, լսել եք։ Դատների խորհրդականը... Այն հանձնաժողովի...

Ակիմ Պետրովիչը պատկառանքով թնդվից առաջ ամբողջ իրանով, իբր թե՝ հընդունելի կարելի չե չլսել։

— Նա այժմ քո հարևանն է, — շարունակեց Իվան Իլյիչը, գաղտագաղտուքյան համար մի վայրկյան անդրադարձնելով Պանդոնիմովին և նույն վայրկյանին յերևակ դարձրեց նրանից, Պանդոնիմովի աչքերից դուշակելով, վոր նրա համար միևնույնն է. Նիկիֆորովը հարևան է, թե վոչ։

— Միևնույնն, ինչպես գիտեք, ամբողջ կյանքը յերազել է իր համար տուն գնել։ Ցավ գնել է։ Ցավ շատ սիրուն մի տուն։ Այո... Միևնույն ժամանակ, այսոր նրա ծննդյան որն է... Մինչև այժմ նա այդ որը չէր տոնել, մինչև անգամ մեզնից

քաղցրել եր, հա, հա, հա, ֆլատուքյան պատճառով։ Իսկ այժմ նա այնքան ուրախ եր իր տան համար, որ հրավիրեց ինձ և Սեմեոն Իվանովիչին ճաշասենյակը։ Շիտուկնիկոյին։

Ակիմ Պետրովիչը նորեն մեջքից բնքվեց, այս անգամ առանձին ջերմեռանդությամբ։ Իվան Ալեխը մի քիչ մխիթարվեց, նեքն էլ նա սկսել եր մռայլել, որ անպատասխան ով դիտե գուշակում է, քե ինքը նորին դերատանգության համար մի տեսակ հետևանքներ եր ենթարկվելու։

— Ա՛հ, նամեցինք յերևք հոգի, շամպայնը եր մատակարարել, խոսեցինք գործերի մասին։ Ա՛հ, այս-այն ընդհրնանրի վերաբերմամբ։ Մինչև անգամ վիճաբանեցինք, հե, հե, հե...

Ակիմ Պետրովիչը պատկառանքով ունքերը վեր բարձրացրեց։

— Բայց բանն այդ չեր։ Ներջատես, հրամեցա ամ տալիս, դիտեք, ձերունին հյուսատան եր, կամուրջ եր պատրաստում քնելու, ջեր, ձերբեքյանն եր, ելել Գատրս եմ գալիս փողոց, Տրիֆոնն չկա։ Անհանգստացած եմ, հարց ու փորձ եմ անում. ա՞ր եր տարել Տրիֆոնը իմ կարիքը։ Պարզվում է, որ նա, հուսալով, քե կկարող պիտի նամեմ նորին դերատանգության մոտ, դնացել եր հարատանքը իր ինչ-որ մի խնամոտ կամ քրոջ մոտ, ատոմած գիտե, ապատով մտածել Պետերբուրգական Ստորոնատամ։ Ճամ կարելին եր իրեմ հնան և տարել։

Գնեռալը դարձյալ քաղաքավարության համար նախ Պանդանիմովին։ Պանդանիմովը դարձյալ կծկվեց, բայց ոչ այնպես, ինչպես հարկավոր եր գնեռալին։ Գարեկցությունն, սերտ չուներ, անցավ գնեռալին գլխով։

— Առացեք, խնդրեմ,—արտասանեց խորտակս ապրված Ակիմ Պետրովիչը։

Ամբողջ մեջով անցավ դարձացման մի փոքրիկ շատաչյուն։

Կարելի եր կարևակացել իմ դրությունը (Իվան Ալեխը նախ ամենքին)։ Ինչ անեմ, գնամ իմ վոտքով։ Մատամ եմ, կհատանամ մի կերպ մինչև Մեծ պրոսպեկտ և մի վարման Վայնկա[1] կդտնեմ։ Հե, հե, հե, Վայնկա։

— Հե, հե, հե,— խոնարհարար ձայնակցեց Ակիմ Պետրովիչը։

Դարձյալ շատաչյուն ամբողջ մեջ, բայց այս անգամ ուրախ շատաչյուն։ Այդ ժամանակ պատի լամպարի ապակին տրաքեց։ Մեկը կրակոտ թափով հարձակվեց լամպարն ուղղելու։ Պանդո-

[1] Վայնկա կրճատված Իվան անունն է—այդպես են կոչում հատապաններին։

նիմոնը այլայլվեց և խառերես նայեց լամպարին, բայց գեներալն ուշադրություն անգամ չդարձրեց, և ամեն ինչ հանգստացավ։

— Գնում եմ... Իսկ գիշերն այնքան գեղեցիկ է, այնքան անդորր։ Հանկարծ լսում եմ յերաժշտություն, վոտների դրոփյուն, պարում են։ Հետաքրքրված հարցնում եմ վոստիկանին։ Պանդոնիմոնը ամուսնանում է։ Ծեղքայը, դու ամբողջ Պետերբուրգական Սատրոնային բալեր ես տալիս, հե, հե, հե, — հանկարծ դարձավ նա Պանդոնիմովին։

— Հե, հե, հե, այո-ս... — անդրադարձրեց Ակիմ Պետրովիչը։

Հյուրերի շարքում դարձյալ իրարանցում, բայց հիմարությունն այն եր, վոր Պանդոնիմովը, թեև նորեն գլուխ ավեց, բայց այժմ ել չժպտաց, կարծես քար լիներ։

— Հիմար է, ինչ, — մոտեցավ Իվան Իլյիչը, — յեթե այդ եչը ժպտար, ամեն ինչ կարգին կերթար։

Անհամբերությունն ավելի մեծ եր նրա սիրտը։

— Մոտենում եմ, արի մոնեմ սատրադրյալիս մոտ։ Նա ինձ հո չի՛ վռնդի. ուրախ է՝ թե ուրախ չես, բայց ընդունիր հյուրիդ։ Դու, յեղբայր, խնդրեմ ինձ ներես։ Ցեթե չես խանգարվի, կերթամ... չես կարա միայն նայելու...

Բայց արդեն փոքր առ փոքր սկսվել և ընդհանուր շարժում։ Ակիմ Պետրովիչը նայում եր քաղցրացած դեմքով։ Ասել եր՝ «Մի՛թե ձերդ գերազանցությունը կարող է խանգարվել»։ Հյուրերը յերերվեցին և սկսեցին արտահայտել համարձակության նշաններ։ Գրեթե բոլոր կանայք արդեն նստել եչին։ Դա մի բարի և գրական նշան եր։ Ավելի համարձակներըը քաշկինակներով հովհարում եչին իրենց։ Քամվեն տրորված ու մաշված զգեստով մեկը ներս-ցրեց ինչ-վոր ասաց, դիտմամբ բարձր ձայնով։ Մի ապա, վորին նա ուղղեց իր խոսքը, կամեցավ նրան պատասխանել նույնպես բարձր ձայնով, բայց վորովհետև նրանք եչին միայն բարձրախոս, ուստի փաս արավ։ Տղամարդիկ, վոր մեծ մասամբ զինվածատան ծառայողներ եչին ու յերկու-յերեք ուսանողներ, իրար նայեցին, կարծես միմյանց հրևլով, վոր բացվեն, հազացին և նույնպես սկսեցին յերկ-յերկու քայլ հետաձալ զանազան կողմեր։ Սակայն վոչ վոք առանձնապես չեր քաշվում, այլ միայն բոլորն եչ տատամսոտ եչին և գրեթե բոլորն եչ քիչ-ամաչկոտ եչին նայում այն մարդուն, վոր ներս եր խոժել, վորպեսզի խափանի նրանց զվարճությունը։ Սպան, իր փոքրոգությունից ամաչելով, սկսեց համաց համաց անզգալին մոտենալ։

— Լսիր, եղբայր, ինչպես ես քո անունն ու հայրանունը, մոլլ տաք հարցնել, — դարձավ Իվան Իլյիչը Պանկրատիևին։

— Պորֆիրիյ Պետրով, ձերդ գերազանցություն, — պատասխանեց Պանկրատիևը, աչքերը ալեկոծ ինչպես գինվորը մեծավորի առջև։

— Շատ բարի լինեք, Պորֆիրիյ Պետրովիչ, որ ներահարսի հետ... Ուզենայիր լինեք... չես...

Նավ նա իրոք էր կամեցավ ուտքի կենալ, բայց Պանկրատիևը քաշեր կարած վարից հյուծանեցրեց։ Սակայն ներահարսը, վոր կանգնած էր դռների մեջ, հենց վոր լսեց, որ խոսքն իր մասին է, անմիջապես քաշվեց։ Մի րոպե անցած Պանկրատիևը, ձեռից բռնած, ներս բերեց նրան։ Ամենքը հետ ու հետ քաշվեցին նրանց ճանապարհ տալու համար։ Իվան Իլյիչը հանդիսավոր վոտքի կեցավ և գարձավ դեպի ներահարսը՝ ամենասիրալիր ժպիտով։

— Շատ, շատ ուրախ եմ ծանոթանալ, — արտասանեց նա քաղաքավարության կիսայերկրպագմամբ, — մանավանդ այսորվա հանդիսավոր որը...

Նա ամենանուրբ ժպտաց։ Տիկիններն էլ հուզվեցին։

— Շարմե՛ն[1], — արտասանեց քաղցր ղեկտով տիկինը գրնչի լանչի ձայնով։

Ներահարսն արժեր Պանկրատիևին։ Դա մի նիհար կին եր, ընդամենը սահանդի տարիքան, գունատ, շատ փոքրիկ կերևով և սուր քթով։ Նրա փոքրիկ, շարժուն աչքերն ամենևին չդիմովիկնային, այլ ընդհակառակը նայում եին շիտակի և նույնիսկ ինչ-վոր շարաբիյան նշույլով։ Ցերեկի Պանկրատիևը նրան գնդեցիկ բան համար եր վերցրել։ Նա հագած եր քիանյա զգեստ վարդագույն շղարշով։ Նրա պարանոցը լղարիկ եր, մարմինը վտիտկա, վոտքերները ցցված։ Դեմքերի բարեմաղթությանը նա վոչինչ չկարողացավ պատասխանել։

— Շատ գնդեցիկն ես ընտրել, — շարունակեց Իվան Իլյիչը կիսաձայն, իրոք եր Պանկրատիևին գովելով, բայց գիտմամբ այնպես, վոր նրան էլ լսի։

Բայց Պանկրատիևը այստեղ էլ չկարողացավ վոչինչ պատասխանել և այս անգամ չկարողացավ։ Իվան Իլյիչին քիաց անգամ, վոր նրա աչքերի մեջ կա ինչ-վոր, մի սառը, քաքտուն բան, նույնիսկ մի տեսակ խորամանկություն, մի առանձին ընտանեկան

[1] Հիացած եմ։

քան։ Սակայն ինչ գնով ևս լիներ, հարկավոր եր արժանանալ ղգայնությանն։ Ջի վոր նա հենց դրա համար և յնկել այստեղ։

«Ի՞նչ ասել կուզես, լավ գույզ եր»—ժառանգեց նա հեգնաբար,— «սակայն...

Ցնվ նա նորեն դարձավ նորահարսին, վոր տեղավորվել եր նրա մոտ, գահավորակի վրա, բայց իր յերկու ձեռ յերեք հարցերին ստացավ միևնույն «այո»-ն ու «վոչ»-ը, իսկապես այն նլ լիովին չստացավ։

«Դոնան շփոթվեր այդ կլիներ»—շարունակեց նա իր մտքում,— այն ժամանակ յես կսկսեի կատակներ անել, ձեռ չեմ իմ դրությունն անելանելի յե։

Ցնվ Ակիմ Պետրովիչն ել, հակառակի պես, լուռ եր, ձեռ հիմարությունից, այնուամենայնիվ աննեղելի կերպով։

— Ասավեր իմ, արդյոք, յես չկանգարեցի ձեր զվարճությունը,—դարձավ նա ամենքին ընդհանրապես։

Նա զգաց, վոր իր ձեռների ափերն ել քրտնում են։

— Վոչ, մի անհանգստանաք, ձերդ գերազանցություն, իսկույն կսկսենք, իսկ առայժմ զովանում ենք,—պատասխանեց սպան։

Նորահարսը հառաչքով նայեց նրան. սպան տակավին ձեր չեր և ինչ-վոր զորաքաժնի մուննդիր ուներ հագած։ Պանդոնիմովը կանգնած եր՝ մեջքից թեքված, և թվում եր, վոր առջվանից ավելի յե ցցել իր կուզ քիթը։ Նա ականջ եր դնում և նայում եր ինչպես մի սպասավոր՝ մուշտակը ձեռներում սպասելիս, վոր իր տերերը հրաժեշտի խոսակցությունը վերջացնեն։ Այս համեմատությունն արդավ ինքն Իվան Իլյիչը։ Նա ինքն իրեն կորցնում եր, նա զգում եր, վոր իր դրությունն անհարմար ե, վոր հողը փախչում ե իր վոտների տակից, վոր նա մտել և մի ինչ-վոր տեղ և չի կարողանում դուրս յելնել՝ ինչպես մթության մեջ։

Հանկարծ ամենքը հետ քաշվեցին, և յերևաց մի վոչ-բարձրահասակ, հաստ-հաստ կին, արդեն տարիքն առած։ Նա հագնված եր հասարակ, բեև զուգված եր, ուսերին ուներ մի մեծ քաշվենակ, վոր կոկորդի վրա կշկռված եր և գլխին չեռչկիկ, վորին, ըստ յերևույթին, սովոր չեր։ Նա ձեռներում բռնած եր մի կլոր մատուցարան՝ վրան մի բաց տրած, բայց լիքը շիշ շամպայն ու յերկու գավաթներ, վոչ ավելի, վոչ պակաս։ Ցնվեի տիրոջ շիշը նշանակված եր միայն յերկու հյուրերի համար։

Տարիքավոր կինը մոտեցավ պատրաստին։

— Ձերդ գերապատվություն, — ասաց նա, գլուխ տալով, — ներեցեք պակասը, բայց քանի մոր չեք արհամարհել մեզ, պատիվ եք տվել գավակիկիս հարսանիքին շնորհ բերելու, վաղորդյան կեղեր, ապաշում ենք, նորապսակներին պինով շնորհավորելու։ Մի քամահրեք, տրեք մեզ պատիվ։

Իվան Իլյիչը քունց այդ կնոջ փեշը, վորպես փրկության խարիսխ։ Նա տակավին պատավ չեր, կլիներ մոտ քառասուն հինգ կամ քառասուն վեց տարեկան, վոչ ավելի։ Նրա կերեսն այնքան բարի, կարմրախայտ, այնքան բաց, կլորիկ քունն ուսականը ևս, նա այնքան բարեհոգի չեր ժպտում, այնքան պարզ եր գլուխ տալիս, վոր Իվան Իլյիչը գրեթե ամոթահարվեց ու հուսադրվեց։

— Ուրեմն դու... ուզ ձեր վորդու ծնո...դ...ն...ը, — ասաց նա, վոտքի կանգնելով։

— Մնաց և, ձերդ գերապատվություն, — ժպտալով Պանկրատիևնան, իր կերկային վիզը ձգելով և նորից ցուցադրելով իր քիթը։

— Ա՛... Շատ ուրախ եմ, շատ ուրախ եմ ծանոթանալու։

— Դե, մի արհամարհեք, ձերդ գերապատվություն։

— Մեծապատիվ հաճույքով։

Մատուցարանը գրվեց սեղանի վրա։ Պանկրատիևնան, առաջ ցատկելով, գավաթները լցրեց։ Իվան Իլյիչը, տակավին կանգնած, վերցրեց մի գավաթ։

— Ձեռ տատիձատիս, տատիձատիս ուրախ եմ գիտենալուն, վոր կարող... — սկսեց նա, — կարող եմ... այսու հայտնել... Մի խոսքով, վորպես իշխանավոր, ցանկանում եմ ձեզ, տիրուհի (նա գլխից նորահարսին) և քեզ, իմ բարեկամ, Գերասիմ, ցանկանում եմ լավագույնը և բարեկեր քաղաքավորություն։

Ձեզ նա նույնիսկ դպացմունքով դադարեցրեց գավաթը, վոր լցնելտրեն եր այդ գլուխը։ Պանկրատիևնան նայում եր լուրջ, անդամ մտայղ դեմքով։ Գիտենալն սկսեց տանջալիորեն ատել նրան։ Ձեզ այդ գլուխն էլ (Իվան Իլյիչը նայեց տղաների կողմը) ցցվել և սյառնալ։ Գոնե նա դուսը վռնտաց, այն ժամանակ գործը կլընթանար բնական վայել և...

— Դուք էլ, Ակիմ Գեորգիևիչ, խմեցեք և շնորհավորեցեք, — ավելացրեց պատավը, դառնալով անզգամ ամուսնուն։ Դուք նրա իշխանավորն եք, նա ձեր ստորադրյալն է։ Հանկցեք վորդուս, խնդրում եմ, իրրև մայր... որևս գիտեք էլ մի մոտանաք մեզ, մեր քաղի Ակիմ Գեորգիևիչ, տղամեծական...

«Ջե, մատածեց Իվան Իլյիչը, — մեր այս ուսս պատավենքն սքանչելի չեն, — ամեն ինչ կենդանացրեց։ Ճնա միշտ սիրել եմ ժողովրդին»...։

Այդ րոպեին բերեցին մի նոր մատուցարան։ Բերողն եր մի աղջիկ՝ դեռ չլվացված խչխչան գգեստով և կրինոլինով[1]։ Մատուցարանն այնքան մեծ եր, վոր աղջիկը հազիվ գրկում եր նրան։ Նրա վրա դրված եին բազմաթիվ ափսեներ խնձորներով, ընկույզով, մարմելադով և պես-պես անուշեղենով լեցուն։ Այդ մատուցարանը մինչև այժմ դրված եր հյուրասենյակում, հյուրերին և գլխավորապես դամանեերին հրամցնելու համար։ Այժմ նրան բերեցին միայն գննելրալի համար։

— Մի արհամարհեք, ձերդ գերազանցություն, մեր քաղցրեղենը, ինչ վոր ունենք, նրանով ել ուրախ ենք, — կրկնում եր պատավը, գլուխ տալով։

— Ի՞նչ եք ասում, — արտասանեց Իվան Իլյիչը և հառույգով վերցրեց մի ընկույզ ու մատներով կոտրեց։

Նա արդեն վճռել եր մինչև վերջ լինել ժողովրդական։

Մինչ այս, մինչ այն, հանկարծ նորահարսը քրքջաց։

— Ի՞նչ պատահեց, — հարցրեց Իվան Իլյիչը, ուրախանալով կենդանության այդ նշանին։

— Այդ Իվան Կոնստանտինովիչն և ինձ ծիծաղացնում, — պատասխանեց նորահարսը՝ ամոթահարված։

Իրավ, գննելրալը նկատել եր շատ շիկահեր և բավական գեղեցիկ մի պատանու, վոր աթոռի վրա քաշվելով եր գահավորակի մյուս կողմում և ինչ-վոր շշնջում եր տիկին Պանկրատևսկայինս։ Պատանին վոտքի կելավ։ Ըստ յերեվույթին նա շատ ամոթխած և յերիտասարդ եր։

— Ճնա «յերազագրքի» մասին եչի խոսում, ձերդ գերազանցություն, — մրմնջաց պատանին, կարծես ներում խնդրելով։

— Այդ ինչ յերազագիրք ե, — հարցրեց Իվան Իլյիչը ներողամտաբար։

— Նոր յերազագիրք, ձերդ գերազանցություն, գրականական։ Ճնա ասում եչի նորահարսին, թե յեթե մեկը պարոն Պանայեվին յերազում տեսնի, նրա շապկի թևի վրա սուրճ կթափվի...

«Զարմանալի անմեղություն», — մատածեց Իվան Իլյիչը չարությամբ։

---

[1] Շրջազգեստ, վորի տակին վոսկուած կամ մետաղե չրջաններ են լինում լայն ձև տալու համար։

Քեզ պատանին շատ շատախոսեց, բայց անսահման ուրախ եր, որ պարոն Պանայեվի մասին խոսեց։

— Այո, այո, չես լսել եմ, — դռնից նորին գերազանցությունը։

— Ամենի լավը կա, — արտասանեց Իվան Իլյիչի մոտ մի ուրիշ ձայն, — նոր բառարան և հրատարակվում, ասում են պարոն Գրանովսկին[1] հոդվածներ եր գրելու... Աղներիկի... և Абличительная литература...

Այդ ասողը մի յերիտասարդ եր, բավականաչափ համարձակ մեկը։ Նա ձեռնոցներ ուներ հագած, ճերմակ փլնտ, գլխարկին ել ձեռներում ել պահած։ Նա չեր պարում, նայում եր բարձրից, վորովհետև „Головешка“ յերգիծական հանդեսի աշխատակիցներից մեկն եր, մոդային եր և հարատևիք եր ընկել պատահարար, հրամիրված լինելով վորպես պատվավոր հյուր Պանչոնիմովի, վորի հետ դա-ում եր խոսում և վորի հետ դեռ անցյալ տարի սոված ել եր, ապրելով մի ջերմանոցում մոտ՝ տանկյուններում։ Սակայն ոչի նա խոսում եր և արդեն մեկից ավելի անգամ դրա համար քաշվել եր խորքի սենյակներից մեկը, վորի ճանապարհն ամենքը գիտեին։ Գեներալին նա ատելության չեր գալիս։

— Ես ել այդ այն պատճառով և ծիծաղելի, — հանկարծ ընդհատեց ուրախացած շիկահեր պատանին, վոր պատմել եր շապիկների մասին և վորին ճերմակ ժիլետավոր յերիտասարդն այդ պատճառով չեր սիրում, — այն պատճառով և ծիծաղելի, ձերդ գերազանցությունն, վոր հնդինակը պարոն Գրանովսկին և, վորն իբր թե ուղղագրություն չգիտե և կարծում և, թե обличительная литература, պետք և գրել абличительная литература.

Բայց խեղճ պատանին հազիվ կարողացավ ավարտել։ Գեներալի աչքերից նա տեսավ, վոր նորին գերազանցությունը վաղուց այդ գիտե, վորովհետև ինքը գեներալը կարծես շփոթված եր, ակնհայտ եր այն պատճառով, վոր գիտե այդ բանը։ Պատանին անսահման ամաչեց։ Նա շտապով նահանջից հայտնի չեր։ Հետո ամբողջ ժամանակ շատ տխուր եր։ Թրա փոխարեն „Головешка“-ի համարձակ աշխատակիցն ավելի ուռած յերևում եր, վոր նա մտադիր եր գեներալին մոտիկ մի տեղ նստել։ Այդ համարձակությունը Իվան Իլյիչին մի քիչ անհանգիստ թվաց։

— Աստ, խնդրեմ, Պորֆիրիչ, — սկսեց նա մի քանի ասած լինելու համար, — չես այդ մասին քանիցս ուզեցել եմ քեզ ան-

[1] Գրանովսկի Տիմոֆեյ Նիկոլայևիչ (1810–1855) հայտնի ռուս ժուրնալիստ և հասարակական գործիչ։

ձամբ հարցնել — ինչու՞ քեզ Պանվդոնիմով չեն կոչում, այլ Պանդոնիմով։ Անտարակույս դու Պանվդոնիմով ես, չէ՞...

— Այդ մասին, ձերդ գերազանցություն, չեմ կարող ճշգրիտ գեկուցում անել ձեզ, — պատասխանեց Պանդոնիմովը։

— Ծերեմի հայրը ծառայության մոնելիս, քղքնելը խառնաշփոթել են, այնպես վոր մարդը դարձել է Պանդոնիմով, — առաջարկեց Ակիմ Գետրովիչը։ — Այդ պատահում է...

— Ան...կասը...կած, — շտապեց հավանություն տալ Իվան Իլյինը չնրմորեն, — ան...կասը...կած, վորովհետև, ինքներդ դատեցեք, Պանվդոնիմովը ծագում է պանվդոնիմ գրականական բառից, այն ինչ Պանդոնիմովը վոչինչ չի նշանակում։

— Հիմարությամբ է, — հարցեց Ակիմ Գետրովիչը։

— Այսինքն, ինչն է հիմարությամբ։

— Ուսս ժողովուրդը, հիմարությամբ, յերբեմն տառերը փոփոխում է և բառերն արտասանում է յուրովի։ Ըրինակի համար, ասում են նիվալիդ, մինչդեռ պետք է ասել ինվալիդ։

— Ի՞նչ նիվալիդն ի՞նչ է, հա, հա հա...

— Ձերդ գերազանցություն, մուժիկը ել են ասում, — դողդողջնեց բարձրահասակ սպան, վորի լեզուն վազում էր քոր գալիս՝ մի բան ասելու։

— Այսինքն, ինչպես քե մուժիկը։

— Մուժիկը՝ փոխանակ նուժիկի, ձերդ գերազանցություն։

— Ա՛խ, այո՛, այո՛, մուժիկը... փոխանակ նուժիկի... Ինչ, ի՞նչ, ի՞նչ։

Իվան Իլյինը հարկադրված էր սպայի համար ել քրքջալ։

Ոֆիցերն իր փողկապն ուղղեց։

— Մի ուրիշ բան ևս, նիմո, — փորձեց մոտ ընկնել „Головешка"-ի աշխատակիցը, —

Բայց նորին գերազանցությունը չանաց այդ լսել։ Ձի վոր ամենքի համար չէր կարող քրքջալ։

— Նիմո՝ փոխանակ միմո-ի, — համառեց «աշխատակիցը» ակնհայտ զրգռված։

Իվան Իլյինը նայեց նրան խիստ հայացքով։

— Ջանդա մի՛ տանիր, — շշնջաց Պանդոնիմովը աշխատակցին։

— Ե՛հ, ինչ և, խոսում եմ, ելի, մեկին չի կարելի, — կամացավ «աշխատակիցը» շշնջյունով վիճաբանել, բայց լռեց և նեղացած կատարությամբ դուրս վազեց։

Նա ուղղակի դնաց հետևի հրապարակ անկյունը, որ դեռ չբնակության սկզբից յարոսլավյան ափոցով ծածկված մի փոքրիկ անզանի վրա դրված հին չորկու տնասակի ոդի, ոդի ձուկ, խավյար և մի շիշ քաղցր խնդրա ապտակին պահանջելու։ Վոխը արտի միջ Նա կամեցավ իր համար ոդի ածել, յերբ հանկարծ նորա վազեց դղրդյուն մազերով քժիշկ-ուսանողը, վոր Պանդոնիմովի բալի առաջին կամարներն ու կանգնած[1] պարզեր եր։ Նա ազահությամբ հարձակվեց ոդու շշի վրա։

— Խնդրեմ կանգնեք, — արտասանեց նա արագ։ — Ցնկ նայեցեք. ոդը չեմ պարելու[2] վոտնքրա վրա, իսկ ընթրիքից հետո պիտի վորձնեմ ձկնկիկ պարելու։ Այդ շատ կատղի հարսանիքին, կլինեք, այսպես ասած, բարեկամականորեն ակնարկ Պանդոնիմովին... Այդ Գևոպատրա Սեմիոնովնան դժոխքի չի, ինչ որ վոր կամենաս, կարող ես անել...

— Դա հետաքրքիր միևնույն է, — մոայլ արտասանեց աշխատակիցը, ոդին խմելով։

— Ո՞վ է հետաքրքիր։

— Ա՛յ, այդ անձնավորությունը, վորին քաղցրավենիք են հրամցնում։ Հետաքրքիր է, ասում եմ, անարդարացի...

— Ներ, դու ել, — ժպտալով ուսանողը և դուրս վազեց, լսելով կապրիլի առավոտյան ախտաբանը։

Ինձնակ մնացին, աշխատակիցը արտասանդվելու համար մի անգամ ել բամակը լցրեց, խմեց, նախանձաշեց։ Իսկական պատահական խորհրդական Իվան Իլյիչը կերակուր չեր ունենում ավելի վայրագ և ավելի անտարբեր վոխանակ, քան նորա արհամարհած աշխատակիցը „Головешка"-ի, մանավանդ ոդու կերակրոցը բամակից հետո։ Ավազ, Իվան Իլյիչը վոչինչ չդիտեր այդ մասին։ Նա չդիտեր նաև մի ընտանեկան հանգամանք, վոր ազդից հյուրերի հետագա հարաբերությունների վրա դնում ներին դեպրեսացնող ազդեցություն։ Բանն այն է, վոր նա քիչ եր ատրոպոլյային հարսանիքին ներկա լինելու վերաբերմամբ տվից վախլուչ ու նուշնիկ մանրամասն բացատրություն, քայց այդ բացատրությունն եղավ վոչ վոքի չդոհացրեց, և հյուրերը շարունակում եին չվոքվիլ։ Սակայն հանկարծ ամենքին ինչ հերոպատրանափոխվից՝ վորտեղ մի անսակ հախարդություն։ Ամենքը հանդարտացան և պատրաստ եին դվարճանալ, քրքջալ, ճչալ ու պարել էիշա ազնական, վորտեղ ել անապատների հյուրը չկա։ Դրա պատճառն եր հայտնի չե ինչպես հանկարծակի տարածված

1 Փոքր անոթ։
2 Կապրիլի յեղանակի առաջաբանը։

ջուկը, քե հյուրը կարծես մի քիչ կոնծած եւ քնա այդ լուրն ակըզբում կրում եր զրպարտութեյան բնույթ, բայց փոքր առ փոքր սկսեց արդարանալ, այնպես վոր ամեն ինչ պարզվեց ու տիրոց ազատութեյուն։ Ճիշտ այդ վայրկյանին սկսվեց վերջին կադրիլը, դեպի վորն այնպես շտապեց բ֊ինչկ֊ուսանողը։

Ծեվ Իվան Իլյինչը նոր միայն ցանկացավ մի անգամ նա դիմել նորահարսին, փորձելով հաղթահարել նրան մի ինչ֊վոր, կալամբուրով, յերբ հանկարծակի ցատկեց յերկայնահասակ սպան ու քափով չոքեց նորահարսի առջև մի ծնկան վրա։ Նորահարսն խնկույն վոտի յելավ և սպայի հետ առաջ թռավ, վոր մոնի կադրիլ պարողների շարքը։ Սպան մինչև իսկ ներողութեյուն չխնդրեց, իսկ նորահարսն անգամ չնայեց գեներալին, թվաց նույնիսկ, վոր ուրախ եր նրանից ազատվելու։

Ընապես, նա իր իրավունքի մեջ է, —մտածեց Իվան Իլյինչը, — բացի դրանից, այդ մարդիկ վայելչութեյուն ել չեն հասկանում։

— Գորֆիբրեյ, յեղբայր, մի նեղվիր, — դարձավ նա Պանլըտնիմովին, —գուցե դու այնտեղ կարգադրութեյուններ ունես անելու կամ մի ուրիշ բան, մի նեղվիր, խնդրեմ, գնա...

Ի՞նչ է, հակիճ և ինձ, — ավելացրեց նա իր մտքում։

Իր յերկայն վզով և ուշի֊ուշով նայող աչքերով Պանլըտնիմոնն անառանձին յեր դառնում նրա համար։ Մի խոսքով, ամեն ինչ այն չեր, ինչ վոր սպասվում եր, սակայն Իվան Իլյինչը տակավին չեր ուզում այդ խոստովանել ինքն իրեն։

Կադրիլն սկսվեց։

— Կհրամայեք, ձերդ գերազանցութեյուն, — հարցրեց Ակիմ Պետրովիչը, շիշը ձեռնոցում պատկառանքով պահած և պատրաստ նորին գերազանցութեյան գավաթը լցնելու...

— Ցնս... ճշմարիտ ասած, չգիտեմ, յերեք...

Բայց Ակիմ Պետրովիչը յերկյուղած, շողշողուն գեմքով արդեն ածում եր շամպայնը։ Գավաթը լցնելուն, նա իրրև թե զգաստության կուչ յեկած, իր համար ել ածեց, միայն մի մատ պակաս, վորպես մեծարանքի նշան։ Իր մերձավոր իշխանավորի մոտ նա նայած եր վորպես յերկունքի մեջ։ Արդարև, ինչի մասին խոսեր։ Այնինչ անհրաժեշտ եր զբաղեցնել նորին գերազանցութեյանը, մինչև անգամ պարտավորական եր, վորովհետև նա պատիվ ուներ նրա ընկերակցութեյունը վայելելու։ Շամպայնը ծառայում եր վորպես միջոց դժվար կացութեյունից յելնելու, և նորին

պետականությանն էլ հաճելի չէր, որ նա ածում էր։ Հաճելի չէր բարոյական, իսկ շամպայնը, ի դեպ ասած, քիչ տաք էր և քիչ վատագույնն անակնկալ։

«Միևնույնն ինքն էլ և ուզում էր ասել, մտածեց Իվան Իլյիչը,— և առանց ինձ չի համաձայնվում։ Հո չեմ խանգարել. բացի այդ, ծիծաղելի կլիներ շինել մեր կեցվածքի միջև»։

Նա մի քիչ լռեց, և այդ նրան քիչ ավելի լավ, քան առաջ նայեց։

— Ես որ չլինեի այստեղ,— սկսեց նա կանգ առնելով և բաները շեղեցնելով,— չէ որ չես, այսպես ասած, պատահաբար եմ այստեղ և, ինչպիսի, ուզում եմ ասել... քեզ ինձ համար, այսպես ասած, ան-վա-յել է լինել մի այսպիսի... ժողովուրդ...

Ակիմ Պետրովիչը լուռ էր և լուռ էր կեցվածքը հետաքրքրությամբ։

— Բայց կես հասավ եմ, որ կհասկանաք, թե կես ինչու կեմ այստեղ... Չէ որ կես գիտեի խմելու համար չեմ կանչել... հա, հա, հա...

Ակիմ Պետրովիչը ցանկացավ նույնպես քրքջալ նորին գերազանցությունից հետո, բայց լռեց կտրվեց, և նորին չկարողացավ մոչինչ ասել։

— Ես այստեղ եմ... մտրակահարի, այսպես ասած, քաջալերելու, այսպես ասած, բարոյականո, այսպես ասած, նպատակ,— շարունակեց Իվան Իլյիչը, զննմամբ Ակիմ Պետրովիչի ըմբռնությունից, և հանկարծ ինքն էլ լռեց։ Նա տեսավ, որ խնդ Ակիմ Պետրովիչն աչքերը վար պցեց, մտրակ ինչ-որ բանում մեղավոր մեկը գտնելու, մի տեսակ ապաշխարանք մեջ, շտապեց մի անգամ ևս զամբիկ ըմպել, իսկ Ակիմ Պետրովիչը շիշը ճանկեց և զամբիկը լրացրեց, կարծես նրա ամբողջ փրկությունը դրա մեջ էր։

«Պաշարվ շատ էլ մեծ չես,— մտածեց Իվան Իլյիչը, խիստ հայացքով նայելով խնդ Ակիմ Պետրովիչին։ Իսկ նա, զգալով իր վրա այդ գննության ազդեցությունը, վճռեց այլևս վերջնականապես լռել ու աչքերն էլ չբարձրացնել։ Այդպես նրանք երկար ժամ նստած մնացին մի կեցվածքով, կեցվածքով ցավագին բոլոր Ակիմ Պետրովիչի համար։

Վերջը խնդ Ակիմ Պետրովիչի մտքին մի միտք եկավ, որ հավի նման մի հսկայական մարդ էր, հին ընտանիքի տեր մեկը, արիստոկրատիայով անված, բայց բարեսիրտ և նուիրական ազնվահոգի։ Նա Պետերբուրգյան ազնվականներից էր, այսինքն՝ և՛ նրա հայրը, և՛ հոր

հայրը ծնվել, մեծացել ու ծառայել էին Պետերբուրգում և վոչ մի անգամ տեղ չեն գնացած էղել։ Դա ուս մարդկանց մի առանձնակի տիպարն են։ Ռուսաստանի մասին գրքեր վոչ մի հասկացողություն չունեն, մի քան, վորի մասին չեն էլ մտահոգվում։ Նրանց ամբողջ հյուրասիրությունը սարսափելիորեն պետերբուրգի և գլխավորապես, իրենց պաշտոնավայրի մեջ։ Բոլոր նրանց հոգացողությունները կենտրոնացած էին պրնֆերանսի, խանութի և ամսական ռոճիկի շուրջը։ Նրանք չգիտեն և վոչ մի ռուսական ավանդություն, վոչ մի ռուսերեն յերգ, բացի «Լուչինուշկա»-ից, այն էլ շնորհիվ այն բանի, վոր այդ յերգը նվագում էին շրջիկ յերաժիշտները շարմանկայի վրա։ Սակայն կան յերկու էական և անդրդվելի նշաններ, վորոնցով դուք իսկույն կարող եք գտնել իսկական ռուսին պետերբուրգյան ռուսից։ Առաջին նշանն այն է, վոր պետերբուրգյան ռուսները, բոլորն առանց բացառության, յերբեք չեն ասում „Петербургские ведомости", այլ միշտ „Академические ведомости". Յերկրորդ, հավասար էական նշանն այն է, վոր պետերբուրգյան ռուսը յերբեք չի գործածում «նախանաշաձ» բառը, այլ միշտ «ֆրիշտիկ»[1], առանձնապես շեշտելով ձեի հնչյունը։ Այս յերկու արմատական և վորոշիչ նշաններով դուք ճանաչում եք Պետերբուրգի ռուսներին, կարճ ասած՝ դա մի հեղ տիպ է, վոր վերջնականապես ձևավորվել և վերջին յերեսուն հինգ տարիներում։ Սակայն Ակիմ Պետրովիչը հիմար մարդ չեր, ամենևին։ Ենթի գենիալը նրան հարմարավոր հարցեր տար, կպատասխաներ էլ ու խոսակցությունն էլ կվարեր, քեև չեր տորպադրյալի համար անկախել եր այդ տեսակ հարցերի պատասխանել, քեև Ակիմ Պետրովիչը մեռնում եր հետաքրքրությունից՝ ավելի մանրամասնորեն մի վորևե բան գիտենալ նորին գերազանցության իսկական մտադրություններն մասին։

Այնինչ Իլյան Իլյիչն ավելի ու ավելի յեր խորասուզվում մտախոհության ու զայրագին ինչ-վոր պատկերների մեջ։ Մտածողության մեջ նա ամեն րոպե շարունակ շամպայն եր հաչակում, իսկ Ակիմ Պետրովիչը յեռանդով իսկույն ևեթ գավաթը լրացնում եր։ Ենթին էլ լուռ նայեր։ Իլյա Իլյիչն ակնոց պարբերին նայել, և շուտով նրանք մի վոտքը գրավեցին նրա ուշադրությունը։ Հանկարծ մի հանգամանք նրան իսկ զարմացրեց։

Արդարև պարերն ուրախ էին անցնում։ Այդտեղ եր, վոր մարդիկ պարում էին բաց սրտով, վորտեղ զվարճանում և

[1] Յոկուշյուկ — գերմաներեն հնչյունական՝ նախանաշ։

նույնիսկ դժբախտություններ անենք։ Պարտիզների մեջ ճարպիկներից քիչը շատ փոքր էր, բայց վոչ-ճարպիկներն այնքան ուժեղ էին դրսևորվում, որ երանց էլ կարելի չեր ճարպիկներից տնօրինել։ Առաջինն աչքի չեր ընկնում սպանու նա առանձնապես սիրում եր այն ֆիզուրները, ուր Պետք եր մին-միևնույն, մի տեսակի սպան։ Այդպես նա պարմանալի ճկնվում եր, այն ի՝ կերկայն և ուղղագիծ ընչացնա վերատապում, նա հանկարծ կորանում եր դնում մի կողքը, այնպես վոր կարծում եիր՝ պիտի ընկնի, բայց հանկարծ քայլին քնքշում եր հակառակ կողմը՝ նույն ծուռ ձևով դնում հատակը։ Ինձքի արտահայտությունը պահում եր շատ լուրջ և պարում եր կատարելապես համոզված, վոր ամենը զարմանում ենք։ Մի ուրիշ հավասիր, կանխատես կռնած լինելով, կերկարող ֆիզուրից հետո քանց եր դամային կողքին, այնպես վոր կլինեն սահմանած չեզամ միևնույն պարեր։ Ներկատարող անգիտարարտարը, վոր պարում եր կերկնագույն շարքի ունեցող դամային հետ, բոլոր ֆիզուրների և բոլոր հինգ կազմվածների մեջ ոչինչներ եր անում, այն ի՝ մի քիչ իր դամային հետ միասին, վորտեղ եր նրա շարքին ծայրը և պիտացի կողմ քաշկռտելու մի քանի կարդանում եր միքանի տասնյակ համբյուրներ դրոշմել այդ ծայրի վրա։ Իսկ նրա տոքին դաման լողում եր, կարծես ոչինչ չնկատելով։ Միևնույն ատաղնողը պլեխիվար խնկատես՝ տալ պարեց և առաջացրեց կատարի հետացում, դրսևորելն և գոհունակություն ձևեր։ Մի խոսքով՝ ատատությունն արտահայտ եր Իվան Իլյիչը, վորի վրա պինդն տղել եր, սկսել եր ժպտալ, բայց վոքը առ վոքը ինչ-վոր գաղտ կասկած տպրեց նրա հոգու մեջ։ Իհարկե, նա շատ եր հավանում հյուրերի անթերատատությունն ու համարձակությունը, նա ցանկանում, նա նույնիսկ հոգով գոհ եր կոչում, այն ժամանակ, յերբ նրա տոքն նահանջում եիին հետ ու հետ, բայց այժմ այդ համարձակությունն արդեն սահմանից անցնում եր։ Որինակ, մի դամա՝ չորրորդ ձևերից գնվան հնամաշ կատարը քաշելու պահանջ, վեցերորդ ֆիզուրի ժամանակ իր գլխատը գնդատանդներով այնպես եր կապկապել, վոր քիչ եր, թե հագին բացի վարտիկից վոչինչ չկար։ Դա մինչդեռ Իվան Միժնոնիչնան եր, վորի հետ, իր կավալերի, քաշկռտողն ասելով, գինչ ուզես, կարելի չեր անելը։ Իսկ քաշկռտողի մասին վոչինչ ասել անգամ չեր կարելի. պարզ ի պարզո Ծուկին եր[1], Այդ գինչ ես Առաջ հետ ու հետ եիին նահանջում, իսկ այժմ հանկարծ

[1] Նշանավոր պարոզ։

ազատագրվեցին։ Քվում և վոչինչ, ինչ կա, բայց և այնպես այդ անցումը տարօրինակ եր. նա ինչ-վոր բան եր ավետում, կարծես մոռացվել եր, վոր աշխարհիս յերեսին Իվան Իլյիչ կա։ Իհարկե, նա առաջինն սկսեց քրքջալ, նույնիսկ ոխակ արամ ծափահարելու։ Անկյա Պետրովիչը ձայնակցեց նրան պատկառանքով, քնև ակնհայտ հաճույքով և գլխի չեր ընկնում, վոր նորին գերազանցությունն արդեն սկսել եր իր սրտի մեջ սնուցանել մի նոր վորդ։

— Փառավոր եք պարում, յեր իտասարդ, — սիրալված յեղավ ասել Իվան Իլյիչը կազդուրվից հետո իր մոտով անցնող ուսանողին։

Ուսանողը շուռ յեկավ դեպի նա, գեմքը ծամածռեց և, յերևույթն անվայելչությանն չափ մոտիկ մերձեցնելով նորին գերազանցությանը, աքաղաղի պես կանչեց սմբողջ կոկորդով։ Այդ արդեն չափազանց եր։ Իվան Իլյիչը վոտքի յեկավ։ Զնայելով, վոր լրվեց անզսպելի քրքիջների մի վորոտ, վորովհետև աքաղաղի ձայնը զարմանալի բնական եր և սմբողջ ծամածռությունը՝ անակնկալ։ Իվան Իլյիչը դեռ տարակուսանքի մեջ եր, յերբ յեկավ ինքը Պանդոնիմովը և, ղուխ տալով, հրավիրեց ընթրիքի։ Նրա հետևից յեկավ և մայրը։

— Մեր հայր, ձերդ գերազանցություն, — ասաց նա, ղուխ տալով, — պատիվ արեք, մի արհամարհեք մեր աղքատությունը։

— Ճիշ... յես, ճշմարիտ չգիտեմ, — արտասանեց Իվան Իլյիչը, — չի՞ վոր յես դրա համար չե... վոր... յես, ուրեմն եկի արդեն գնալ...

Արդարև նա գլխարկն արդեն վերցրել եր։ Բայց դրանից, նա նույն վայրկյանին ինքն իրեն ազնիվ խոսք տվեց անպատճառ, իսկույն նեթի, առանց այլ և այլևի գնալ ու վոչ մի կերպ չվնասել Ճիվ այնուամենայնիվ մնաց։ Մի րոպե անց՝ նա ինքն առաջնորդեց թափորը դեպի սեղանատունը։ Պանդոնիմովն ու նրա մայրը գնում եկին նրա առջևից, ճանապարհ բանալով նրա համար։ Նրան նստեցրին ամենապատվավոր տեղում, և նորին շքամպանի լի շիշը յերևաց նրա ամանների առջև։ Պատրաստ եկին նաև ոդին, անչյոգկանաչ և ուրիշ ճաշակելիք։ Նա ձեռը մեկնեց, ինքն իր համար լցրեց ոդիի ահագին բաժակն ու խմեց։ Մինչև այդ նա յերբեք ոդի չեր խմել։ Նա զգաց, վոր կարծես թավալվում և մի լերան բարձունքներից, թռչում և, թռչում, թռչում, զգաց, վոր պետք և կանգ առնել, կառչել մի վորևե բանի, բայց վոչ մի հնար չունի։

Արդյոք, նրա դրությունն ավելի ու ավելի եքսցենտրիկ էր դառնում։ Ամենից դա համատարած մի ինչ-որ հնդհանուր էր։ Առավոտ մի ինչ-որ ժամվա ընթացքում ինչ պատահեց նրան։ Նախ մտածելու ժամանակ նա, այսպես ասած, իր գիրկը քաց էր արել ամբողջ մարդկությանն ու քոլոր առարկայակաների համար, և ահա մի ժամ էլ չանցած՝ նա իր սրտի բոլոր ցավերով լսում էր ու պիտակցում, որ ատում է Պանդոնիմովին, անիծում է նրան, նրա կնոջը և նրա հարսանիքը։ Այդ ինչ է՝ նա դեմքից, աչքերից միայն ուսանում էր, որ Պանդոնիմովը էլ ատում է իրեն, որ նա իր նայվածքով ինչ է ասում ասի. «Դեհ ինքը մոնի անիծյալը։ Ցնկած և վախկոտից մեր վերնա... Այս բոլորն իմանա իշխանը վազուց էր կարդում Պանդոնիմովի հայացքի մեջ։

Ի հարկե, իմանա իշխանն այժմ իսկ, անգամ նստելով, ավելի շատով էր ձեռը կատար կարելու, քան անկնճռ կխոստովաներ, որ միայն բարձրաձայն, այլ և ինքն իրեն, քե այդ բոլորը ճիշտ այդպես էր։ Ուրեմն դեռ լիովին չէր յնկել, տակավին կար բարոյական համառարակշռություն, բայց սկրսել, սկրսել... Նվում էր։ Ձգտում էր դեպի ազատություն, ոչ, հանգիստ։ Չէ՞ որ իմանա իշխանը չամփոպանց բարի մարդ էր։

Չէ՞ որ նա գիտեր, շատ լավ գիտեր, որ վազուց էր հարկավոր հեռանալ այդտեղից և միշ միայն հեռանալ, այլ և փախչելով, ազատվել, գիտեր նաև, որ հանկարծ ամեն ինչ զարձավ միշ այն, միանգամայն այլ կերպ շուռ կնկավ, քան քե նա կերազել էր կամրջինների վրայով քայլելիս։

«Ես ինչո՞ւ համար կնկա այստեղ։ Մրքե կնկա ուտելու ու խմելու», — հարցնում էր նա ինքն իրեն, ապի ձուկն ուտելով։

Նա միևնույն անգամ ինքնահերքման մեջ ընկավ։ Նրա հոգու մեջ վայրկյաններով ծագում էր հնդհանուր դեպի անվախճան սերտությունը։ Նա սկսեց նույնիսկ չհասկանալ, քե խնդացող ինչու համար է կնկել։

Բայց թողնենք դնալը դնալ, առանց ավարտելու, անհնարին եր ինչ կասեին կասեն, որ կես քարշ եմ գալիս անվայել տեղերում։ Ենվ, իրոք, այդպես էլ դուրս կգա, կնքե սկսածս չավարտեմ ինչ կասի, որինակի համար, վազն իսկ (չէ՞ որ լուրը տարածվելու կե ամենազորը) Ստեպան Նիկիֆորովիչը կամ Սեմիոն Իվանովիչը ասկանելու, Շիմբելների մոտ, Շուբինների մոտ։ Ինչ, պետք և այնպես դնալ, որ ամենքը հասկանան, քե ինչու համար եմ կնկել, պետք և բարոյական նպատակը դրսևորել...

Այնինչ վոչ մի հաջող վայրկյան չեղավ... Նրանք ինձ մինչև անդամ չեն հարգում, — շարունակեց Իվան Իլյիչը խոսել ինքն իր հետ։ — Ինչու՞ համար են ծիծաղում։ Նրանք այնքան սանձարձակ են, վոր կարծես անզգա յեն զարձել։ Այո, յես վաղուց եյի կասկածում յերիտասարդ սերնդի զգայնությունը։ Գնաք և ինչ ել վոր լինի... Մինչև այժմ նրանք պարում եյին, այժմ սեղանի շուրջը խմբված են... Դանկամ խոսել խնդիրների մասին, ռեֆորմների մասին, Ռուսաստանի ժնժնության մասին... յես նրանց կվոգևորեմ։ Այո. կարելի յե, վոր գեռ վոչինչ կորած չե... Դարելի յե, իրականության մեջ հենց այդպես ել լինում եւ ինչից սրտյոք սկսեմ նրանց գրավելու համար, ինչ մի միջոց հնարեմ։ Գլուխս կորցնում եմ, ուղղակի կորցնում եմ... Ինչ և պետք նրանց, ինչ են նրանք պահանջում։ Ես տեսնում եմ, նրանք իրար են նայում և ծիծաղում։ Չլինի՞ թե ինձ վրա յեն ծիծաղում։ Աստված իմ, աստված։ Ինչ և հարկավոր ինձ... Ինչու՞ համար եմ այստեղ, ինչու՞ չեմ գնում, ինչի՞ յեմ հետապնդում...»

Այսպես եր խորհում նա, և մի ինչ-վոր ամոթ, ինչ-վոր խորին, անտանելի ամոթ ավելի ու ավելի յեր կեղեքում նրա սիրտը։

Սակայն ամեն ինչ այնպես եր ընթանում, մեկը մյուսի հետևից, մեկը մյուսին հարժար։ Նրա անդադար նստելուց ճիշտ յերկու րոպե անց մի սոսկալի միտք պաշարեց նրա ամբողջ եությունը։ Հանկարծ նա զգաց, վոր սարսափելի հարբած եւ, այսպիսինքն վոչ այնպես, վորպես առաջ, այլ վերջնականապես։ Դրա պատճառը մի բաժակ ողին եր, վոր խմեց ճաշարանից հետո, և վորն անմիջապես ներգործեց նրա վրա։ Նա զգում եր, լսում եր ամբողջ եությամբ, վոր վերջապես թուլանում եւ Ինարկին, արեւելյանը շատ եր ավելացել, բայց պիտակցությունը չեր ձգում նրան և շարունակ ազդարարում եր. «վատ ես, շատ վատ ես, մինչև անգամ բոլորովին անվայել ես։ Հարկավ, անկայուն, արբշիռ մտքերը չեյին կարող կանգ առնել մի կետի վրա։ Նրա մեջ հանկարծ ծագեցին յերկու, իր համար իսկ շոշափելի կողմեր։ Մեկի մեջ կային արեւելյանը, հաղթելու, խոչընդոտները խորտակելու ցանկությունն և հուսահատ հավատ, թե գեռ կհասնի իր նպատակին։ Մյուս կողմն արտահայտվում եր նրանով, վոր հոգին հնձում և սիրտը մաշվում եր։ «Ի՞նչ կասեն, ինչով պիտի վերջանա այս բոլորը, ինչ և լինելու վաղը, վաղը, վաղը»...

Առաջ նա խուլ կերպով նախազգում եր, թե հյուրերի շարքում նա քշնամիներ ուներ։ Այդ երանից ե, որ յես յերևի առաջ եկ հարցան եյին, մոտենց նա առանջալի կասկածով։ Հարցն ինձ յեղավ նրա աչքերից, յերբ լրտեսին, ամենաանկասկածելի նշաններից այժմ համոզվացավ, որ, արդարև, սեղանի շուրջն ունի քշնամիներ, որ այդ մասին այլևս չպիտի կասկածեր

«Ենկ ինչու համար, ինչուե, — մոածում եր նա։

Սեղանի շուրջը նստած եյին բոլոր հյուրերը, քվով յերեսուն։ Երանցից մեկրանիսն այդտեղ հարցած եյին։ Մյուսներն իրենց պահում եյին մի տեսակ անփութությամբ, չարամիտ անկախությամբ, ազատակամ եյին, բոլորը խոսում եյին բարձրաձայն, անժամանակ ծիծաղներ եյին առաջարկում, դամասների հետ հաճախ պղպտանքներ եյին փոխանակում։ Մենք, ինչ-որ մի խըղճուկ եյակ կիսատ բաճկոնով, սիրուն վրա նստելու ժամանակ ոտքը ընկավ և այդպես ել մնաց մինչև ընթրիքի վերջը։ Մի ուրիշն անպատճառ ուզում եր բարձրանալ սեղանի վրա ու կինաց առաջարկեր, և մեկայն ապան՝ վեշից քաշկռտվ, կարողացավ երես անժամանակ վայելչությունը չափազանց։ Ընթրիքը խառնիխուռն եր, բնև պատրաստել եր հատուկ վարձված մի խոհարար, ինչ-որ դիմանալի մի ճոխություն կային՝ գալանտիր, լեզու գիտնականով, կուրկա կանաչ սխտոով, վինջապես, սաղ, իսկ ամենից հետո՝ թյամանաճեռ Շամպինյանն եյին՝ գարնջուր, ոգի և խնդրու։ Տատապղեղի շիշը պրված եր մեկայն գնդապետի առջև։ Գնդապետը ամոթված եր ինքն ածել քեֆ էր և քեֆ Ակիմ Պետրովիչի համար, վորն ընթրիքի ժամանակ չեր համարձակվում կարգադրություններ անել կնոջ հաճար, Ծաղած հյուրերի համար։ Սեղանը բազկացած եր երեք հետ միացած շատ սեղաններից, վորոնց քովում կար և մի քրքջախառն սեղան։ Ծածկված եր նա բազմաթիվ ամոցներով, վորոնցից մեկը Ծարասավի չքից եր, գնդապետը։ Հյուրերը նստած եյին անշնորհք դասավորությամբ։ Պանդոնեմովի մայրը չհամեցավ նստել նա կարգադրություններ եր անում։ Բայց վերևներն յերևնցավ կարմրագույն մետաքսյա զգեստով, ամենաբարձր չնչդիվով ծնոտը քաշկինակով կապած գնդապետի մի կին, վոր մինչև այդ ժամանակ չեր յերևացել։ Պարզվեց, վոր դա նորահարսն մայրն և, վոր վերջապես համաձայնվել եր հետևել ամենայնից դուրս գալ ընթրիքին։ Մինչև այժմ նա դուրս չեր գալիս. պատճառն այն եր, վոր անհաշտելի քշնամու-

քյուն ուներ դնալի Պանլրոնիմովի մոր հետ։ Բայց այդ մասին կխոշատակենք հետո։ Այդ կինը գեներալին նայում էր չար, մինչև անգամ հեգնական հայացքով, և ըստ երևույթին, չէր կամենում, որ իրեն ներկայացնեն նորին գերազանցությանը։ Այդ ֆիգուրան Իվան Իլյիչին քիչ ծայր աստիճան կասկածելի։ Բացի դրանից մի քանի ուրիշ դեմքեր էլ կասկածելի էին և ներշնչում էին ակամա կերկյուղ ու անհանգստություն։ Քիչ էր մինչև իսկ, որ ներանք ինչ-որ դավադրության մեջ են, հատկապես Իվան Իլյիչի դեմ։ Գոնե այդպես էր քիչ նրան, և ընթրիքի ընթացքում նա ավելի ու ավելի կեր համոզվում դրա մեջ։ Գնչ տեսակի դեմք էր մի պարոն փոքրիկ միրուքով, ինչ-որ մի ազատ նկարիչ։ Նա նույնիսկ մի քանի անգամ նայեց Իվան Իլյիչին և հետո, դառնալով իր քովինին, ինչ-որ շշնջաց։ Մի ուրիշը, ըստ երևույթին, ուսանող, ճիշտ և, կատարելապես հարբած, այնուամենայնիվ մի քանի նշաններից նույնպես կասկածելի էր։ Վատ հույսեր էր ներշնչում նաև բժիշկ-ուսանողը։ Նույնիսկ ինքը սպան վոչ-բոլորովին բարևնույս էր։ Բայց առանձին և ակնհայտ առելությամբ էր պսպղում „Головешка"-ի աշխատակցի դեմքը։ Ինչպես էր նա մեկնվել աթոռի վրա, ինչ գոռոզությամբ ու կռվասիրությամբ էր նայում և ինչպես ազատ փռնչում էր։ Թեև մյուս հյուրերն ուշադրություն չէին դարձնում աշխատակցի վրա, որը ընդամենը չորս վոտանավորներ էր գրել „Головешка"-ում և դրանով դարձել էր ազատամիտ, նույնիսկ ակնահայտորեն չէին սիրում նրան։ Բայց ներք հանկարծ Իվան Իլյիչի մոտ ընկավ, ըստ երևույթին նրա դեմ ուղղված մի հացն գնդակ, գեներալը պատրաստ էր իր գլխով յերդվելու, որ գնդակ զրոզն ուրիշ վոչ վոք չեր, յեթե վոչ „Головешка"-ի աշխատակիցը։

Այս բոլորն Իվան Իլյիչի վրա ազդում էր դառնորեն։

Առանձնապես անախորժ էր մի յերևույթ. Իվան Իլյիչը միանգամայն համոզվեց, որ սկսել և բառերն արտասանել վոչ-ոքարզ ու մի տեսակ դժվարությամբ և քիչ շատ բան և ուզում ասել, բայց լեզուն չի շարժվում։ Հետո՝ նա մոռացվում է և, որ գլխավորն և, առանց որևէ պատճառի փոքրիկում է ու ծիծաղում, մինչդեռ ծիծաղելու պատճառ չկար։ Այդ տրամադրությունն անցավ մի գավաթ շամպայնից հետո, որ Իվան Իլյիչը քիչ ածել էր իր համար, բայց չէր կամենում խմել և հանկարծ խմեց միանգամայն անսպասելի։ Այդ գավաթից հետո նա լաց լինելու վա-

վեպը ունեցավ։ Նա զգում էր, թե ընկնում է ամենաքաղցնեարիկ զգայությունների մեջ։ Նա արդեն սկսեց սիրել, սիրել ամենքին, նույնիսկ Պանդոնիմովին, նույնիսկ „Головешка"-ի աշխատակիցներին։ Նա ցանկացավ ներանց հետ գրկախառնվել, մոռանալ ամեն ինչ և հաշտվել։ Ավելին. նա ցանկացավ ամեն ինչ պատմել ներանց, ամեն բան, ամեն բան անկեղծորեն, այսինքն, թե ինքն ինչ լավ ու բարի մարդ է, ինչ ազնվական ընդունակություններ ունի և, թե վերջապես նա կարող է հայրենիքի համար ոգտակար լինել, ինչպես պիտի ծիծաղեցնել կանանց անոր և, գլխավորը, վերջապես առաջվանի պես, սրտագին, ինչպես պատրաստ է մարդկայնորեն իջնել մեզ, մինչև ատորին խավերը։ Ուրջապես նա ցանկացավ սկսել բոլոր մոտիվները, որ դրդեցին ներան գալ վերջին անկոչ հյուր Պանդոնիմովի մոտ, խոսել ներա յուրաքանչյուր շեշտ ամաչելն ու յուրաքանչյուր ներա իր ներկայությամբ։

«Ամենից առաջ ճշմարտություն, արդարան ճշմարտություն ու արտաքսություն։ Ես արտաքսությամբ կհաղթեմ ներանց, ներանք ինձ կհավատան, այդ յես պարզ տեսնում եմ։ Ներանք ինձ քշնամարար են նայում, բայց յերբ յես կպարզեմ ամեն ինչ, անբնդդիմադրելիորեն կհավանեմ ներանց։ Ներանք բաժակները կլցնեն և դառնամ-դարձյալ կխմեմ իմ կենացը։ Ապան, յես համոզված եմ գրոնում, բաժակը կկոտրի իր քրի վրա։ Նույնիսկ կարելի յե գոռան ես առաջա։ Մինչև անգամ յերեք կամենան հուսարների սովորությամբ իրենց ոտների վրա ճոճեցնել ինձ, գրան ել չեմ հակառակի, այդ նույնիսկ շատ լավ կլինի։ Ներահարսին յես կհամբուրեմ ճակատից։ Նա սիրունիկ է։ Ակիմ Պետրովիչն ել շատ լավ մարդ է։ Պանդոնիմովը հետո, իհարկե, կուզվի ներան պահառում է, այսպես ասած, աշխարհային վայելը։ Ահ քեզ այդ նոր անցունդը չունի սրտի ներքազգացություն, բայց... բայց յես կխոսեմ ներանց Բուսաստանի ժամանակակից կոչման մասին՝ մյուս յեվրոպական պետությունների շարքում հիշատակեմ և գյուղացիական խնդրի մասին, և ներանք ամենքն ինձ կսիրեն ու յես վուազով գուրս կգամ այստեղից։

Այդ յերազները, իհարկե, շատ հաճելի էին նրա համար, բայց անհանգիստ յեր այն, որ այս բոլոր վարդագույն հույսերի մեջ Իվան Իլյիչը հանկարծ իր մեջ զգում էր անապատելի ընդունակություն ես — քաջ։ Գոնե, քաջը հանկարծ սկսեց նրա բերանից գուրս ցատկել միանգամայն անկախ նրա կամքից։ Այս բանը նա նկատեց Ակիմ Պետրովիչի վրա, որի մի այտը քարշ

քրջեց, և վորը ամենածանրից, չհամարձակվեց խոսքն անել իր յերեսը սրբել։ Իվան Իլյինն անձնազոհությունը վերցրեց և հանկարծ ինքը սրբեց։ Բայց այդ քանը նույն պահին նրան քիչ աշքան տխմար, այն աստիճան առողջ իմաստից դուրս, վոր լռեց ու սկսեց զարմանալ։ Ակիմ Պետրովիչը քեռն խմած ևր, այնուամենայնիվ նստած ևր խաչվածի պես։ Իվան Իլյինն ըմբռնեց, վոր ահա քառորդ ժամ և ինքը խոսում և ինչ-վոր խիստ հետաքրքրքրական նյութի մասին, և վոր Ակիմ Պետրովիչը, ականջ դնելով, վոչ միայն շփոթվում և, այլ և վախենում և ինչ-վոր բանից։ Պանլդոնիմովը, վոր նստած ևր մի աթոռ հետու նրանից, նույնպես ականջ ևր դնում նրան՝ պարանոցը յերկայնացրած և գլուխը դնալի ուսը քենքած։ Նա կարծես իր ամենաանտանելի դեմքով հակում ևր Իվան Իլյինին։ Մի հայացք գցելով հյուրերի վրա, նրբին գերազանցությունը տեսավ, վոր շատերն ուղղակի իրենն են նայում ու քրքջում։ Բայց ամենից տարօրինակն այն ևր, վոր այդ քանը նրան բոլորովին չշփոթեցրեց, ընդհակառակը, նա մի անգամ ևս գավաթից ըմպեց և հանկարծ ամենքին լսելի ձայնով ասաց.

— Ձեռ արդեն ասացի Ակիմ Պետրովիչին, վոր Ռուսաստանը... այո, հենց Ռուսաստանը, մի խոսքով, դուք հասկանում եք, վոր յես ուզում եմ ասել... Ռուսաստանն ապրում և, իմ ամենախոր համոզմունքով, մարդ-մարդկայնությունն...

— Մարդ-մարդկայնություն, — հնչեց անզանի մյուս ծայրում։

— Մա-մա։

— Մյու, մյու։

